UC SOUTHERN REGIONAL LIBRARY FACILITY
A 001 000 296 2



No. 791

Վ Է Պ Ք

Ի ՊՕՂ ԵՒ Ի ՎԻՐԳԻՆԻԱ

ԹԱՐԳՄԱՆԵԱԼ Ի ՁԵՌՆ

ԵԴՈՒԱՐԴԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ՀԻՒՐՄԻՒԶԵԱՆ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ
1860

[illegible]

ԹԱՐԳՄԱՆՉԻՆ ԱՌ ԸՆԹԵՐՑՈՂՆ

Կրկին Թարգմանութիւնք են վիպասանութեանս այսորիկ վաղ իսկ ընծայեալք ազգիս, մին 'ի ռամիկ և միւսն 'ի գրոց բարբառ. և չէր ինձ ոչ ըստ սրտի և ոչ ըստ մտաց՝ թողուլ զայնչափ այլ և այլ հին և նոր մատենագրութիւնս այլոց ազգաց, որոց չև ևս են առ մեզ Թարգմանութիւնք, և երրորդ անգամ յեղուլ զսա 'ի մեր բարբառ: Այլ ականաւորք ոմանք 'ի բանասիրաց ազգիս ածին զիս յայս. մանաւանդ Յակոբ Էֆէնտի Կաճիկեան, որ մեծարոյ

է ինձ յոյժ ըստ հայրենասիրութեանն և ըստ կիրթ ախորժակաց ։

Մատենագիր սորին Սէն-Բիեր ծանօթ է ազգիս յայլոց թարգմանութեանց մատենիս. վասն որոյ չէ ինձ հարկ յամել 'ի խօսս զնմանէ, և ոչ զվիպասանութենէս՝ որ ինքնին իսկ խօսի 'ի սիրտ ընթերցողաց, և զոր սակաւուց է անկարեկիր սրտիւ և անթաց աչօք ընթեռնուլ։ Զայս ևեթ կարևոր համարիմ զեկուցանել, զի ոչ բոլորովին մտացածինք են վէպքս և յօրինուածոյք, այլ ըստ կարևոր մասանցն ճշմարիտք. որով առաւելապէս յորդորեն ըզսիրտ, և զմիտս համոզեն յառաքինութիւն՝ որ միայն է նպատակ վաստակոյս ։

Եր. 86

Վիրգինեան կ'սպասէր նստել առ աղբիւրին քով։

ՊՕՂՈՍ

ու

Վիրգինիա

ՎԵՆԵՏԻԿ

Սուրբ Ղազար

1860

ՎԷՊՔ

Ի ՊՕՂ ԵՒ Ի ՎԻՐԳԻՆԻԱ.

Յարեւելից լերինն՝ որ ամբառնայ յետ-կուսէ Լուդովիկեան Նաւահանգստի Կղզ-ւոյն Գաղղիոյ, են հիւղք երկու աւերակք ՚ի խոպանացեալ վայրի, ՚ի ծործոր հով-տաձև՝ շրջապատեալ ՚ի բարձրաբերձ քա-րաժայռից, ՚ի հիւսիսոյ եւեթ կողմանէ ելս ունելով։ Յահեկակողմն կուսէ կայ լեառն՝ կոչեցեալ Դիտարան, ուստի նշանացի ազդ-առնեն նաւաց եկաւորաց ՚ի նաւահան-գիստ անդր. և ՚ի ստորոտ լերինն քաղաք՝ որ յանուն Լուդովիկեան Նաւահանգստին կոչի Բոր-Լուի։ Ուղի ընդ աջմէ ածէ ՚ի

Բամբըլմուս Թաղ, և յեզր Թաղին եկեղեցի համանուն, յոր ածեն ուղեք՝ յերիւրեալք երկուստեք 'ի հնդիկ եղեգանց 'ի լայնատարր դաշտի. և անտառ անտի մինչև 'ի սպառուած կղզւոյն տարածեալ: Զեզերբք ծովուն առ Նովաւ խորանայ 'ի ներքս ծոցն անուանեալ Շիրիմ, և յաջակողմն կոյս սարաւանդեալ հրուանդանն՝ որ կոչի Թղուառ. անտի և անդր ծովծայրածաւալ, ուր կղզեակք ոմանք անբնակք երևին 'ի ծուփս, և մի 'ի նոցանէ անուանեալն Անկիւն Դիտակի՝ որպէս Թումբ ընդդէմ ալեաց արձանացեալ:

Ի մուտս հովտին, ուր այս ամենայն ընդ առաջ լինին աչաց, արձագանգք լերինն կրկնեն անդադար զմռնչիւն հողմոց՝ յորոց տատանին անտառք մերձակայք, և զալեաց գոչիւն՝ որ բաղխեալ ընդ ժայռս անդրէն խորտակին: Բայց 'ի հիւղս անդր չհասանէ շշունջ, և շուրջանակի չէք իսկ տեսանել՝ բայց պարսպաձև ժայռս սեպացեալ. անտառախիտք 'ի ստորոտս նոցա, անտառախիտք 'ի խոռոչս կողիցն, և մինչև 'ի բուն գագաթունս նոցա՝ որ յամպս

ծրարին: Անձրևք 'ի ծայրից նոցա հրաւիրեալք՝ երգունեն յաճախ զկողս նոցա զկանաչ և զգորշ յերփն երփն ծիածանի, և 'ի ստորոտս նոցա բղխեցուցանեն աղբերակունս՝ յորոց գետահետի վտակն Լաթանիէ: Տիրէ անդ խոր լռութիւն, և շուրջանակի ամենայն ինչ խաղաղաւէտ, օդք և ջուր և լոյս· հազիւ արձագանգաց կըրկնեալ անդանօր զսօսաւիւն արմաւենեաց՝ որ 'ի բարձրաբերձ սարահարթս անդ աճեցեալ, որոց սաղարթք երկայնաձևք տատանին յարաշարժք 'ի հողմոց: Տիւ քաղցրանշոյլ ծագէ անդանօր 'ի ծործոր հովտին, ուր զմիջաւուրբ ևեթ արփենւոյն լոյս ճառագայթէ· իսկ այգուն նշոյլք շուրջ զծնօտիւ հովտին ծաւալեալ, ծայրք ևեթ լերանց վսեմաստուեր կողիւքն ըմբերձիկք փայլեն ոսկեգոյն և ծիրանագեղ ընդ կապոյտն երկնից:

Սիրելի էր ինձ յաճախել անդր, ուր 'ի լայնատարր տեսարան և յամայի միայնութիւն միանգամայն էր վայելել: Ի միում աւուրց մինչդեռ մերձ 'ի հիւղս անդ բազմեալ կայի՝ յաւերակս նոցին մտախոհ,

ծերունի ոմն անցանէր ընդ այն՝ 'ի ձև վաղնջուց բնակչաց երկրին զգեցեալ բաճ-կոնակ և տաբատ պճղնաւոր, և գնայր բոկոտն յեց 'ի ցուպ ոստնիայ, դէմք նորա վեհ և պարզ՝ սպիտակավարսիւք ծաղ-կեալ։ Ողջոյն ետու նմա մեծարանօք. ըն-կալաւ նա զողջոյն իմ, և յառեալ վայրիկ մի յիս, մատեաւ ապա եկն հանգչել 'ի բլրի անդ՝ ուր եսն բազմէի։ Ընտանու-թենէ նորա յորդորեալ, հարցի զնա և ասեմ. Գիտիցես, հայրիկ, ո՞յր են հիւղքս այդոքիկ։ Պատասխանի ետ և ասէ. Յա-ւերակաց յայդոսիկ, որդեակ իմ, և 'ի խո-պանացեալ երկրիդ, յառաջ քան զամս իբր քսան, բնակէին զարմք երկու եղբա-նիկք 'ի գաւին։ Աղիողորմք են վէպք ար-կածից նոցա. այլ 'ի կղզւոջ աստ, ընդ որ անցք են 'ի հնդիկս, ո՞ր այն ոք յեւրո-պացւոց հետազօտէ զկեանս աննշանից ո-մանց. ո՞ իսկ յանձն առնու կեալ աստ չքա-ւոր և անանես, թէպէտ և երջանիկ. աւա-գաց ևեթ և թագաւորաց վէպք ցանկալի են մարդկան, թէ և ոչ ումեք պիտանա-ցու։ Յաւելի և ասեմ. Դէմք քո և խօսք

յայտ առնէն, հայրիկ, զի ընդ փոքր իրաց կենցաղոյս անցեալ է քո և քաջահմուտ լեալ. պատմեա ինձ աղէ, թէ իցէ քեզ պարապ, որ ինչ գիտես զնախնի բնակչաց անապատիս. զի և կարին իսկ զառածեալ մտօք՝ սիրէ լսել զերջանկութենէ, զոր բնութիւն և առաքինութիւն ընծայեն մարդկան: Յայնժամ ծերունւոյն ձեռն 'ի ճակատու վայրիկ մի կացեալ՝ որպէս ոք որ զուշ և զուրուշ 'ի յիշատակ անցից անցելոց ամփոփիցէ, սկսաւ պատմել և ասէ:

Երիտասարդ ոմն Նորմանդացի Լադուր անուն, յամին 1726, ոչ գտեալ 'ի Գաղղիա գործ ինչ արքունի, և ոչ նպաստ յընտանեաց իւրոց, խորհեցաւ գալ 'ի կղզի այսր խնդրել իւր կեանս: Էր ընդ նմա նորահարսն իւր՝ զոր յոյժ սիրէր և սիրելի յոյժ էր նմա, դուստր միոյ 'ի վաղնջուց և 'ի ճոխ ազգատոհմից հայրենեացն, զոր գաղտագողի և անօժիտ հարսնացուցեալ էր իւր, ծնողաց օրիորդին ոչ կամելով տալ զնա իւր կնութեան՝ որ զի չէր քաջատոհմիկ: Եթող զնա Լադուր 'ի կղզւոջ

աստ 'ի Բոր-Լուի, և ինքն նաւեաց 'ի Մատակասգար՝ առնուլ անտի խափշիկս ոմանս, և փութալ դառնալ այսրէն 'ի բնակութիւն : Էջ նա անդր 'ի մէջ կոյս հոկտեմբերի 'ի սկսանել անդ վնասակար օդոց շնչելոյ, և յետ սակաւ միոյ մեռանէր 'ի ժանտ ջերմանէ՝ որ զկէս տարւոյ ճարակէ անդանօր • վասն որոյ չկարասցեն երբէք եւրոպացիք՝ բնականալ անդ : Որ ինչ տարեալ էր նորա անդր ընդ իւր՝ կորեան 'ի մահուն՝, որպէս պատահէ յաճախ որոց 'ի նժդեհութեան վճարին՝ 'ի կենաց : Իսկ այրի նորա մնաց աստ յղի, աղախնաւ հետ միով հնդկաւ, յերկիր օտար՝ ուր անծանօթն էր և առանց ընծայութեան առ ումեք : Սակայն յետ կորուսանելոյ զմիակ սիրելին իւր՝ ոչ կամեցեալ նորա շնորհս ինչ խնդրել յումեքէ, և յարկածից անտի յաւելեալ 'ի խրախոյս, խորհեցաւ մշակել անդ ընդ աղախնոյ իւրում գերւոյ ածու ինչ փոքրիկ՝ հայթայթել անտի զկեանս իւր :

Յամայի կղզւոջ աստ, ուր գրեթէ անտէրունչ էր երկիրս, ոչ ընտրեաց նա վայր

բերրի և դիպող 'ի վաճառաշահ, այլ 'ի լերանցամիջի ուրեք անտես 'ի մարդկանէ խնդրէր ապաստան՝ առ 'ի կեալ անդ միայնակ և անծանօթ: Նմին իրի դիմեաց 'ի քաղաքէ անտի այսր 'ի քարածայռս որպէս ճնճղուկ յօրինել իւր բոյն. բոլորից իսկ վշտակրելոց այսպէս բնաւորեալ՝ յանապատս անմարդիս ապաստանել, գոգցես իմն պատուարս ընդդէմ թշուառութեան զժայռս առնելով, կամ համագոյից շուրջանակի խաղաղութեամբ զխռովեալ 'ի վշտաց զոգիսն ածելով յանդորր: Բայց վերնախնամ տեսչութիւն, որ հասանէ մեզ 'ի թիկունս՝ ուր կարեւորացն եւեթ լինիմք 'ի խնդիր, պատրաստէր տիկնոջն քոյր սիրելի՝ զոր ոչ ինչք և ոչ աւագութիւնք կարեն ընծայել:

Բնակէր աստ 'ի հերուն հետէ Մարգարիտ ոմն անուն կին ժրագլուխ և ազնուագութ 'ի Բրիտանիայ գաւառէ Գաղղիոյ, ազգաւ անտոհմիկ: Սիրելի էր նա իւրոցն, և բարեբաստիկ մարթէր նմա կեալ յաննշան ազգատոհմին, բայց ձախողակի վտահութիւն 'ի սէր ազատազգւոյ ուրուք 'ի

դրացեաց իւրոց վկայեցոյց զնա 'ի բարե- բաստութենէ · որոյ խոստացեալ առնուլ զնա իւր 'ի կնութիւն, յետ անտառակ յա- գեցութեանն եթող զնա 'ի բաց, և ոչ ըղ- մանկանն յղացելոյ յանձն առեալ խնա- մել զգարման: Վասն որոյ հրաժարեալ 'ի սպառ կնոջն 'ի բնիկ երկրէն՝ դիմեալ էր այսր թագուցանել զվրիպակ իւր 'ի մէջ գաղթականաց, հեռի 'ի տեղւոջէ՝ ուր կո- րուսեալն էր զանուն բարի, զմիայն օժիտ չքաւորի և պարկեշտ օրիորդի: Եւ մշա- կէր սատ ագարակին ընդ ծերոյ ումեմն արծաթագին հնդկի, վասն որոյ դրամս ինչ առեալ էր 'ի փոխ:

Տիկինն Լագուր 'ի գալ այսր հանդերձ հնդիկ աղախնովս, եգիտ սատ զՄարգա- րիտ ընդ դիեցիկ մանկանն · և սփոփեցու- յոյժ ընդ հանդիպելն նմա, զոր նմանա- վիշտ իւր համարէր · և պատմեաց նմա կարճ 'ի կարճոյ զանցս իւր և զկարօտու- թիւն: Ի լուր աղետիցն յուզեցան գութք Մարգարտայ · և առ 'ի ձգել յինքն զմտեր- մութիւն նորա քան զվարկ, խոստովան եղև անկեղծիկ զսխալանսն՝ որով յանցու-

ցեալն էր, և յաւել. Ինձ յիրաւի են ա-ղէտքս. իսկ դու, տիկին, զգօն և հէք... ասաց և սկսաւ լալ: Եւ ապա հրաւիրեաց զնա 'ի խղճիկ իւր, և 'ի սէր բարեկամութեան. և տիկինն Լագուր խանդաղատեալ 'ի բարեգութ հիւրասիրութեննէն, գիրկս եարկ նմա և ասէ. Ո՜հ, զի հաճի Տէր գիւր առնել վշտաց իմոց, ազդելով գութ այդպիսի 'ի սիրտ քոյին 'ի վերայ օտարիս անծանօթի, որպիսի չէք իմ ընկալեալ յազգականաց: X

Ծանօթ իսկ էր ինձ Մարգարիտ. և թէպէտ միով և կէս փարասախաւ հեռի 'ի տեղւոյնէ աստի յայնկոյս Երկայնանիստ լերինն բնակեմ յանտառի, սակայն դըրացի համարէի նմա: Ի քաղաքս Եւրոպայ և որում իսկ լոկ խարոց 'ի մէջ անկեալ, խափանէ զընտանիս միոյ ազգատոհմի ընդ պարագայս ամաց չտեսանել զիրեարս. այլ առ գեղաբնակ գաղթականս համարին 'ի դրացիս անջրպետեալք 'ի լերանց և յանտառաց: Եւ դրացութիւն ևեթ, մանաւանդ յայնժամ զի նուազ ևս էր վաճառաշահ կեցցուոյս ընդ Հնդիկս, բաւա-

կան էր յիրաւունս բարեկամութեան, 'և հիւրընկալութիւն սիրելի և 'ի պարտուց համարի: Եւ իբրև լուայ՝ զի հիւր առ դրացին իմ հասեալ էր, փութացայ առ նա՝ լինել նոցա թերևս պիտանի, և տեսի անդ առ նմա զոփկինն՝ Լադուր: Կերպարան նորա ակնահաճոյ, ազնուականութիւն և թաղծութիւն 'ի դէմս նորա նկարեալ. և էին մերձ առ ուրք ծնանելոյ նորա: Խրատ ետու նոցա, յօգուտ որդւոցն և առ 'ի բառնալ զվտանգ ընտակակցութեան այլոց 'ի տեղւոջ անդ, բաժանել յիւրեանս զհօվիւն՝ որ ունէր արտավարս իբր քսան: Ինձ իսկոյն զբաժանումն երկրին յանձնեցին, և լարաբաժին արարի զայն գրեթէ կէս 'ի կէս: Ի միում առեալ զվերին մասն շրջապատիս, յամպապատ գագաթանէ ժայռից՝ ուստի բղխէ վտակն Լաթանիէ, մինչև 'ի պատապատուած սեպացելոյ լերինդ՝ զոր տեսանես, որ Մահարձանն կոչի՝ զմահարձանաց պարսպի բերելով զնմանութիւն: Ծործոր հովտիդ ապառաժուտ է, և խոտոչք 'ի նմա այնքան՝ զի հազիւ գնալ ոք ընդ այն թէ կարասցէ.

սակայն են անդ ծառք մեծամեծք, և խիտ առ խիտ աղբերք և վտակք։ Իսկ 'ի միւսումն զստորին մասն, որ տարածեալ ձգի ընդ եզր Լաւթանիէ վտակին մինչև 'ի կիրճ այսր՝ ուր կամքս, և ուստի վտակն այն գետահետեալ ընդ մէջ երկուց բլրոցդ՝ յանգի 'ի ծով։ Են 'ի դմա և դաշտք և արօտք, որպէս տեսանեսդ․ այլ դոքիմբք ոչ ինչ առաւելու քան զմիւսն․ զի 'ի յաճախել անձրևաց՝ դառնի ճախճախուտ, իսկ յերաշտի՝ կարծր քան զկապար, մինչև ակօս ոք 'ի դմա եթէ բանալ կամիցի՝ կացնաւ զերկիրն պարտ է նմա պատառել։

Եւ այսպէս զբաժինսն արարեալ, յորդորեցի այնուհետև զտիկնայսն զերկոսին՝ վիճակս 'ի վերայ արկանել թէ որ ումեք լանիցէ․ և վիճակեցաւ տիկինն Լադուր զվերին մասն, իսկ Մարգարիտ զստորինն, երկաքանչիւր հաճ և հաւան ընդ վիճակ իւր։ Բայց աղաչէին մի զբնակութիւն իւրեանց զատանել յիրերաց, առ 'ի կարող լինելոյ տեսանել միշտ զմիմեանս, խօսակից լինել և օգնական միմեանց։ Սակայն հարկ էր և ուրոյն ունել նոցա բնակարան․

և զի Մարգարտայն 'ի միջակի անդ ձորոյն
կայր յեզր իւրոյ վիճակին, կառուցի մերձ
անդր 'ի մասին Ղազուր տիկնոջ միւս այլ
հիւղ. և այսպէս սիրելիք միմեանց տիկ֊
նայքն երկոքին յանցնիւր կալուածս բնա֊
կեալ, և դրացիք էին միմեանց: Հատի ին֊
ձէն ցիցս 'ի լեռնէ, և 'ի ծովափանց ածի
սաղարթս արմաւենիս, 'ի կառուցումն
հիւղից՝ զորս արդ տեսանես անդուռն և
անյարկ: Այլ, աւա՜ղ, և աւերակքդ իսկ
շատ են ինձ յուշ ածելոյ զնոսա. ժամա֊
նակն, որ արագ արագ անհետ առնէ զդաս֊
տակերտս պետութեանց, թուի ինձ խը֊
նայել յանապատիս 'ի յիշատակս բարե֊
կամութեան՝ առ 'ի յաւերժացուցանել
զվիշտս իմ մինչև ցմահ:

Ի կատարել երկրորդի հիւղոյն՝ տիկինն
Ղազուր ծնաւ դուստր. և զի իմ իսկ ըն֊
կալեալ էր 'ի սրբոյ աւազանէն զորդի Մար֊
գարտայ և անուանեալ զնա Պօղ, աղա֊
չեաց զիս զնոյն և դստեր իւրում առնել 'ի
միասին ընդ սիրելւոյն իւրում Մարգար֊
տայ. և սա ինքն կոչեաց զնա Վիրգինիա,
և ասէ. Առաքինի և բարեբաստ լիցի դըս֊

տրիկս. զի ես յայնժամ Թշուառացայ, յոր-
ժամ 'ի բաց կացի յառաքինութենէ : Եւ
'ի զօրանալ Լաղուր տիկնոջ 'ի ծննդենէ
դստերն, սկսանէին և կալուածքն երկո-
քին փոքրկունք բարգաւաճել յանխոնջ
վաստակոց սարկացն երկոցունց ընդ խնա-
մովք իմովք : Սորկին Մարգարտայ ա-
նուն էր Դոմինիկոս հնդիկ ափրիկեցի, այր
ողջամիտ 'ի բնէ և փորձ, և Թէպէտ յա-
լիս խոնարհեալ՝ այլ դեռ ևս յուժի : Մշա-
կէր նա յերկոսին ևս կալուածս ուր և
գտանէրն երկիր բերրի, ըստ վայրացն 'ի
դէպ արկեալ սերմանիս : Յերկիր ոչ յոյժ
արգաւանդ՝ սերմանէր կորեակ և եգիպ-
տահատ, յերկիր պարարտ՝ արկանէր
խուն ինչ ցորեան, 'ի Ճախինս՝ որիզ, և
'ի ստորոտս ժայռից՝ սեխենի, դդմենի և
վարնգենի, որ սիրեն սողոսկել յենուլ 'ի
նոսա : Յոստին վայրս տնկէր գետնախըն-
ձոր, ուր լինին քաղցրահամ յոյժ. բամ-
բակենի 'ի բարձրաւանդակս, շաքարե-
ղէգն 'ի Թանձրահող վայրս, խահուենի
'ի բլուրս՝ ուր ազնիւք լինին, Թէպէտ և
մանրահատք. զգետափամբք և զբնակու-

Թեամբք պանանիս՝ որ զամն 'ի բուն պղտաղաբերեն ողկուզաձև, և առնեն ախորժ հովանի. և տունկս սակաւս ծխախոտոյ 'ի սփոփումն հոգւոց իւրոց և ազնիւ տիկնայցն ։

Մերթ գնայր յանտառ՝ հարկանել փայտ առ 'ի հուր, և մերթ 'ի կալուածս անդ բանայր ուղի՝ զժայռս հատեալ, ժիր և ճարտարամիտ 'ի վաստակս, քանզի մեծադիւր վաստակէր. տիրասէր ոչ միայն առ տիկին իւր Մարգարիտ, այլ և առ Լադուր տիկին՝ զորոյ զնաժիշտն հնդիկ ածեալ էր 'ի կնութիւն յաւուր ծննդեան Վիրգինեայ, և սիրէր յոյժ զնա ։ Անուն նաժշտին էր Մարիամ, ծնեալ 'ի Մադակասգար, և ուսեալ անդ ձեռագործս, մանաւանդ հիւսել սակառի և սփածանելիս յանտառաբոյս սիզոյ ։ Աջողակ էր նա 'ի գործ, մաքրասէր, և մանաւանդ հաւատարիմ. 'ի նա յանձն էր հոգ խահարարութեան, բուծանելոյ զհաւս, և երբեմն երբեմն ածելոյ 'ի Բոր-Լուի 'ի վաճառ զխուն ինչ յաւելուածս 'ի պտղոյ երկաքանչիւր դերդաստանացն ։ Յաւե՛լ 'ի սոսին

զուլս երկու սննդակիցս մանկանցն , և զգամփռ գիշերապահ , և բովանդակին որ ինչ նոցա հաւք և գերդաստանիկք :

Իսկ տնկնայքն երկոքին զօրն ցերեկ պարապէին 'ի մանել բամբակ . և այն շատ էր 'ի հայթայթել զպէտս նոցա և զընտանեացն : Զի ոչ խնդրէին զարտաքին դիւրութիւնս . բոկանի գնային առտնին , և կօշիկս 'ի կիւրակէս ևեթ ագանէին , վաղայարոյցք գնալ 'ի Բամբլըմուս յեկեղեցիդ՝ զոր տեսանես , առ 'ի լուր սրբոյ պատարագին : Մերձ ևս է յոյժ Բոր-Լուի , բայց դուն ուրեք 'ի քաղաք անդր գնային՝ թէ զուցէ ծաղր կացցեն . զի կապերտս պենկալացիս խոշորս զգենուին հանգոյն գերեաց : Եւ քաջ իսկ կշռեալ, արժա՞ն իցէ փոխանակել զառտնին երջանկութիւն առ 'ի հաճոյ լինելոյ հասարակաց . տնկնայքն երկոքին , թէ և արտաքոյ սակաւիկ ինչ վշտակրեալ, այլ բերկրալից դառնային 'ի տուն : Մարիամ և Դոմինիկ ընդ նշմարել զնոսա 'ի բարձուէ սատի ընդ ուղին՝ որ յեկեղեցւոյ անտի ածէ այսր , դիմէին մինչև 'ի ստորոտ լերինն օգնել նոցա 'ի վե-

րելս , աչներև 'ի դէմս իւրեանց բերելով հրճուանս ընդ դարձ նոցա : Մաքրութիւն առտնին , ազատութիւն , 'ի ձեռին վաստակոց պատրաստեալ պարէն , և ծառայք տիրասէրք և հաւատարիմք , յարդարէին զնոցայն բարեբաստութիւն : Համակարիք և նմանավիճակք' քորս սիրելիս զմիմեանս խանդաղանօք կոչէին . նոյն կամք էին նոցա , նոյն խնդիր օգտի . սեղանակիցք էին միմեանց , և ամենայն ինչ նոցա հասարակաց էր : Իսկ եթէ երբէք նախնոյ սիրոյն կայծակն յորդորագոյն քան զբարեկամութեան 'ի սիրտ նոցա արծարծանէր , կրօնք ամբիծ 'ի զգաստասէր բարուց օգնեալ' ուղերձէր զմիտս նոցա յայլ ինչ կեանս , զօրէն բոցոյ , որ 'ի չգտանելն յերկրի ճարակ' ընդ երկինս սլանայ :

Երջանիկ ևս զկենակցութիւն նոցա գործէին բնութեանն կարիք , և գութ նոցա առ միմեանս յաւելուր 'ի տես որդեկացն' որ երկոքին ևս չարաբաստիկ սիրոյ էին արգասիք : Քաղցր էր նոցա 'ի նոյն որրանս զորդեակսն հանգուցանել 'ի նինջ , և խառն իսկ զնոսա դիեցուցանել յաճախ , և ասէր

տիկինն Լազուր ցՄարգարիտ · Որդեակք կրկին երկաքանչիւրոցս լիցին , քոյր իմ, և որդեկացս մերոց մարք կրկին ։ Զոր օրինակ մէն մի ոստ 'ի բունս երկուց համասեռ ծառոց յամպահարել բնաւից կողերցն ծնացեալ՝ քաղցրագոյնս պտղաբերեն , եթէ քեցեալ 'ի մայրենի բնոյն 'ի միւսն պատուաստեսցին , այսպէս տղայքն երկոքին միամարք զեղուին 'ի սէր գորովոգոյն քան զուստեր և զդստեր , քան զեղբօր և զքեռ 'ի փոխանակել 'ի գիրկս սիրակցորդ մարցն 'ի դիեցումն ։ Անդըստին 'ի խանձարրոց զպսակելոյ նոցա ընդ միմեանս խօսք լինէին · և 'ի հանդերձեալ երջանիկ հարսանիս մանկանցն տիկնայքն վչտակիրք սփոփելով, յարտասուս խօսք նոցա գնլուին յաճախ , միումն յուշ անկեալ օրհնազանցութիւն հարսանեաց , և միւսումն ընդ հարսանեկան լծով մուտ · միումն 'ի վեր քան զպայման իւր նկրտել, և միւսումն իջանել անտի 'ի խոնարհ ։ Այլ քաջալերէին 'ի յոյս վայելելոյ որդւոց իւրեանց բարեբաստագունից 'ի բերկրանս սիրոյ և 'ի նմին հաւասարութեան , ա–

զատք յեւրոպական դժնդակ մտահաճութեանց ։

Նորանշան իմն էր տղայոցն անդստին ընդ միմեանս սիրելութիւն ․ 'ի լալ Պօղայ՝ շատ էր ցուցանել նմա զՎիրգինիա , և զուարթանայր անդէն յերեսաց նորա , և հանդարտէր ․ և զվիշտս Վիրգինեայ 'ի ճիչ մանկանն Պօղայ զգային մարքն ․ իսկ դըստրիկն նազելի թագուցանէր զվիշտ իւր խակոյն , առ 'ի խնայելոյ զնա 'ի վշտակցութենէ ։ Դեռ նոյն ինչ զօրելով նոցա յոտընկելիս , տեսանէի միշտ զնոսա 'ի գալ իմում այսր ձեռն 'ի ձեռն խառնեալ թև 'ի թև տուեալ՝ հոլանիս ըստ․ սովորութեան երկրիս , որպէս երկուորեակքն կենդանակերպք նկարին ։ Եւ գիշեր իսկ ոչ մեկնէր զնոսա 'ի միմեանց ․ յաճախ 'ի նոյն օրորոց՝ այտ 'ի յայտ , լանջ՝ 'ի լանջս յարեալ , և ձեռս զպարանոցաւ իրերաց արկեալ , գիրկընդխառն ննջէին ։ ✗

Ի պարզել լեզուի նոցա՝ նախկին առ միմեանս բարբառ էր եղբայր և քոյր ․ զի մանկութիւն , ճարտարամիտ 'ի զգուանս սիրոյ , չգիտէ անուն այլ քաղցրագոյն ։

Դաստիարակութիւն յաւել զնոցին առ իրեարս սէր , յօգնականութիւն իրերաց ուղերձեալ զայն ։ Տակաւ Վիրգինեայ լինէր յանձն անտեսութիւն , հոգ առաւելին մաքրութեան , և պաշտել զճաշն անպաճոյճ ․ և յանձանձանաց այսր ամենայնի համբոյրք եղբօրն և գրուատիք զհետ գային հանապազ ։ Իսկ Պօղ անդուլ 'ի վաստակոց՝ մերթ մշակէր 'ի պարտիզի ընդ Դոմինիկեայ , և մերթ փայտամբ փոքրիկ 'ի ձեռին՝ գնայր ընդ նմա յանտառս ․ և 'ի տեսանել ուրեք յերթալն ծաղիկ չքնաղ , կամ միրգ ազնիւ , կամ բոյնս Թռչնոց , 'ի ծայրս իսկ ծառոց սողոսկեալ 'ի վեր՝ առնոյր բերէր զայնոսիկ առ Վիրգինիա ։ Միումն 'ի նոցանէ հանդիպեալ ուրուք , ոչ ինչ երկբայէր մօտիկ անդանօր գտանել և զմիւսն ։ Ի միում աւուրց յիջանել իմում 'ի լեռնէ աստի , տեսի 'ի մուտս պարտիզին զՎիրգինիա՝ զի ընթանայր 'ի տուն , զձորձիկ իւր զգլխով ածեալ յետկուսէ՝ պատսպարել յանձրևէ ․ և Թուէր ինձ միայնակ 'ի հեռուստ ։ Այլ իբրև մատեայ օգնել նմա 'ի գնացս , տեսի զի զձեռանէ

ունէր զէզբօրն՝ ընդ նովին հանդերձիւ պարածածկեալ, և խնդային ընդ հովանեակն յիւրեանց ճարտարեալ. և 'ի տեսանել իմում զդէմս նոցա հրաշագեղս ընդ հողմուսոյց ձորձովն, յուշ եղեն ինձ մանկունքն Լետովայ 'ի նմին խեցւոջ ամփոփեալք :

Ամենայն ջանք նոցա էին 'ի հաճել զմիմեանս և յօգնել իրերաց. բայց անուսմունք էին որպէս զգաղթականս առհասարակ եւրոպացիս ծնեալս աստ, և անգրագէտք ամենևին : Չէր ինչ նոցա փոյթ գիտել զանցս վաղնջուց ժամանակաց և զօտար աշխարհաց. հետաքննութիւն նոցա չանցանէր յայնկոյս լերինս, զոլորտս տիեզերաց կարծէին 'ի ծիրս կղզւոյս սահմանեալ. և ոչ սիրելի ինչ այլ ուրեք համարէին, միտք նոցա բովանդակ գրաւեալ 'ի սէր միմեանց և 'ի գորով մայրենի : Ոչ գիտութիւնք սնոտիք զլոյս աչաց նոցա վատնէին, և ոչ տխուր բարոյականին խրատք զլսելիս նոցա տաղտկացուցանէին : Անգէտք էին օրինաց չգողանալոյ, զի ամենայն ինչ առ նոսա հասարակաց էր.

G. Bernasconi inc.

օրինաց չշռայլելոյ, զի պարզ և սակաւապէտ էր նոցա կերակուր. օրինաց չխօսելոյ սուտ, զի չէր ինչ նոցա զոր թէ ծածկել հնարէին. և ոչ ահարկու ոք լինէր նոցա սպառնալեօք աստուածասաստ պատուհասից առ որդիս ապաշնորհս, զի առ նոսա սէր որդիական ծնունդ էր մայրենի սիրոյ։ Ամենայն որ ինչ ուսեալ էր նոցա յաստուածպաշտութեան կարգաց՝ սիրելի նոցա զկրօնս ընծայէին. և եթէ չյերկարէին նոքա յեկեղեցւոջ զաղօթս, սակայն ամենայն ուրեք՝ առնէին յանդաստանս և յանտառս զանբիծ ձեռս իւրեանց և զլի ծնելագութ սիրով սիրտս 'ի վեր ամբառնային։

Որպէս այգ գեղածիծաղ գեղեցկագունի տուընջեան աւետաւոր, այսպէս նոցա այն ինչ 'ի սկզբնաբոյս տիոց 'ի պատանեկութիւն թեւակոխեալ՝ սկսանէին վաստակակիցս մարցն լինել 'ի յանձանձանս տանին իւրաց։ Յագդել հաւախօսին զզարթ այգուն՝ յարուցեալ Վիրգինիա գնայր զջրոյ 'ի մօտակայ աղբիւրն, և դառնայր պատրաստէր զնախաճաշ։ Յոսկեզօծել

տապա տրփուոյն զկատարս բլրոց շուրջանակի՝ գայր Մարգարիտ հանդերձ որդւովն առ Ղազուր տիկին, և միաբան ամենեքին յաղօթս կացեալ՝ առնուին զնախաճաշիկն, յաճախագոյնս 'ի գալարուոջ առ գրան ընդ հովանեաւ պանանեաց, որք զհիւթեղ պտուղսն առձեռնպատրաստ ընծայէին նոցա 'ի ճաշակ, և զլայն և զերկայն սաղարթսն 'ի ծածկոյթ սեղանոյ: Առատ և սոսածիչ կերակուր արագ արագ աճումն պատանեկացն պատրաստէր, և քաղցրահամբոյր դաստիարակութիւն հրճուանս և ամբծութիւն հոգւոյ 'ի դէմս նոցա նկարէր:

Վիրգինիա յերկոտասանամենի սակաւ ինչ ընդհատ 'ի զարգուն տիոց բերէր կերպարան. վարսք երկայն խարտեշագեղ ըզգլխով նորա, կապուտակ ականողիք, և շրթունք իբրև զվար կարմիր, յաւելուին գեղ սիրայորդոր 'ի դէմս նորա: Աչք նորա համայն ընդ խօսս գեղածիծաղք. իսկ 'ի լռելն երկնահայեացք բնաւորեալ՝ զդիւրազգաց սիրտ նորա և զթեթև ինչ թախծութիւն սրտին 'ի յայտ ածէին: Նոյն և

Պօղ ընդ շնորհս պատանեկութեան բերէր յանձին զնկարագիր առն 'ի չափ հասելոյ · բարձրահասակ քան զՎիրգինիա, Թխագոյն քան զնա, և արծուենգն · բիբք աչաց նորա սևաթոյր, խորոխաք իմն գոգցես, բայց երկայնատեգ յօնիցն ճառագայթաձև զնոքօք փայլմամբ քաղցրացեալք: Յար 'ի շարժման կայր, այլ 'ի տեսանել զքոյրն՝ հանդարտէր բազմէր առընթեր · և 'ի ճաշելն իսկ սովոր էին լռիկ կալ, որպէս զի 'ի լռութիւն նոցա 'ի բնական գրիցն տեսիլ՝ և 'ի բոկանի ոտիցն վայելչութիւն՝ թուէին կիցք իմն անգրեաց քանդակ վաղեմի 'ի կիճ սպիտակ, զՆիոբեայ որդւոցն յանդիման առնելով զպատկեր: Այլ 'ի հայեցուածս նոցա՝ որ իրերաց խնդրէին հանդիպել, և 'ի քաղցր ժպիտ՝ զոր միմեանց փոխադարձէին, թուէին զուարթունք երկնից կամ հոգիք երանաւէտք՝ որոց բնութիւն իսկ է սէր առ միմեանս, և չէին ինչ նոցա պէտք ձևովք զզգացմունս բացատրելոյ և բանիւք ըղսիրելութիւն:

Բայց Լազուր տիկնոջ, 'ի զարգանալ

դստերն օր ըստ օրէ 'ի տես և 'ի գեղ, ա-
ռաւելուին հոգք ընդ մայրենի գորովս,
և ասէր ցիս. Եթէ հասցէ ինձ մեռանել,
զի՞նչ արասցէ դստրիկ իմ չքաւոր: Էր
նորա 'ի Գաղղիա հօրաքոյր տոհմիկ և ըն-
չաւէտ, պառաւ խստակրօն. սա 'ի հարս-
նանալ նորա՝ մերժեալ էր զնա յամենայն
նպաստից, վասն որոյ և նորա հաստա-
տութեամբ եդեալ 'ի մտի չխնդրել ինչ՝ ես
և 'ի յետին կարօտութեան: Բայց մայ-
րութեան բարձեալ 'ի նմանէ զերկիւղ
կրելոյ զմերժումն, գրեաց առ հօրաքոյր
իւր զտարաժամ մահ առն իւրոյ, զծնունդ
դստերն, և զտառապանս՝ յորում կեայր
նժդեհ անտէրունչ հանդերձ մանկամբն:
Այլ չընկալաւ ինչ 'ի նմանէ պատասխա-
նի. և թէպէտ խորոխտ իսկ էր բնութեամբ,
յանձն էառ խոնարհել կալ նշաւակ կըշ-
տամբանաց նորա՝ որ ցասմամբ էր ընդ իւր
վասն լինելոյ առն ապատոհմի, թէ և ա-
ռաքինւոյ, և յաճախէր գրել առ նա յա-
մենայն դէպս առ 'ի շարժել զնա 'ի գութ
'ի վերայ դստեր իւրոյ. բայց ամք յոլովք
'ի վերայ անցին, և լռութիւն էր 'ի սպառ:

Ապա ուրեմն յամին 1738, երեամ մի յետոյ քան զգալըստ Պուրտոնեայ քաղաքապետի 'ի կղզի այսր, գտաց զի գիր 'ի հօրաքեռէ իւրմէ հասեալ էր առ նա վասն իւր, և փութացաւ 'ի Բոր-Լուի, ոչ ինչ զգձձութենէ հանդերձիցն հոգացեալ, զի խնդութիւն մայրենի յաղթեաց 'ի նմա ամօթոյ: Եգիտ իսկ առ քաղաքապետին գիր, այլ գիր կշտամբողական, յորում հօրաքոյր իւր գրէր. Յիրաւի են քեզ աղէտքդ, փոխանակ զի ժանտի և բախտախնդիր առնն եղեր կնութեան. յուսութեանց զհետ երթան պատիժք, և կանխահաս մահ առն քո պատուհաս է երկնառաք. բարւոք առնես պանդխտել 'ի կղզւոջդ քան լինել ասա 'ի նախատինս ազգատոհմիդ. այն զի և երկիրդ ուր կաս՝ երկիր բարի է. Ճոխանան այդր ամենեքին՝ բաց 'ի դատարկապորտ մարդկանէ: Եւ յետ այս ամենայն Թշնամանաց՝ պարծանս անձին 'ի կատարած գրոյն յաւելեալ, ասէր. Ոչ փայրապար հրաժարեցի ես 'ի հայրսանեաց, որ գրեթէ միշտ աղետաբերք են: Ուր ոչ առ հրաժեշտի ժնա-

ցեալ էր նա ամուրի, այլ զի փառամոլ էր և ազնուականի առն 'ի խնդիր. և թէպէտ էին նորա մեծութիւնք բազում՝ որ միայն խնդրին յարգքունիս, այլ ոչ ոք գտաւ ցանկացող այնպիսում անգեղեայ և խստասիրտ օրիորդի: Յաւելոյր ապա յետ գրութեան, զի քաջ իսկ խորհեալ և բազում աղաչանօք յանձն արարեալ էր զնա քաղաքապետին: Եւ արդարև արարեալ իսկ էր, այլ ըստ այժմու սովորութեան՝ որ երկիւղալի ևս առնէ յանձնելում զընկալուչն քան զյայտնի թշնամի. զի առ անբասիր առնելոյ զանգթութիւն իւր առաջի քաղաքապետին, զրպարտէր զեղբօրորդին պատճառանօք կարեկցութեան: Պուրատնէ սովին ճախողակի կարծեօք վէր 'ի վերոյ ընկալաւ զտիկինն, յոր և անծանօթի ումէք չէր մարթ անկարեկիր և առանց մեծարանաց ակնարկել. և որ ինչ տիկինն զանձնէ և վասն դստերն առնէր աղերս, նա հակիրճ առ ամենայն և տմարդի առնէր պատասխանի. Տեսից . . . խորհեցայց . . . համբեր այժմ . . . ոչ դու միայն ես կարօտ . . . Թող չէր քո զայրացու-

ցեալ զպատուական հօրաքոյրդ . . . անձին լեր մեղադիր , և այլն ։

Այսպէս տիկինն Լազուր սրտաբեկ և դառնակսկիծ դարձաւ 'ի տուն , և մտեալ բազմեալ՝ արկ զգիր հօրաքեռն զսեղանով , և ասէ ցՄարգարիտ . Տե՛ս զմետասան ամաց ակնկալութեան արդասիս ։ Եւ զի չէր այլ ոք 'ի տան անդ գրագէտ , էառ անդրէն զգիրն՝ ընթեռնուլ 'ի լուր ընտանեացն . և իբրև կատարեաց , 'ի ցասուման յուզեալ Մարգարտայ՝ ասէ . Եւ զի՞նչ կարօտ իցեմք ազգականիդ , մինթէ եթո՞ղ զմեզ Տէր 'ի ձեռանէ . ինքն է հայր մեր , . նա ինքն միայն . չէա՞ք իսկ ցարդ երջանիկք . և ընդէ՞ր տրտմիս և անկանի սիրտ քո ։ Եւ տեսեալ զի լայր , անկաւ զպարանոցաւ նորա , գիրկս արկ , և ասէ . Քոյր իմ սիրելի , ո՜հ քոյր իմ ։ Այլ և ինքն իսկ 'ի փղձուկ հարեալ , հեղձամղձուկ լեալ 'ի հեկեկանաց , եկաց անբարբառ ։ Յայն ողորմ տեսիլ Վիրգինիա մերթ զմօրն և մերթ զՄարգարտայ ձեռսն առեալ համբուրէր , և առ սրտին ողջագուրէր . իսկ Պօղ բարկացայտ աչօք գոչէր , և սպառ-

նայր քանցի և տանատրոփ , այլ ուժ իսկ՝ ոչ գիտէր ։ Զի լուր աղմկին հասին անդր և Դոմինիկ և Մարիամ, և լցաւ հիւղն 'ի ձայնէ ողբոց , ուր չլինէր այլ ինչ լսելի՝ բայց ո՜հ տիկին . . . ո՜հ տիրուհի . . . ո՜հ մայրիկ . . . ո՜հ մի լար ։ Մինչև 'ի սրտառուչ յորդորանացն ափոփեալ Ղազուր տիկին, և գիրկս արկեալ մանկանցն, ասէ զուարթադին · Որդեակք իմ, դուք էք վշտացս իմոց պատճառք · դուք և խնդութիւն իմ · ո՜հ որդեակք սիրելիք , վիշտք ինձ 'ի հեռանալս հասին , այլ երջանկութիւն իմ առ ինև է ։ Իսկ Նոքա թէպէտ և զիմաստս բանիցն ոչ 'ի միտ առնուին , այլ զի տեսանէին զնա ափոփեալ՝ զուարթացան և ինքեանք , և փարէին զնովաւ ։ Այսպէս ամենեցուն անդրէն խնդամտեալ , որպէս մրրիկ 'ի գեղածիծաղ գարնայնի անցին դէպքն ։

Բայց բարեբոյս բնաւորութիւն մանկանցն օր ըստ օրէ գայր յերևան · յաւուր միում հիւրակէի ընդ այգն , մինչդեռ մարք նոցա երթեալ էին 'ի նախիկին պատարագն յեկեղեցւոյն 'ի Բամբլըմուս , կին ոմն խաւ_

չիկ լեռնաբնակ եկն եկաց ընդ պառանեօք՝ որ շուրջ կային զհիւղիւն, և երնիհար մեռեղատիպ, և փոխանակ հանդերձից կապերտ զմիջով ածեալ ափածանելի: Անկաւ առ ոտս Վիրգինեայ, մինչդեռ նա զնախաճաշ ընտանեացն պատրաստէր, և ասէ. Ցիր, օրիորդիկ, գթա 'ի սարուկս հէք և փախստական. յամսօրեայ աւուրց շրջիմ թափառական 'ի լերինս յայսոսիկ կիսամահ 'ի սովոյ, և յասպականեաց հալածական. յերեսաց տեառն իմոյ փախուցեալ եմ, յուսեմն է 'ի ձորից գետափնեայց Սևաւ գետոյ. նա ինքն հասոյց զիս յայս աղէտս: Եւ զայս ասացեալ՝ ցուցանէր զկապուտակ հարուածս գանից 'ի մարմնի իւրում, և զպախս վիրացն, և յաւել. Գետասմոյն խորհէի զանձն իմ կորուսանել. այլ իբրև դիտացի զի դուք աստ բնակէք, ասեմ. Չև ևս մեռայց, են աստ սպիտակք բարեգործք: Վիրգինեայ զալարեցան աղիք, և զճաշիկն՝ զոր ընտանեացն պատրաստէր՝ մատոյց նմա, և ասէ. Քաջալերեաց, եղկելի դու, կեր և արբ: Եւ 'ի սպառել հնդկին խսկոյն զկերակուրն և 'ի

զօրանալ, յաւել Վիրգիլիոս. Ես եկից հաշտ առնել զտէր քո ընդ քեզ, եթէ կամիս՝ հէք աղքատիկ՝ ածել զիս առ նա. յերեսաց աղետիցդ շարժեսցին նա 'ի գութ: Եւ հնդիկն ասէ. Հրեշտակդ ինձ երկնաւոր, եկից ընդ քեզ ուր և կամիցիս: Յայնժամ կոչեաց Վիրգիլիոս զՊօղ, և աղաչեաց զնա գալ ընդ իւր. և հնդիկն առաջնորդէր նոցա ընդ անտառս և ընդ բարձրաբերձ լերինս՝ ընդ որս բազում ճգամբ 'ի վեր մագլէին, և ընդ լայնածաւալ գետս՝ ընդ որս հետի անցանէին, մինչև հասին զմիջաւուրբ 'ի ստորոտ լերին միոյ յեզր Սեաւ գետոյ, ուր էր տուն գեղեցկաշէն և ծառատունկ ընդարձակ, և ամբոխ գերեաց յազգի ազգի վաստակս պարապեալ: Տանուտէրն 'ի միջի անդ ծխելեաւն 'ի բերանի և եղէգն հնդիկ յաջում ձեռին զգնայր, այր բարձրահասակ, վտիտ մարմնով և թխատիպ, խորակն և կցայօն, սևաթոյր յօնիւք: Վիրգիլնեայ զգողանի հարեալ և զձեռանէ կալեալ Պօղայ, մատեաւ առ այրն և աղաչէր զնա, վասն սիրոյն Աստուծոյ ներել գերւոյն՝ որ անդ

փոքր մի 'ի բացէ կայր ։ Նորա յաղքատին զգեստս մանկանցն վեր 'ի վերոյ ակնարկեալ , ոչ ինչ 'ի սկզբան անդ երեւս արար նոցա ․ այլ 'ի նկատել զչքնաղագեղ դէմս Վիրգինեայ , և զգեղձանիկ ընդ կապուտակ քօղովն անկեալ խոպոպս , և 'ի լուր քաղցրաձայն բարբառոյ նորա՝ որ ընդ բոլոր անձինն դողդոջէր , արկ զծխիչն 'ի բերանոյ , և 'ի վեր առեալ զցուպն եղեգնեայ , երդուաւ երդումն զարհուրելի , և ասէ ․ Ոչ 'ի սէր Աստուծոյ՝ այլ 'ի սէր քոյին ներեալ աղախնոյդ ։ Յայնժամ Վիրգինեայ ակնարկեալ գերւոյն մատչել առ տէր իւր , խոյս ետ ինքն 'ի բաց , և զհետ նորա Պօղ ։

Եւ դարձ արարեալ նոցա ընդ զառ 'ի վեր լերինն՝ ընդ որ իջեալն էին , իբրև 'ի կատար անդր հասին , վաստակաբեկ նըքթեալ և ծարաւի նստան ընդ ծառով ․ զի աւելի քան զհինգ փարսախ արարեալ էր նոցա յելից արեգական անսուաղ ։ Յայնժամ Պօղ ասէ ցՎիրգինիա ․ Վաղ իսկ օրս ընդմիջեցաւ , քոյր իմ , և դու քաղցեալ և ծարաւի ես , և չեք ինչ աստ 'ի ճաշակ ․

Եկ իջցուք անդրէն առ տէր գերւոյն , խնդրել 'ի նմանէ կերակուր ։ Պատասխանի նա Վիրգինեա և ասէ . Ո՜հ մի , եղբայր իմ . ահաբեկ արար զիս այրն այն . յիշեա զոր մայրիկն մեր ասէ . Որ ուտէ զհաց անզգամին , լցցի բերան նորա կոպճով ։ Կրկնեալ անդրէն պատասխանեալն ասէ . Եւ զի՞նչ գործիցեմք , պտուղք ծառոցս անպիտանք են 'ի կերակուր , չիք աստ դամոն , չիք կիտրոն առ 'ի զովացուցանել ըզպապակ քոյին ։ Եւ Վիրգինեա յաւել . Որ կերակրէն զձագս թռչնոց՝ որ կարդան առ նա , ոչ թողցէ զմեզ ։ Եւ զոյգ ընդ բանին լսելի եղև խոխոջ ջուրց գահավիժելոյ . և ընթացեալ անդր հարին զպատուք յականակիտ ալեաց անտի , և որ զեզերբք ջուրցն աճեցեալ էր ջրկոտեմ , քաղեալ և ճաշակեցին զայն ։ Այլ մինչդեռ հաստատագոյն ինչ կերակրոյ 'ի խնդիր զաչս ածէին , ետես Վիրգինեա 'ի ծառս անտառին մատաղատունկ ինչ հանգոյն արմաւենւոյ՝ որ 'ի մէջ սաղարթուց 'ի գագաթանն բերէ պտուղ կաղամբաձև ախորժ 'ի ճաշակ ։ Բայց բուն ծառոյն , ոչ ինչ

ստուարագոյն քան զսրունս , այլ բարձր
էր առաւել քան զվաթսուն ոտնաչափ . և
թէպէտ որակ փայտին յաղեղնաձև թելից
յօդեալ , այլ կարծրամէջ և անտեղիտալի
սայրասուր տապարաց : Իսկ Պօղ , ոչ ու-
նելով ընդ իւր և ոչ դանակ , մտաբերեաց
հուր հարկանել զծառոյն . այլ և այն դը-
ժուարին , զի ոչ գոյր նորա հրահան , և
ոչ յապառաժուտ կղզւոյս կայծքար ու-
րեք է գտանել : Բայց հարկ 'ի հնարս դրդէ
զհանճար , և յոլովք 'ի պիտանեգոյն գիւ-
տից կարօտութեան են արգասիք : Խոր-
հեցաւ նա ըստ օրինակի հնդկաց վառել
հուր . և առեալ ընդ ոտիւք ոստ ծառոյ
զօսացելոյ , ծակ 'ի նմա գործեաց սրա-
ծայր քարիւ , և սայրիւ նորին տաշեալ ե-
րիթ յայլասեռ ծառոյ , մխեաց զայն 'ի
ծակ ոստոյն՝ որ ընդ ոտիւքն էր , և արագ
արագ շրջշրջեալ զայն ընդ ափ՝ որպէս
որ զխառնիչ յեռալ չոքոլաթին պտուտ-
կէ , և ահա ծուխ ընդ ծակն ելանէր , և
թօթափէին անտի կայծակունք : Յայն-
ժամ քաղեալ խուիւ և կրկուտ ցամաք՝ ե-
լոյց հուր զարմամբ ծառոյն , և ահագին

Ճարճատմամբ կործան անկաւ արմաւենին ։ Նովին հրով և զպտուղ ծառոյն ՚ի փշալից և ՚ի սաղարթապատ ՚ի կարծր պատենից կեղևեալ, զկէս նորին կերան անեփ, զմիւս կէսն մուրկ ընդ մոխրով, երկոքին ևս ախորժ ՚ի ճաշակ ․ և առաւօտին բարերարութեանն իւրեանց յիշատակ յաւելայր բերկրանս ՚ի կերակրին ։ Բայց բերկրութիւն նոցա աղմկէր յածել զմտաւ զհօգս մարցն ընդ յամեցուածս դարձի իւրեանց ՚ի տուն, զոր Վիրգինեա յեղյեղէր սաէպ ․ իսկ Պօղ զօրացեալ կերակրովն, հանդարտէր զնա և ասէր ․ Հուպ ընդ հուպ հասեալ ՚ի տուն, սփոփեսցուք զնոսա ։

Եւ յարուցեալ ՚ի ճաշոյն առ ՚ի գնալ, վարանէին զի չէր ոք նոցա ուղեցոյց ․ այլ Պօղ, որ ոչն երբէք վհատէր, ասէ ․ Ի միջօրեայ արևն կոյս հանդիպի հիւղս մեր, պարտ է մեզ անցանել ընդ լեառնդ երեքսարեան՝ ընդ որ իջաքն յառաւօտուս ․ հապա ընթասցուք, քոյր իմ ։ Այն էր լեառն Եռաստին, յերեցունց սարիցն ձևոյ առեալ զանուանակոչութիւնն ։ Եւ

իջեալ 'ի լեռնէ անտի Սեաւ գետոյ ընդ հիւսիսակողմն , և ժամաւ չափ ուղևորեալ, հասին յեզր լայնածաւալ հեղեղատի՝ որ հատանէր զանցս նոցա ։ Կողմն այն կղզւոյս՝ ընդարձակ և անտառախիտ՝ ցարդ իսկ անծանօթ է , և յոլովից 'ի գետոց և 'ի լերանց նորա չիք իսկ անուն ․ իսկ հեղեղատն յոր հասին՝ խաղայ ընդ ժայռս յորձանահոս ։ Ի խոխոջ ալեաց նորա երկուցեալ Վիրգինեայ , չիշխէր հետևակել ընդ հունն ․ յայնժամ Պօղայ առանձնեալ զնա , անց բեռամբն հանդերձ ընդ լպիրծ ապառաժս՝ աներկիւղ 'ի յորձանացն , և ասէր ցՎիրգինիա ․ Մի՛ երկնչիր , հզօր եմ քև ․ եթէ չէր տանուտեառնն ներեալ աղախնոյն , մենամարտէի ընդ նմա ։ Եւ Վիրգինիա ասէ ․ Դո՛ւ ընդ հսկային ընդ այնմիկ չարի ․ տես յո՛ր վտանգ ածի զքեզ ․ ո՜հ , քանի՛ դժուարին է բարերարել , չիք ինչ դիւրին քան զչար գործել ։

Եւ իբրև հասին 'ի ցամաք , դեռ ևս պատանին բարձեալ բերէր զՎիրգինիա ․ և կամէր ընդ լեառնն իսկ Եռաստին , որ կէս փարսախաւ հեռի էր անտի , ելանել բե-

ռամբն • այլ ոչ ևս յերկարեալ 'ի տօկ, հարկեցաւ գնել զնա յերկիր, և բազմեալ առ նմա հանգչէր ։ Յայնժամ ասէ ցնա Վիրգլինիա • Օրս խոնարհի, եղբայր իմ • դու տակաւին յուժի կաս, այլ իմ սպառեաց զօրութիւն • Թո՛ղ զիս աստ, և փութա դու 'ի տուն՝ հանգուցանել զսիրտ ծնողացն մերոց ։ Պատասխանի ետ Պօղ և ասէ • Մի՛ լիցի ինձ այդ, ոչ թողից զքեզ • եթէ գիշեր 'ի վերայ հասցէ մեզ յանտառիս, լուցից հուր, հարից միւս ևս արմաւենի • զպտուղ նորա կերիցես, և սաղարթիւքն յօրինեցից քեզ տաղաւար ։ Էր անդ զգետեզերբն ծառ փաղեմի, և 'ի կոճեղ նորա աճեցեալ տերևք երկայնք ցոզկենւոյ • իբրև փոքր մի զօրացաւ Վիրգինիա, քաղեալ 'ի տերևոց անտի՝ արար իւր տրեխս ոտիցն վիրաւորելոց ընդ քարուտս • զի առ հապճեպ փութոյ 'ի բարերարել, մոռացեալ էր ագանել կօշիկս ։ Եւ 'ի զո՛վանալ ոտիցն 'ի տերևոց անտի, ոգի առեալ եհատ 'ի հնդիկ եղեգանց իւր ցուպ, և յուղի անկաւ՝ յեցեալ միով ձեռամբն 'ի Պօղ, և միւսովն 'ի ցուպն եղեգնեայ ։ ✝

Գնային հանդարտաքայլ յանտառէն , բայց մայրիք բարձրաբերձք և սաղարթախիտք ծածկեցին յաչաց նոցա զլեառնն Եռասստին՝ յոր դէմ եղեալ էր նոցա , և զարեգակն՝ որ 'ի մուտս խոնարհէր ։ Եւ 'ի գնալ փոքր մի ևս յառաջ , մոլորեցան տակաւ յարահետ ճանապարհէն , և անկան 'ի բաւիղ անել անտառախիտ և ապառաժուտ ։ Ցայնժամ Նստոյց անդ Պօղ ընդ Վիրգինեա , և ինքն խռովեալ այսր անդր ընթանայր խնդրէր ելս 'ի մացառախիտ անտառէն , այլ 'ի զուր ։ Ել նա 'ի կատար միոյ 'ի ծառոց բարձանց , դիտել տեսանել զլեառնն • բայց զգագաթունս ևեթ մայրեաց տեսանէր շուրջանակի 'ի նշոյլս մտից արևուն փայլեալ ։ Վաղ իսկ ստուերք լերանց ձգտեալ երկայնեալ՝ ծածկէին զանտառս ընդ հովիտս , և 'ի հողմախաղաղ հանդարտել երեկոյին՝ խոր լռութիւն պատէր զվայրսն անմարդիս , ոչ այլ ինչ լսելի լեալ՝ բայց բառաչ եղջերուաց 'ի հեռաստանէ գիմելոց 'ի դադարս իւրեանց ։ Խորհեցաւ Պօղ զի թերևս ոք յորսորդաց լուիցէ , և գոչեաց ուժգին • Եկայք , հասէք

յօգնութիւն Վիրգինեայ ։ Այլ արձագանգք նեթ անտառին կրկնեալ և երեքկնեալ զնոյն անդրէն ձայն տային Վիրգինիա ; Վիրգինիա ։

Իջեալ ապա պատանւոյն 'ի ծառոյ անտի խոնջ և տխուր, խորհէր գիշերօթել առ տեղեաւն ․ այլ ոչ գոյր անդ, ոչ աղբիւր, ոչ արմաւենի, և ոչ փայտ չոր 'ի հուր ․ և զփորձ առեալ զի ամենայն հնարիւքն և ճգամբք չէր իմիք ձեռնհաս, սկսաւ լալ ։ Ցայնժամ Վիրգինիա ասէ ․ Մի՛ լար, եղբայր իմ, եթէ ոչ կամիս ընկճել ինձ 'ի վշտաց ․ ես իսկ եմ պատճառք տառապանաց քոց, և մարցն մերոց՝ որ հոգան արդ զմէնջ ․ ահա չէ պարտ և բարերարել իսկ անհրաման 'ի ծնողաց ․ ո՜հ, զի անմտացայ յոյժ ։ Եւ զայս ասացեալ՝ սկսաւ և ինքն լալ ․ և ապա յաւել ․ Այլ եկ, Պօղ, յաղօթս կացցուք, զի ողորմեսցի մեզ Տէր ։ Եւ մինչդեռ զաղօթսն կատարէին, հաջել շան լսելի եղև, և ասէ Պօղ ․ Ասպականւոյ է ձայնդ, թերևս ոք յորսորդաց դիմէ նսեմաւ 'ի վերայ եղջերուաց ։ Եւ 'ի յաճախել կաղկանձելոյ

G. Bernasconi. inc:

շա՛նն, ասէ Վիրգինիա. Հաչիւն շան մե-
րոյ թուի ինձ այդ, այո՛ հաչիւն Հաւա-
տարմին. ծանօթ է ինձ ձայն նորա, մօտ
ուրեմն իցեմք 'ի հիւղ մեր և 'ի լեռնոտն
մեր հասեալք: Վայրիկ մի, և ահա եհաս
շնիկն, և փարեալ զոտիւք նոցա՝ հաչէր
կաղկանձէր կողկողէր և քծնէր: Եւ 'ի
հիանալ նոցա ընդ այն, և ահա տեսին զի
դիմեալ գայր Դոմինիկ. որ իբրև եհաս առ
նոսա արտասուելով այրն տիրասէր 'ի
խնդութենէն, յարտասուս հարան և ին-
քեանք՝ կացեալ լուռ և անբարբառ: Եւ
ապա Դոմինիկ 'ի հանդարտելն՝ ասէ.
Տեարք իմ պատանեկիկք, քանի՜ հոգս յա-
ւելլք մարց ձերոց, որպէս տառապեցան
նոքա 'ի չգտանելն զձեզ 'ի տան 'ի դառ-
նալ իւրեանց ընդ իս յեկեղեցւոյ. Մա-
րիամ յանկեան ուրէք պարապեալ 'ի
գործ՝ անգիտանայր ուր երթեալն էիք:
Այսր անդր ընթանայի, ոչ գիտելով յո՛
դիմել 'ի խնդիր. և ապա առեալ զցնցոտիս
ձեր մատուցի 'ի հոտոտելիս շնկանն. և
նորա իմացեալ գոգցես զմիտս իմ, սկսաւ
իսկոյն հետազօտել զձեզ. և յուղի ան-

կեալ, յար զձեռն տատանելով, ած զիս մինչև 'ի Սեաւ գետ։ Անդ ոմն 'ի բնակչաց պատմեաց ինձ, զի զաղախին նորա փախստական առ նա ինքն դարձուցեալ է ձեր, և նորա 'ի շնորհս ձեր ներեալ աղախնոյն. այլ ներումն որպիսի՛. եցոյց ինձ զեղկելին տանակապեալ 'ի կոճեղս, և անուր երեքժանի 'ի պարանոցին։ Անափի շնիկն, անդադար 'ի հետազօտելոյ, ած զիս 'ի լեառն՝ որ առ Սեաւ գետով, և զկայ առեալ անդ, հաջէր ուժգին առ միով յարմաւենեաց՝ որ տապալեալ կայր, և ծխէին խանձողք առ նովաւ. և ապա առաջնորդեաց ինձ այսր 'ի ստորոտ Եռասախն լերինս, ոչ ինչ հեռի 'ի բնակութենէս մերմէ քան զչորս փարսախ։

Ես եդեալ առաջի նոցա քաքար և միրգս, և հադաղակ լի օշարակաւ՝ զոր մարց նոցա պատրաստեալ էր, գինի շաքար կիտրոն և ընկոյզ հնդիկ ջրախառնեալ, կազդուրել զնոսա և զովացուցանել, ասէ. Կերայք, արբէք, զօրացարո՛ւք։ Վիրգինիա ընդյիշատակ հէք աղախնոյն և տառապանաց մարցն իւրեանց յօգուտ եհան, և կրկնէր

և երեքկիներ · Ո՛հ, քանի՜ դժուարին է բարերարել: Եւ մինչդեռ նոքա Ճաշակէին, հուր ելոյց Դոմինիկ · և խնդրեալ՚ի ժայռս անդ բեւեկն՝ որոյ զալար խուկ ոստք վառին բոցածաւալ, արար ջահ ՚ի լոյս, քանզի գիշեր էր: Այլ իբրև յուղի անկան, մեծ ևս տագնապ տարակուսի հասանէր նմա վասն ոչ ևս կարելոյ մանկանցն հետևակել, զի ուռուցեալ էին ոտք նոցա և կարմրացեալ: Զի՞նչ առնել էր նմա · եղանե՞լ ՚ի խնդիր օգնականութեան, թէ անդ ընդ նոսա կալ զգիշերն զայն · և ասէր · Ո՞ տայր ինձ զաւուրս՝ յորս ՚ի միասին զձեզ ՚ի գիրկս տանէի · այլ արդ դուք ՚ի տիս եղեալ, և ես ծերացեալ եմ: Եւ մինչդեռ ՚ի վարանման կայր, գունդ լեռնաբնակ հընդկաց անցանէր ՚ի բացէ իբր քայլս քսան, և պարագլուխ նոցին մատուցեալ առ մանկունսն ասէ · Ազնիւ սպիտակիկք, մի երկընչիք, տեսաք մեք զձեզ յառաւօտու մինչ անցանէիքդ ընդ կնօջ ումեմն ուղետացւոյ՝ խնդրել նմա շնորհս ՚ի ժանտ տեառնէն · և մեք արդ, փոխանակ բարերարութեանդ ձերոյ, բարձեալ տարցուք

զձեզ 'ի տուն ձեր ։ Եւ յականարկել նորա առ հնդիկսն, չորք ոմանք 'ի կորովեաց կազմեցին գահաւորակ յոստոց ծառոց, և նստուցեալ 'ի վերայ զմանկունսն՝ բարձին յուս իւրեանց․ և Դոմինիկեայ ջահ 'ի ձեռին առաջնորդեալ նոցա, գնային 'ի ձայն ցնծութեան՝ հնդկացն առ հասարակ կարգալով նոցա օրհնութիւնս ։ Յայնժամ Վիրգինիա փղձկեալ սրտիւ ասէ ցՊօղ․ Տեսանես, եղբայր իմ, զի ոչ թողու Տէր անվարձ զգործս բարիս ։

Ի մէջ գիշերի հասին 'ի ստորոտ բնակութեան իւրեանց, ուր 'ի կատար լերինն խիտ առ խիտ վառէին խարոյկք․ և 'ի դիմել նոցա ընդ զառ 'ի վերն, լուան զբարբառ մարցն իւրեանց՝ որ ասէին․ Դո՞ւք էք, որդեակք մեր ։ Եւ ետուն հնդկօքն հանդերձ պատասխանի․ Այո, մեք իսկ եմք ։ Եւ ահա տեսին զնոսա և զՄարիամ, զի ջահիւք ընդ առաջ գային․ և տիկինն Լադուր ասէ․ Որդեակք չարաբաստիկք, ուստի՞ գայք․ ո՜հ, յորպիսի՜ տառապանս արկէք զմեզ ։ Պատասխանի ետ Վիրգինիա, և ասէ․ Ի Սեաւ գետոյ գամք, ըն-

կալաք անդ ներումն աղախնոյ ՚ումեմն հնդկի փախստէի ՚ի տեառնէ իւրմէ • Նմա և զնախաճաշիկ մեր տուեալ էր առաւօտին , զի մեռանէր հէքն սովալլուկ • Նմին ի՛րի հնդիկք լեռնաբնակք բարձեալ բերեն զմեզ ։ Յայնժամ տիկինն Լագուր գիրկս արկեալ զատերն , և չկարէր բարբառել • իսկ Վիրգինիա ՚ի թանալ մայրենի արտասուացն զդէմս իւր , ասէ • Փոխարինես դու ինձ , մայրիկ , զամենայն վիշտս իմ՝ զոր կրեցի ։ Եւ Մարգարիտ զմայլեալ խնդութեամբ , փարեալ զորդեկաւն՝ ասէր • Եւ դու , որդեակ իմ , առաքինացար և դու ։ Եւ հասեալ ՚ի տուն որդւովքն հանդերձ , ետուն ճաշ հնդկացն • որք ապա ՚ի դառնալն իւրեանց՝ մաղթէին նոցա զամենայն յաջողութիւն ։

Որ իւրաքանչիւր ծագէր նոցա օր բարեբաստութեան և խաղաղութեան • Նախանձ և փառասիրութիւն ոչ տագնապէին զնոսա • ոչ անձկային նոքա սնոտի համբաւոյ , որ մարթանօք ստացեալ՝ և չարախօսութեամբ ինչ կորնչի • այլ շատանային գոլ վկայ անձանց և դատաւոր ։ Ի կղզւոջ

տատ, ուր որպէս և առ ամենայն գաղթականս Եւրոպայ յաճախեն ընդվայրաքնին խոյզք չարաշշուկ եւեթ զրուցաց, առաքինութիւն նոցա և անունն իսկ էր անծանօթ. բայց միայն եթէ անցաւոր ոք ընդ Բամբլըմուս հարցանէր ումեք 'ի բնակչաց դաշտին՝ թէ ո՞յք 'ի հիւղս աստ բնակէին, առանց իսկ ճանաչելոյ զնոսա պատասխանէր՝ թէ արք բարեբարք: Այսպէս մանուշակք ընդ մացառօք իսկ ծածկեալ՝ բուրեն 'ի բացեայ զհոտ անուշից:

Մերժեալ էր 'ի խօսից նոցա չարախօսութիւն, որ պատճառանօք արդարութեան ձգէ զխիստ յատելութիւն կամ 'ի կեղծաւորութիւն. զի անհնար է ումեք չատել զոր առ չարս ունի, կամ կենցաղել ընդ այնպիսումն առանց ծածկելոյ զատելութիւն ընդ քօղով բարեկամութեան: Ապա ստիպէ զմեզ չարախօսութիւն կամ այլոց և կամ անձանց անիրաւել: Այլ նոքա առանց դատելոյ զոք, խօսէին միշտ զհնարից բարերարելոյ ամենեցուն. և թէպէտ չէին բաւական առ այն, այլ մշտայօժար կամօքն բերէին յանձին բարեսիրու-

Թիւն պատրաստ 'ի նպաստ այլոց ։ Վասն որոյ յանապատի բնակելով ոչ միայն չէին մարդատեացք , այլ և մարդասէրք էին ։ Ոչ երբէք զզժպատեհ իրաց քաղաքայնոց խօսս 'ի մէջ առնուին , այլ զհամագոյնս ճառ արկեալ՝ ընուէն հրճուանօք և զմայլմամբ ։ Հիանային ընդ զօրութիւն վերնախնամ տեսչութեան , որ 'ի ձեռն նոցա սփռէր յանջրդի ապառաժս անդ առատութիւն և գեղ , և բերկրութիւն ամբիծ , բերկրութիւն անապակ , բերկրութիւն մշտանորոգ ։

Յերկոտասանամենի զօրաւորագոյն էր Պօղ և ուշիմ քան զեւրոպացիս հնգետասանամեայս . գեղազարդէր զերկիրս մշակեալս 'ի Դոմինիկեայ , գնայր ընդ նմա շուրջ յանտառս՝ խլել զմատաղատունկս կիտրոնի , զնարնջի , զդամոնի՝ որ կանաչագեղ ամբառնայ 'ի գագաթն բոլորչի , և զարմաւենւոյ՝ որոյ պտուղ ծորէ օշարակ քաղցր և անուշահոտ որպէս զբուրումն ծաղկանց նարնջի . և տնկէր աստ զԹուփսն զայնոսիկ ։ Սերմանեալ էր նորա և ծառս , որ յերկեմենի ծաղկեալ և պտղաբերեն .

որպէս ականթն, որոյ ծաղկունք սպիտակք՝ համգոյն ձիւնից բիւրեղեայց՝ կախին զոստոցն ոսկուզածեալք. և որպէս պարտէզն եղեւանի, որոյ ցցունք մորոշիկք ասուեայք ծաղկեն ուղղաբերձ. և որպէս փայփայենին, որոյ բուն անոստ սիւնաձև ամբառնայ՝ ահաւեղ 'ի գագաթանն բերելով 'ի լայն տերևոց իւր զթզենեաց, և շուրջ զբնիւն միրգս կանաչագոյն համգոյնս սեխից ուռուցեալ:

Արկեալ էր նորա և սերմանս ծառոց կամ կորիզ, պանանւոյ, մանկենւոյ, աւոքենւոյ, կոյաւենւոյ, յաքենւոյ, և յամբոսենւոյ. յորոց բազումք սկսեալ էին պտղաբերել և առնել տիրկանն իւրեանց հովանի: Վաստակասէր ձեռաց նորա յամուլ իսկ վայրս շրջապատիս սփռեալ էր զարգասաւորութիւն. ազգ ազգ հալուէից և կանկատունկք 'ի դեղձանիկ ծաղկունս կարմրաբղէտս, և կեռասեք փշուտք ամբառնային 'ի կատարս ժայռից, նկրտեալք իմն 'ի բարձրութիւն լրանեաց՝ որոց ծաղկունք ծիրանեխառն կապուտակք զսեպոց լերինն շուրջ կախէին: Եւ անկոցն այն-

պէս յօրինեալ կարգ , զի 'ի տեսիլ աչաց ամենայն ինչ գայր միանգամայն . 'ի միջավայր հովտին բոյսք կարճաբերձք , և զնոքօք թփեար , ապա ծառք ցածունք , և ապա բարձրաբերձք շրջապատէին . որպէս զի ցանկապատն այն ընդարձակ թատր իմն որպէս զշուրջ տեսանելեաց տեղեացն յօրինէր , 'ի տեսիլ ածեալ վայրս դալարագեղս , միրգս , ծաղկունս , պարտէզս բանջարոյ , արօտս , և արտորայս բրնձոյ և ցորենոյ :

Բայց 'ի յօրինել արուեստիւ զանկոցն կարգ՝ 'ի բնութեան ևս կարգաց ոչ սահրիւրէր , այլ մանաւանդ 'ի նմանէ առաջնորդեալ՝ զբոյսս պատապլիճս անկէր 'ի բարձունս , և յեզերս ջուրց զլողականս . և բոյս իւրաքանչիւր 'ի պատկանաւորն իւր 'ի կայս բարգաւաճէր , և կայք իւրաքանչիւր զբնիկ զարդս իւրեանց 'ի բուսոց անտի առնուին : Ուղխք 'ի գագաթանց ժայռից իջեալք , յօրինէին 'ի խորս հովտին՝ ուրեք աղբիւրս , և ուրեք շրջապատեալ 'ի դալարեաց լայնատարր հայելիս՝ յորոց անգրէն ծառք ծաղկաւէտք . ժայռք

և երկին կապուտակ յաչս 'ի վէր ցոլանային ։ Չէր իսկ երկիրն հարթարդակ , այլ այնպէս տունկք 'ի նմա դասաւորեալ , զի յոլովք յայնցանէ և դիւրամատոյցք էին և դիւրատեսիլք • մեք իսկ խորհրդով և ձեռնտուութեամբ օգնականին նմա լինէաք 'ի յաջողութիւն ։

Արահետ զհովտին էր գործեալ, որ 'ի բազում առաջս 'ի շրջապատէ անտի 'ի միջակէտ անդր երթեալ յանգէր ։ Զառապարս իսկ յօգուտ 'ի կիր արկեալ, գեղայօրէն յարմարութեամբ զդիւրինս ընդ դժուարուտս , և զծառս ընտանիս ընդ վայրենիսն էր պատշաճեալ ։ Ի շեղջակուտից քարանց, որ խափանէն արդ աստանօր՝ որպէս և այլ բազում ուրեք 'ի կըղզւոջս՝ զանցս ճանապարհաց, կազմեալ էր նորա ուրեք ուրեք բրգունս , և ընդ շարս վիմացն յեռեալ հողախառն արմատս վարդենեաց և այլ թփեար աճեցուն 'ի քարուտս • որպէս զի 'ի սուղ ժամանակի բըրգունքն այնոքիկ տխրատեսիլք և անգեղեայք ծածկէին դալարագեղք և գեղածաղիկք ։ Ծործորք լերանց անկաղար-

դեալք 'ի յաղթ մայրեաց սաւառնելոց զնոքօք , կազմէին նկուղս կամարակապ անթափանցս 'ի ճառագայթից արեգական , ուր էր զովանալ 'ի տօւէ : Աստի նրբուղի ածէր 'ի յանտառ ծառոց վայրենեաց , ուր պատապարեալ ծառաստան պտղոց աճէր 'ի միջի . և անդ արտորայք ծածանեալ 'ի հողմն , և այլուր դարձեալ պարտէզ բանջարոյ . ուրեք 'ի բացէ ընդ ուղ ծառատունկ երևէին տունք , և ընդ այլ ուղի կատարք անմատոյցք բարձրաբերձ լերին : Աստ 'ի տնկախիտ և բաղեղնապատ թաթամեաց անտառ զմիջաւուրբ իսկ երևէր ինչ ոչ , և անդ 'ի կատար մօտակայ ժայռից՝ որ սարաւանդեալ կարկառի 'ի դուրս 'ի կողաց լերին՝ կային ակներև այլք առ հասարակ սարք շրջապատիս , և ծով 'ի բացէ՝ ուր էր տեսանել զնաւ եկաւոր կամ անգրէն յԵւրոպ աստի դարձաւոր : Աստանօր նոքա յաճախ ընդ երեկս 'ի մի վայր գային առ 'ի վայելել լռիկ և մնջիկ զօդոց զովութիւն , զբոյրս ծաղկանց , զաղբերաց կարկաջ , և զերեկորեն ներդաշնակութիւն լուսոյ և ստուերաց :

Անուանք պատուականաց յոլովից 'ի զըւարճալի վայրաց քաղաքական շրջապատս առաւել քան զամենայն ինչ էին սիրելիք ։ Սարաւանդն՝ զորմէ արդ իսկ ասացի, և ուստի զգալուստ իմ գիտէին 'ի բացէ, կոչէր Դիտարան սիրոյ · անդ մանկանցն 'ի խաղս իւրեանց անկեալ էր եղէգն հնգեկ, և պարզէին 'ի ծայր եղեգանն Թաշկինակ սպիտակ՝ ազդ առնել զգալուստ իմ ընդ նշմարելն զիս 'ի հեռուստ, որպէս սովորութիւն է դրօշակ 'ի լերինս ամբառնալ 'ի տեսիլ ծովաչու նաւուց ։ Ի մտի եղև ինձ դրոշմել յեղեգանն արձանագիր · զի որչափ և ախորժելի էր ինձ յուղևորութիւնս իմ տեսանել անդրիս և արձանս վաղեմիս, այլ առաւել ախորժելի վերծանել արձանագիր ինչ Ճարտարիմաց · զի թուի ինձ անդ լսել 'ի վիմէ բարբառ մարդկեղէն զարուց 'ի դարս հնչեցեալ առ անցաւորս անապատին · Չես դու միայնակ, այլք ևս կացին աստ և խորհեցան, վիշտս համադոյն քոյոցդ կրեալ ։ Եւ եթէ իցէ արձանագիրն այն ազգի վաղնջականի սպառելոյ, ձգէ զմիտս յանհունն ասպարէզ,

և յուշ առնէ նմա զանմահութիւն նորին՝ ցուցանելով յերկարակեաց քան զվաղակործան ինքնակալութիւնս լեալ զիմաստաս մառայ : Սովլին խորհրդով դրոշմեցի 'ի կայմիկ դրօշակի մանկանցն զտողքս Որատեայ .

« Քեզ Հելլինեայ եղբարքն աստեղք լուսափիւռ ,

Եւ հայրն հողմոց քեզ 'ի բարձանց ուղեցոյց ,

Զայլսն կապեալ և արձակեալ ըզզեփիւռ : » Տաղերգ . Գ . 2 :

Եւ 'ի կեղև Թաթամենւոյն , ուր երբեք երբեք 'ի գնին մրրկելոյ ծովուն ընդ հովանեաւ նորին բազմէր Պօղ , քանդակեցի զտողս զայս Վիրգիլեայ .

« Նա և այնմ իսկ երանի որ զգաշտային ծանեաւ ըզգիս » : Մշակ . Բ . 496 :

Եւ դարձեալ 'ի վերայ դրան սենեկի Լադուր անկնոյն , ուր ժողովեալ նոցա էր , գրեցի .

« Աստ հանգիստ ապահով , և կեանք անփորձ խաբէութեան » : Մշակ . Բ . 470 :

Բայց Վիրգիլեայ ոչ հաճոյ թուեցան

տողքս • Երկայն և խրթին է, ասէր, արձանագիրդ դրոշմեալ ընդ դրօշակաւն, ըստ ես էր արձանագրել. Մշտայոյղ այլ անյողդողդ : Այս որ եւ տու պատասխանի, զի արձանագիրն այն 'ի Ճահ ևս էր առաքինութեան • և շառագունեաց ընդ բանս իմ:

Երջանիկ ընտանեացն այնոցիկ շուրջանակի ամենայն ուրեք երևէր սիրտ ազնուագութ • զի աննշանից ևս իրաց անուանս գորովագոյնս կոչեցեալ էր : Աբօտն շրջաբոլոր՝ պատեալ 'ի Նարնջեաց 'ի պանանեաց և 'ի յամրոսից, ուր մանկունքն գնային երբէք երբէք 'ի պարել, կոչէր Սրտակցութիւն. ծառն հինաւուրց, ընդ որով Լադուր տիկնոջ և Մարգարտայ պատմեալ էր իւրերաց զաղէտս իւրեանց, կոչէր Սրբիչ արտասուաց • ածուք, յորս սերմանեալ էր նոցա ցորեան ոլոռն և ելակ, կոչէին Բրիտանիա և Նորմանտիա : Ըստ նոցին օրինակի և Դոմինիկ և Մարիամ 'ի յիշատակ գաւառացն՝ յորս ծընեալն էին, Անկոլա և Փուլփուէնթ կոչեցին զվայրս՝ յորոց մին բերէր ոզորս 'ի հիւս կողովոց, և միւսն զգմենի մի ձեռա-

տունկ նոցա ։ Այսպէս Նժդեհքն այնոքիկ բերումք աշխարհին իւրեանց պահէին 'ի սրտի զքաղցր յիշատակ հայրենեացն , և սփոփէին զկսկիծ նժդեհութեան ։ Ո՜հ , քանի՜ գեղապատշաճ յորջորջանօք բերէին յիւրեանս կենդանութիւն ծառքս այսոքիկ և աղբերք և ժայռք , որ արդ հանգոյն դաշտացն Եղլադայ աւերակս ևեթ ընծայեն 'ի տեսիլ , և անուանս աղիողորմս 'ի լուր ։

Բայց քան զամենայն վայրս շրջապատիս սիրելի էր անուանեալն Հանգրուան Վիրգինեայ ։ Ի ստորոտ ժայռին , որ կոչէրն Դիտարան սիրոյ , է խոռոչ՝ ուստի աղբիւր բղխեալ յօրինէ 'ի մարգագետնի անդ աւազան ։ Ի ծնանել Պօղայ՝ ետու մօր նորա 'ի նուէր քոքոյ մի հնդիկ , պարգևեալ ինձ յայլմէ ։ և տնկեաց նա զայն յեզր աւազանին , զի որ անտի բուսեալն ծառ՝ ցուցցէ զտիս որդեկին ։ Ըստ նմին օրինակի տնկեաց անդ և Լադուր տիկին միւս այլ նովին խորհրդով 'ի ծնանել Վիրգինեայ ։ Յերկոցունց մրգաց աստի բուսան քոքենիք կրկին 'ի դիւանագիր ազ-

դարանութեան երկոցունց տոհմիցն · մի 'ի ծառոց անտի կոչէր յանուն Պօղայ , իսկ միւսն Վիրգինեայ , և ըստ աճել տղայոց տերանցն իւրեանց՝ աճէին և նոքա խուն ինչ ընդհատք 'ի միմեանց բարձրութեամբ: Այլ յետ ամաց երկոտասանից եղեն բար-ձրացան քան զհիւղս , և ուղէշքնոցա խառ-նեալ ընդ միմեանս՝ ողկոյզք քաղցրոյց երա-խայրից զանազանաւ աղբերն կախէին : Բայց 'ի ծառոց աստի չէր ինչ յաւելեալ 'ի ծոց անդր ժայռին , թողեալ զայն ինքնա-զարդ՝ որպէս էրն 'ի բնէ · ուր զխոնա-ւուտ և թխատիպ կողիւքն փայլէին ա-տեղաձև ձարխոտք լայնատերևք կանաչ և սև , և ստեղունք ֆողկենւոյ սաղարթա-ւորք կախեալ ընդ օդս հողմաշարժ ծա-ծանէին հանգոյն ծիրաներփին կանաչա-գեղ նարօտից: Մերձ առ տեղեաւն աճէին կուսածաղիկք կարմրորակ՝ ոչ աննմանք շահոգրամի , և գարապղպեղք՝ որոց պա-տիճք արիւներանգ փայլէն քան զբուստ: Ի հոտ անդյշ բուրէր զվայրջքն սրտաձև 'ի տերևս ապրաստամ, բուրէր ռահան մե-խակահոտ: Լիանք 'ի բարձունէ լերինն

կերպասաձև անկեալ 'ի կախ տատանէին, որահակս դալարագեղս զկողերւք ժայռիցն ծայրածածալս յօրինելով : Հաւք ծովայինք 'ի խաղաղաւէտ վայրացս հրաւիրեալք, գային այսր երեկօթել, և էր տեսանել ընդ երեկս ճախր առեալ զծովափամբք զճայեկն և զարտուտ, զբարձրաթռիչ ցին սևափետուր, և զհաւն սպիտակ յեղյեղակային, որք ընդ օրակշիռ աստեղն յանապատից հնդիկն ովկիանու խոյս տուեալ գային :

Սիրելի էր Վիրգինեայ հանգչել անդ առ աղբերբն, որ վայրենի զարդուքն չքեղազարդէր : Անդր ընդ հովանեաւ քօքենեացն գնայր յաճախ լուանալ զկտաւս իւրեանց, և մերթ ևս զայծերամակն ածէր արածել անդ. և 'ի գործել 'ի կաթանէ նոցին պանիր՝ զքօսնոյր 'ի զնին ճարակելոյ նոցա զձարխոտ, զի վերամբարձք ընդ օդս կային զսեւպացեալ կողերւք ժայռին, յեցեալք 'ի մի 'ի քուոց նորին իբր 'ի խարախի : Տեսեալ պատանւոյն զի հաճոյ էր վայրն այն Վիրգինեայ, ած անդր բոյնս ազգի ազգի թռչնոց 'ի շրջակայ ան-

տառաց • և հարք և մարք նոցա զհետ ձա֊
գուցն եկեալ, գաղթական նոր անդ բնա֊
կեցին ։ Վիրգինիա ջամբէր նոցա երբեք
երբեք որիզ և կորեակ և եգիպտահատ • և
ընդ երևել նորա անդ՝ սարեակք 'ի սոյլ,
պենկալք 'ի դայլայլիկս , և ծիրանահաւք
հրանշոյլ փետրովք , ելեալ 'ի մացառաց •
պապկայք կանաչագեղք 'ի գոյն զմրըխտոյ՝
իջեալ շուրջ 'ի լատանեաց , և կաքաւք ընդ֊
ոստք 'ի ներքուստ դալարեաց , խառն 'ի
խուռն 'ի միասին հանգոյն վառեկաց առ
ոտս նորա դիմէին ։ Իսկ ինքն ընդ Պօղայ
հրճուէր 'ի զնին խաղուց նոցա և ճարա֊
կելոյ և սիրատարփ համբուրից ։

Այսպէս դուք , որդեակք սիրելիք ,
յանմեղութեան զսկզբնաբոյս տիս ձեր
անցուցիք 'ի բարերարել։ Քանիցս ձեզ
աստ գիրկս արկեալ մարք ձեր օրհնէին
զՏէր , որ 'ի սփոփանս ալեաց իւրեանց
զձեզ պատրաստէր , և բարենշան զայգ
կենաց ձերոց տնօրինէր ։ Քանիցս աստա֊
նօր ընդ քուովք վիմացս եղէ հացակից
ընդ նոսին և ընդ ձեզ յանպաճոյճդ ճաշ,
ուր չէին երբեք նախճիրք կենդանեաց ։

Անդ տաշտ կաթնալից, ձու այն ինչ ածեալ, հաստեայք բրնձիք արկեալ 'ի տերևս ոստոց պանանեաց, և սակառի լի 'ի գետնախնձոր 'ի մանկ 'ի նարինջ 'ի նուռն 'ի պանան յարմաւ յանանաս մատուցանէին ճաշ՝ առողջարար, հաճոյ 'ի տեսիլ և ախորժահամ։

Հանգոյն կոչնոցն էին և զրոյցք նոցա քաղցունք և ամբիծք · զառօրեայ և զվաղորդայն վաստակոց սովոր էր Պօղ խօսել, 'ի պիտոյս ընտանեացն խորհելով հանապազ · ուրեք հեշտաքայլ յարդարել զուղիս, այլուր զբազմոցս ճահաւորել, ուր չէր բաւական ծառոց հովանի, և յորում տեղւոջ մարթէր Վիրգինեայ լաւ ևս հանգչել։ Յանձրևային եղանակս կային 'ի միասին զօրն 'ի բուն 'ի տան տեարք և ծառայք պարապեալք 'ի հիւսել փսիաթ 'ի սիզոյ և սակառս 'ի հնդիկ եղեգանց։ Էր անդ տեսանել կարգաւ առ որմովք բահս և բրիչ, կացին և մանգաղ · և առ կահս մշակութեան զարգասիս նոցին զարդիւնս երկրի, պարկս բրնձոյ, որայս ցորենոյ և լիապտուղ ոստս պանանեաց, ընդ

առատութեան և գեղեցկաշար : Իսկ Վիրգինիա , ուսեալ 'ի մօրէն և 'ի Մարգարտայ, առնէր օշարակ և այլ ըմպելիս հիւթով կիտրոնի և շաքարաքուղխ եղեգան խառնեալ :

Գիշերոյ 'ի վերայ հասեալ, բազմէին յընթրիս 'ի լոյս ճրագի • և մի 'ի տիկնայց պատմէր անցս ինչ զուղևորաց մոլորելոց 'ի գիշերի յաւազակուտ անտառս Եւրոպայ, կամ զնաւաց խորտակելոց՝ վարեալ 'ի մրրկէ 'ի քարաժայռս անբնակ կղզեաց: Եւ 'ի լուր արկածիցն յուզէին զութս մանկանցն դիւրագորովս , և խնդրէին յերկնից շնորհել ինքեանց դէպս ասպընջականելոյ զոք յայնպիսեաց : Եւ ապա մեկնեալ գնային երկաքանչիւր ընտանիք հանգչել 'ի հիւղս իւրեանց , ըղձիւք տեսանելոյ դարձեալ զմիմեանս 'ի վաղորդայն: Էր զի շառաչիւն ուղխից անձրևաց՝ որ անկանէին 'ի յարկս նոցա , և էր զի դարձեալ մրմռալ ալեաց բեկելոց զափամբք հասեալ առ նոսա 'ի թևս հողմոց , լինէին նոցա հրաւիրակք 'ի քուն • և զհեռաւոր վտանգս այլոց ածեալ զմտաւ , ևս առա-

ւել փառն անձանց իւրեանց ապահովու-
թեան օրհնէին զՏէր ։

Տիկինն Լադուր ընթեռնոյր երբեք եր-
բեք 'ի լուր ամենեցուն պատմութիւնս
գորովայոյզս 'ի հին և 'ի նոր կտակարա-
նաց. և ոչ երկարէին խօսս զսուրբ գրոց,
զի և աստուածաբանական գիտութիւն
նոցա հանգոյն բնականին 'ի զգացմունս
սրտից նոցա էր, և բարոյականն նոցա գի-
տութիւն ըստ աւետարանին 'ի գործս ։
Չէին նոցա աւուրք սահմանեալ 'ի զբօսանս
և 'ի տրտմութիւն. զօրհանապազ տօն էր
նոցա, և ամենայն ինչ զնոքօք տաճար Աս-
տուծոյ՝ ուր նկատէին միշտ հիացմամբ
զանքաւ իմաստութիւն նորա, զմարդա-
սէր խնամս և զամենակալ զօրութիւն. և
վստահութեամբն իւրեանց յաստուած-
պետութիւնն՝ սփոփէին ընդ անցեալս, ա-
րիանային յառաջիկայս, և լի յուսով ակն
ունէին հանդերձելոց ։ Այսպէս տիկնայքն
երկոքին ստիպեալք 'ի թշուառութենէ 'ի
բնութիւն անդր դարձ առնել, յաւելին
յանձինս և յորդիս իւրեանց զազդեցութիւն
նորին զգուշանալոյ 'ի թշուառութենէ ։

Բայց քանզի և 'ի բարեկրօնս յառնեն երբեմն ամպրոպք սրտի խռովայոյզք, յերևել յանկարծ ուրուք 'ի նոցանէ տխուր, շուրջ լեալ այլոց զնովաւ՝ փարատէին 'ի նմանէ զտրտմութիւն կարեկցութեամբ քան թէ խրատուք, իւրաքանչիւր ըստ բնաւոյ բարուցն օժանդակեալ. Մարգարիտ զուարթ եռանդեամբ, տիկին Լագուր քաղցր կրօնիւք, Վիրգինիա գողտարիկ գգուանօք, և Պօղ անկեղծ համարձակութեամբ. Մարիամ իսկ և Դոմինիկ հասանէին առ նա յօգնութիւն: Եթէ վշտանայր ոք, ամենեքին վշտակից լինէին նմա. և եթէ լայր, լային ընդ նմա ամենեքին. զօրէն տկար բուսակաց, որ յիրեարս յենուն 'ի մրրկի:

Ի բարեխառն եղանակս յաւուր կիւրակէի գնային 'ի Բամբլըմուս առաջիկայ լինել սրբոյ պատարագին յեկեղեցւոջ, որոյ զանգակատուն երևի խոնարհ 'ի դաշտի: Գային անդր և ճոխք դեսպակաւ. որոց տեսեալ զմտերմութիւն երկոցունց տանցն, ցանկային ընտանենալ ընդ նոսա, և հրաւիրէին զնոսա յաճախ 'ի կոչունս.

այլ նոքա վայելչութեամբ և մեծարանօք
հրաժարէին 'ի հրաւիրանացն , ածեալ
զմտաւ՝ զի մեծամեծք առ 'ի սպաս հա-
ճոյից իւրեանց խնդրեն զանաւագս , և զի
չէ մարթ հաճոյ լինել նոցա առանց սպաս
հարկանելոյ կրից նոցա բարեաց և չարաց ։
Եւ 'ի սինլքորաց ևս ընտանութենէ խոր-
շէին , որք սովոր են նախանձոտս գոլ և
բամբասող և անկիրթ ։ Վասն որոյ կիսոց
'ի սկզբան անդ երկչոտք թուէին , և այլոց
հպարտք . այլ ընդ զգուշութեան և այն-
պիսի ազնուականութիւն էր նոցա և մար-
դասիրութիւն , մանաւանդ առ թշուառս ,
զի տակաւ յանկուցին յինքեանս զմեծա-
րանս ճոխից և զաղքատաց վստահութիւն ։
Որք 'ի դառնալ նոցա յեկեղեցւոյ՝ դիմէին
առ նոսա յաճախ , խնդրել ինչ 'ի նոցանէ .
մերթ 'ի վշտակրելոց որք եկեալ առ նոսա՝
խրատս հայցէր , և մերթ 'ի մանկանց որք
շրջակայ վայրաց 'ի խօթացելոյ մօրն հրա-
ւիրէր զնոսա յայցելութիւն ։ Իսկ նոքա
'ի գնալն առ հիւանդս՝ տանէին 'ի միասին
դեղս օգտակարս ախտից յաճախելոց առ
բնակիչս տեղւոյն , և շնորհս 'ի դարմանսն

յաւելուածն, որ ցանկալի յոյժ և զգուշ-
նաքեայ ծառայութիւն կացուցանէ: Յա-
ջողէր նոցա մանաւանդ փարատել 'ի սրտէ
զվիշտս, որ 'ի միայնութեան և 'ի տկար
մարմնի դժոխըմբերք են: Լագուր տիկին
այնպիսի հաւատովք խօսէր զԱստուծոյ,
զի 'ի լուր բանից նորա Թուէր հիւանդին
տեսանել զԱստուած առընթեր. և Վիր-
գինիա բաղում անգամ տրտասուալից ա-
չօք դառնայր 'ի տուն, այլ խնդալից սըր-
տիւ՝ վասն յաջողութեանն 'ի բարերարել.
և նորա գործ էր զդեղս կարեւորս պա-
տրաստել, և մատուցանել հիւանդաց յոյժ
վայելչապէս:

Եւ յետ մարգասէր խնամոցն, էր զի
շրջան առնէր ընդ հովիտս Երկայնանիստ
լերինն՝ գային առ իս, Ճաշել յեզր վտա-
կին՝ որ առ հիւղիւս իմով անցանէ. և
պատրաստէի նոցա գինի վաղեմի, առ 'ի
զուարթացուցանել զհնդկային կոչունս
մեր եւրոպական ախորժ և կազդուրիչ
բերովք: Եւ էր զի ժամադիր լինէաք գնալ
'ի ծովեզր, ուր բերանացեալ յանգին
գետք 'ի ծով. զի չէին ինչ ընդհատ գետք

մեր աստանօր 'ի յորդ վտակաց ։ Տանէաք անդր ընդ մեզ 'ի տանէ բանջարեղէնս , յորս յաւելոյր մեզ ծով զբերան առատս · զի որսայաք անդ ձկունս ազգի ազգի , խեչեփարս , խեցեմորթս և խղնջունիս ։ Ահաւորագոյնք 'ի վայրաց ընծայէին մեզ յաճախ անդորրագոյն զբօսանս · բազմեալ երբեմն 'ի միում ուրեք 'ի ժայռից ընդ հովանեաւ ծառոյ , տեսանէաք զլեռնաձև ալիս դիմեալ յանդնդոց 'ի ստորոտ ժայռին , և անդ խորտակեալ ահեղ շառաչմամբ ։ Անդ երբեմն Պօղ , որ իբրև զմի դոգցես 'ի ձկանց հմուտ էր 'ի լող , գնալով ընդ խիճս ընդ առաջ ալեաց , 'ի մօտել նոցին խոյս տայր 'ի ծովեզր 'ի մրմռելոց և 'ի փրփրադէզ յորձանաց անտի՝ որ զկնի իւր անդր ընդ աւազուտն դիմեալ դային , մինչև Վիրգինեայ ճիչ բարձեալ գոչել · Արհաւիրս ածեն ինձ խաղքդ այդոքիկ ։

Ապա յետ ճաշուն ժամ էր նոցա երգոց և պարուց ։ Անդ Վիրգինիա զցեղջէից երջանիկ կենցաղ առնոյր 'ի նուագ , և զարկածս նաւորդաց՝ զորս ագահու-

թիւն 'ի ծոց կատաղի սարերն մղէ, փոխանակ զերկիր մշակելոյ՝ որ այնքան բարիս հեղիկ ընծեռէ: Էր զի և զօրէն հընդկաց 'ի միասին ընդ Պօղայ զբօսնոյր 'ի Ճնջկատակ, որ է նախընծայ բարբառ մարդկութեան և քաղցածանօթ ամենայն ազգաց, և այնպէս ազգոյ՝ այնպէս բնական, զի ընդ տեսանել մանկանց եւրոպացւոց զխաղալ հնդիկ մանկտւոյ՝ ուսանին զայն իսկոյն: Յիշէր Վիրգինիա զանցս գորովագոյնս 'ի պատմութեանց՝ զորս մայր իւր ընթեռնոյր, և զգլխաւորս յայնցանէ պարզ և վայելուչ յանդիման առնէր. և էր զի դարձեալ 'ի սուլ սրնգին Դոմինիկեայ 'ի դաշտ անդր դայր սափոր 'ի գլուխ, և ահ ընդ ահ 'ի մօտիկ աղբերէն մատչէր ջուր առնուլ: Իսկ Դոմինիկ և Մարիամ 'ի դէմս հովուացն Մադիամու մերժեալ զնա 'ի բաց, ոչ ներէին նմա մերձենալ յաղբիւրն. և Պօղ ժամանեալ անդր յօգնութիւն՝ վանէր զհովիւսն, և լցեալ զսափորն դնէր 'ի գլուխ նորա, պսակեալ զնա կարմրերանգ ծաղկամբք՝ որ զսպիտակ դիմաց նորա յաճախէին զփայլ:

Յայնժամ և ես 'ի դէմս հռագուելն 'ի խաղ նոյին յաւելեալ, զդուստր իմ Սեփովրա մատուցանէի Պօղայ 'ի հարսնութիւն ։

Եւ այլ երբեմն զհիքին Հռութայ յանդիման առնէր զանցս, որ յերկիր իւր դարձեալ այրի չքաւոր, վասն բազմամեայ նժդեհութեանն ընդ օտարս համարէր ։ Դոմինիկ և Մարիամ անդ զհնձողաց բերէին զդէմս, և Վիրգինիա զհետ նոցա հասկաքաղ շրջէր · իսկ Պօղ որպէս ոք յաստուածարեալ նահապետաց հարցուածս առնէր նմա · և 'ի պատասխանել նորա դողութեամբ, գթացեալ 'ի նա՝ հիւրընկալէր զանմեղն, պատսպարան լեալ հիքին · և զգոգ նորա լցեալ բարեօք, յանդիման առնէր մեզ զնա որպէս ծերակուտի քաղաքին, ասելով · Թէպէտ չքաւոր, այլ հաճոյ է դա ինձ 'ի հարսնութիւն ։ Որովք յուշ ածեալ տիկինն Լատուր ըզլքումն իւր 'ի ծնողաց և յազգականաց, զայրիանալ իւր, զհիւրընկալութիւն Մարգարտայ, և զյոյս երջանիկ հարսանեաց երկոցունց մանկանցն, չկարէր ժոյժ ունել արտասուաց · Եւ այն ամենայն դառն

յիշատակք շարժէին և զմիտ յարտասուս խնդութեան և ցաւոց ։

Եւ այնպէս ճշմարտատիպ զանցս զայսոսիկ 'ի տեսիլ ածէին, զի թուէր մեզ անդ իսկ 'ի դաշտս Ասորւոց և 'ի Պաղեստին կալ․ և խաղեաղ իսկ, և լուսաւորութիւն, և նուագարանք ըստ պատշաճի տեսարանացն ոչ պակասէին ։ Սովորական վայր տեսարանին էր 'ի կիցս ուղեաց անտառին, ուր մայրիք սաղարթախիտ կամարս զմեզք յօրինէին, և 'ի միջավայրի անդ զկայ առեալ՝ պատսպարէաք 'ի տօթոյ տուընջեան․ և իբրև արեւն խոնարհէր, ճառագայթք նորա՝ բեկբեկեալք 'ի բունս ծառոց՝ ընդ նսեմաստուեր խորս անտառին յերկայնաձիգ շուք լուսոյ ազամաղէին 'ի տեսիլ վսեմ ։ Մերթ ևս 'ի ծայր միոյ 'ի յուղեաց անխուն արփենի բոլոր երևեալ, և լուսապայծառ յարդարէր զուղին ։ Եւ քրքմատեսակ նշուլից նորա 'ի սաղարթս ծառոց 'ի վեր ցոլացեալ, երփն երփն զմրըխտոյ և տպազիոնի հրաշէկք 'ի նոցունց հարկանէին․ և կոճնոցք ծառոց մամռապատք և թխատիպք՝ թուէին սիւնք

պղնձիք փաղնջականք ։ Իսկ երամք հաւուց 'ի տերևախիտ ստուերս անդ լռիկ մնջիկ վաղ իսկ դադարեալ, զարմանային ընդ դարձ այգուն՝ ողջունելով 'ի բիւր ազգի ազգի դայլայլիկս զաստղն տուընջենային ։

Գիշեր յաճախ 'ի խրախուճս յայսոսիկ գեղջայինս մեզ 'ի վերայ հասանէր ․ այլ մեղմ և ջինջ օդք վայրացս ներէին մեզ անդ հանգչել 'ի նինջ 'ի վրանաձև խորս անտառին, առանց երկիւղի գողոց՝ ոչ անդ և ոչ առանին ։ Զի 'ի վաղիւ անդր 'ի հիւղս մեր դարձ արարեալ, իւրաքանչիւր ոք 'ի մէնջ գտանէր զիւրն զամենայն որպէս և թողեալն էր ։ Այնքան էր հաւատարմութիւն և պարզութիւն 'ի կղզւոջ աստ, ուր ոչ գոյին յայնժամ վաճառականաց յաճախ երթևեկք, զի յոլովից 'ի տանց ոչ աղխէին դրունք, և նիգք և փականք գործի նորանշան թուէին առ յոգունս 'ի գաղթականաց եւրոպացւոց՝ աստ ծնելոց ։

Էին և աւուրք տարեկանք առաւելագոյն ցնծութեան մանկանցն, տօնք անուանի մարց նոցա ։ Յայնժամ Վիրգինիա թրէր յերեկոյէ և եփէր կարկանդակս,

և տեսանէր առ աղքատս եւրոպացիս ծը-նեալս աստ՝ որոց չէր երբէք ճաշակեալ զհաց հայրենի, և որք անտես լեալ 'ի հընդ-կաց՝ մանիոկքիւ կերակրէին յանտառի· և ծանր իսկ էր նոցա աղքատութիւն, զի չէին ապուշք և անզգայք իբրև զգերիս, և ոչ արբեցեալք կրթութեամբք առ 'ի համ-բերել: Չէր մարթ Վիրգինեայ աւելի ինչ քան զայն յամպայոջ անդ պատրաստել· այլ յօժարակամ շնորհիւն մեծարգի ըն-տուրան կացուցանէր, մանաւանդ զի 'ի ձեռն Պօղայ յղէր զայնոսիկ: Իսկ որք ըն-դունէինն՝ խոստանային գալ առ Լադուր տիկին և առ Մարգարիտ, ընդ նոսա ան-ցուցանել զօր վարուքն· և ահա հասա-նէր ոք 'ի մարց, զատերք երկու կամ ե-րեք ընդ նմա եղկելիք նիհարք տժգոյնք և երկչոտք՝ որ չիշխէին զաչս 'ի վեր ա-նուլ: Վիրգինիա հանգուցանէր զնոսա, և ըմպելիս զովարարս մատուցանէր նոցա, գովելով ըստ հանդամանաց՝ որ զայնոցիկ թուէին նմա յաւելուլ զազնուութիւն, զի ասէր.· Ըմպելիս այս 'ի Մարգարտայ է խառնեալ· միւսս այս 'ի մօրէ իմմէ·

զմիրգս զայսոսիկ եղբօր իմոյ 'ի ծայրից ծառոց է քաղեալ: Ցայնժամ խնդրէր 'ի Պօղայ պարս ընդ նոսա յօրինել, և ոչ թողոյր նոցա գնալ 'ի բաց՝ չև ուտեալ զնոսա հաճ և գոհ. զի ցանկայր կցորդս խնդութեան ընտանեաց իւրոց առնել զնոսա, և առէր իսկ, զի առ 'ի հայթայթել զանձին երջանկութիւն՝ պարտ է զայլոցն խնամել: Եւ 'ի մեկնել նոցա, ստիպէր առնուլ ընդ իւրեանս որ ինչ հաճոյ էր նոցա. և համարձակէր զզգուշութիւն նոցա, պատճառանօք նորութեան և անսովոր գոյից իւրոց. և եթէ պատառոտունս էր նոցա զգեցեալ, հրամանաւ մօրն տայր Պօղոս ինչ ինչ 'ի հանդերձից իւրոց տանել դնել զայդ առ սեամս տանց նոցա, բայց մեր- նախինամ բարերարութեան թագուցեալ զձեռն բարեգործ՝ զբարիսն նեթ ցուցանելով:

Եւրոպականացդ անդստին 'ի մանկութենէ պաշարեալ միտք 'ի կարծիս եղծիչս երջանկութեան, չկարեն հաւատ ընծայել՝ զի հնար իցէ ունել ուղիղս 'ի բնէ այսուքան իմաստասիրութիւն և ընկերականս:

Միտք ձեր ամփոփեալ յանձուկ սահմանի մարդկեղէն գիտութեանց, հուպ ընդ հուպ հասանեն 'ի սպառուած հնարիմաց վայելչցն. այլ բնութեան և սրտի անսպառ են վայելք: Մանկանցն երկոցունց ոչ ժամացոյցք էին, ոչ տումարք, ոչ ժամանակագրութիւնք, և ոչ պատմական և իմաստասիրական մատեանք. այլ պարագայք կենաց նոցա բնութեանն կարգօք չափէին. զժամս տուընջեան 'ի ստուերաց ծառոց ճանաչէին, զեղանակս տարւոյ 'ի ծաղկանց և 'ի պտղոց, և զամս 'ի հնձոց և 'ի կթոց: Նոքա և ախորժ այլաբանութիւնք յաւելուին գեղեցկութիւն յոյժ 'ի խօսս նոցա. այսպէս Վիրգինիա առ իւրոն ասէր. Ժամ է արդ ճաշոյ՞, զի ըստուերք պանանեաց կարճեալ ամփոփին առ արմին իւրեանց: Մերձենայ գիշեր, զի զտերևս իւրեանց կծկեն դամոնիկք: Եւ 'ի հարցանել ուրուք 'ի դրացեաց թէ երբ գայցէ յայց, պատասխանէր. Ի կութս քաղցրիկ շաքարեղեգանց: Իսկ օրհորդքն կրկնէին. Եւ քան զայնոսիկ քաղցր և սիրելի մեզ գալուստ քոյին: Եւ 'ի հարցա-

նել ուրուք զտխս Պօղայ կամ զնորայն, պատասխանէր • Հասակակից քոքենւոյդ մեծի՝ որ զաղբերբդ կայ՝ է եղբայրն իմ, իսկ ես փոքրկանն • և կրկին վեցեակ կութք էին մանկեննեաց, և քառիցս վեց փթիթք նարնջեաց, յորմէ հետէ ես զալ եկի 'ի լոյս: Եւ կեանք նոցա, գոգցես իմն որպէս Փաւոնայցն և Դրիադից յաւերժահարսանց, 'ի ծառս անդ հաստատեալ էին • ոչ գիտէին այլ ինչ թուական՝ բայց զմայրենի կենացն, ոչ ժամանակագրութիւն այլ՝ բայց զձեռատնկոց իւրեանց, և ոչ այլ ինչ իմաստասիրութիւն՝ բայց բարեբարել ամենեցուն, և կամացն Աստուծոյ հպատակել:

Եւ զի՞նչ իսկ պէտք էին նոցա ճոխս և գիտունս ըստ մեզ լինելոյ, ուր կարօտութեամբն իւրեանց և տգիտութեամբ յաւելոյր երջանկութիւն նոցա: Զօրհանապազ օգնէին միմեանց 'ի պէտս ինչ կամ 'ի գիտութիւն • այո՝ և 'ի գիտութիւն • զի և վրիպակ ինչ 'ի գիտութիւնս նոցա եթէ խառնէր, սակայն չէր ինչ անտի արդարոց վտանգ: Ըստ այսմ օրինակի աճէին ման-

կուսնքն երկոքին դայեկեալք ՚ի բնութենէ, ոչ կնճռիւն երբէք ՚ի ճակատս նոցա անկեալ ՚ի հոգոց, ոչ յղփութեան զարիւն նոցա ապականեալ, և ոչ սիրտ նոցա յախտից զառածեալ· այլ անմեղութիւն և բարեպաշտութիւն յաւելուլին օր ըստ օրէ անճառահրաշ շնորհս ՚ի գեղեցկութիւն հոգւոյ նոցա և դիմաց և գնացից և շարժուածոց: Ի սկզբնաբոյս հասակին զառոյգութիւն տիոց լի բովանդակ յանձին բերէին, որպէս անդ ուրեմն յեդեմական դրախտին նախածնողքն մեր այն ինչ յարարչական ձեռաց ՚ի լոյս ածեալ, ակնարկեալ ՚ի միմեանս, մատուցեալ առ իրեարս, և որպէս քոյր ընդ եղբօր խօսակից լեալ: Վիրգինեա հանգոյն նախամօրն քաղցր համեստ և ընդել· իսկ Պօղ ՚ի տիպ նախահօրն ընդ առնական հասակին զպարզմտութիւն մանկական տիոց կցորդեալ:

Պատմէր ինձ Պօղ, զի ՚ի դառնալ իւրում երբեմն ՚ի վաստակոց՝ խօսէին ընդ Վիրգինեայ առանձինն, և ասէր ցնա· Տեսիլ քո հանգիստ է վաստակելումս· յորժամ ՚ի բարձուէ ակնարկեմ ՚ի քեզ ՚ի

խորս հովանս, վարդ դեռափթիթ երեխս դու ինձ 'ի ծառաստանի : Ի հիւղ մայրենի թէ զիմեալ գնաս, կերպդ քո գեղանի քան զկաքաւոյ՝ որ առ ձայն իւր զայս գեղեց-կաձնեմ, և թեթևընթաց իսկ քան զնո-լայն են ընթացք քոյին : Թէ 'ի մէջ ծա-ռոց ղօղեալ ծածկիցիս, ոչ ինչ է ինձ հարկ տեսանել զքեզ առ 'ի զիւտ քոյին · Թո-ղուս ինչ զքո անթարգմանելի ընդ հետս ուղւոյդ՝ ընդ որ անցանես, և 'ի զալարուղ՝ ուր բազմեալ հանգչիս : Թէ մատչիմ առ քեզ, յափշտակես զիս · քան զկատարու-տակն երկնից գեղեցիկ են աչկունք քոյին, ձայն քո քաղցրալուր քան զպենկալաց · և ծաղիկ մատոյն թէ 'ի քեզ հայիմ, կայ-տիռք ցնծութեան զոսկերօքս զան : Ցի-շեա զօրն զայն, յորում ընդ լափիրծ քա-րուստ գետոյ Եուաստին ծրին անցաք եր-կոքին · զի յեզր գետոյն հնար պարապա-տեալ, այլ իբրև բարձի զքեզ լուռ անձին՝ Թուէր ինձ առնուլ թեւս 'ի տիկ թռչնոյ : Աղէ դու ասա, որով հնարիւք զիս կա-խարդեցեր · եթէ հանձնարով, սակայն մայր մերոց քան զիմ և զքոյդ յաւելու

հանճար․ եթէ գգուանօք, այլ յաճախագոյն ևս քան զքեզ գգուեն նոքա զիս։ Բարութիւն սրտի քո անշուշտ է այն՝ որ զիս կախարդէ․ լիցի ինձ յիշել միշտ զայն անմոռաց՝ երբ դու բոկոտն ուղևորեցար մինչև 'ի Սեաւ գետ, խնդրել թողութիւն վասն փախստեայ թշուառ աղախնոյն։ Քոյր իմ, առ ընկալ զծաղկափթիթ ոստս կիտրոնի՝ զոր առ քեզ բերեմ հատեալ յանտառէ, դի՛ր զայդ առ մահճօք քովք 'ի գիշերի․ զխորիսխ մեղու՝ զոր բարձր 'ի վիմէն առի վասն քո՝ կեր զդա, այլ նախ հանգիր 'ի գիրկս իմ, զի քև զօրացայց։

Իսկ Վիրգինիա զայս պատասխանէր․ Ոչ այնպէս արև 'ի բարձանց ժայռից, եղբայր իմ, ընդ այգն ածէ ինձ բերկրանս՝ որպէս քոյդ տեսիլ։ Սիրեմ յոյժ զիմ մայր, սիրեմ և զքոյդ․ այլ ևս առաւել սիրեմ զնոսա յորժամ որդեկոչ լինին նոքա քեզ․ թէ գգուեն զքեզ, առաւել զգամ քան թէ ես ինձէն գգուեալ 'ի նոցունց։ Խնդրես զվասնէ՛ր սիրոյ քո առ իս․ այլ ո՞չ գիտիցես զի սննդակիցք սիրեն զմիմեանս․ տե՛ս զի և թռչունքս մեր

Համաստունք 'ի նմին բունկան՝ են իբրև զմեզ սիրելեք միմեանց • լո՛ւր լեր առ իրեարս ծառ 'ի ծառոյ ձայն տան և կըրկնեն • Հանգոյն իմն և ես , յորժամ արձագանգք զերգս սրնգի քո ածեն առ իս 'ի բարձուէ լերին , զնոցին անդրէն կրկնեմ զբարբառ 'ի խորս հովտիս : Սիրելի դու ինձ , և առաւել յոյժ յորմէ հետէ մարս ընդ առաւն գերւոյն կամէիր վասն իմ տալ անդ 'ի Սեաւ գետ • զի այնուհետև տեսեմ ցիս ստէպ • Ո՛հ զի այսպիսում թէ չէր իմ եղբօր բարւոյ վիճակեալ , վաղ իսկ յերկիւղէ 'ի մահ մատնէի : Աղօթեմ առ Տէր վասն մօր իմոյ , և վասն քոյումդ հանապազօր , և սպասաւորաց մերոց եղկելեաց • այլ յորժամ զքեզ յաղօթս իմ յիշեմ , թուի յաւելուլ եռանդն 'ի յիս • բոլորովսրտիւ խնդրեմ 'ի Տեառնէ պահպանել զքեզ յամենայն չարէ : Եւ ընդէ՞ր գնաս դու այգչափ հեռի և 'ի բարձրաբերձ վայրս 'ի քաղել միրգս ինձ և ծաղկունս • չիցե՞ն իսկ մեզ աստ հերիք 'ի դրախտիս • տե՛ս լեր աշխատեալ և ընդ քիրտն դաս : Եւ զայս ասելով սրբէր ըզ-

դէմս նորա և զճակատ սպիտակ թաշկի-
նակաւն, և համբուրէր զնա ստէպ :

Այլ յաւուրց հետէ զգայր Վիրգինիա
յանձին այլայլութիւն իմն անծանօթ . 'ի
գեղ կապուտակ աչաց նորա բիծք իբր 'ի
մարմարիոնի թխատիպք երևէին . դէմք
նորա դեղնեալ, և թալուկ զբոլոր ան-
ձամբն դայր . ոչ ևս 'ի ճակատուն միա-
հարթ պարզութիւն, և ոչ ժպիտ 'ի շըր-
թունսն երևէր . մերթ զուարթանայր ա-
ռանց ուրախութեան, և մերթ տխրէր ա-
ռանց ինչ վշտաց : Խոյս տայր յիւրոց ան-
մեղաքար խաղուցն, 'ի զուարճալի վաս-
տակոց, և յերեսաց ընտանեացն սիրե-
լեաց . շրջէր միայն առանձին 'ի վայրս ա-
մայիս շուրջ զբնակութեամբն, խնդրէր
հանգիստ, և ոչ ուրեք գտանէր : Ի տեսա-
նելն զՊօղ՝ էր զի դիմէր առ նա խայտա-
լով, և էր զի 'ի մօտելն առ նա՝ խռովէր
յանկարծ, դէմք իւր գունատեալք կար-
միրէին հրափայլ, և չիշխէր հայել հա-
մարձակ յաչս նորա : Իսկ Պօղ առ 'ի սփո-
փել զնա, ասէր . Քոյր իմ, պճնին դա-
լարագեղ ժայռք շուրջանակի, թռչունք

մեր երգեն 'ի տեսիլ քոյին, և ամենայն ինչ զուարթ է զքև, դու միայն տխուր: Եւ զայս ասացեալ՝ գիրկս արկանէր զնովաւ. այլ նորա շրջեալ զերեսս 'ի բաց, և զցողանի հարեալ, առ մայր իւր խուսէր. զի 'ի գգուանաց պատանւոյն յառնէր աղմուկ 'ի սրտի հէք օրիորդին. իսկ պատանին չկարէր հասու լինել նորանշան յեղյեղմանցն: Բայց արկածք չարեաց ոչ մեկին հասանեն:

Ամառն տօթակէզ, որ երբեք երբեք տօչորէ զմիջասահմանս երկուց յեղյեղակաց, եհաս և այսր հրդեհել զերկիր: Ի վերջ կոյս դեկտեմբերի, յորժամ արեգակն հասեալ յայծեղջիւր կշիռ զդագաթամբ կայ Կղզւոյս Գաղղիոյ՝ հրակիզելով զսա եօթնեակս երիս, դադարեաց 'ի ըսպառ հողմն հարաւոյ՝ որ զամն ողջոյն շնչէ աստանօր. և ամպրոպք փոշւոյ երկայն ընդ ուղիս 'ի վեր մբրկեալ՝ ընդ օդս կային. ամենայն ուրեք հերձոտէր երկիր, այրէր դեղ դալար, 'ի կողից լերանց սղոխք ջերաջերմք վերածխէին, և ուղխք 'ի նոսա գրեթէ 'ի սպառ էին ցամաքեալ: Ոչ ևս

ընդ ծով ամպ ինչ երևէր • բայց միայն 'ի
տուէ շողի շառագոյն անդ 'ի գաշտորայս
'ի վեր գիզացեալ, և ընդ արևմուտս որ-
պէս հրդեհաց բոցք երևէին • և գիշեր ինք-
նին ոչ մեղմէր զտապ տօթակէզ օդոց ։
Գունդ լուսնի հրակերպ և ստուարացեալ
ընդ մառախլապատ ծիրն երկնից յառ-
նէր ։ Խաշինք զգետնեալք յեմակս բլրոց,
և զպարանոց ընդ երկին ձգտեալ առ 'ի
ծուծ օդոց, 'ի տխուր բառաչ լնուին ըզ-
ձորս • և կափարատանիկն հովիւ նոցին
ընկողմնեալ յերկիր խնդրէր զովանալ •
բայց երկիր եռայր ամենայն ուրեք, և
մղձկուտ այերք հնչէին յաղօտ բզզանս
ճճեաց, որ զծարաւ իւրեանց խնդրէին
բուժել յարենէ մարդկան և չորքոտա-
նեաց ։

Ի մի 'ի հրատապ գիշերաց անտի առաւե-
լագոյն նեղեալ Վիրգինեայ, մերթ յառ-
նէր 'ի նիստ, մերթ դարձեալ անդրէն 'ի
կողմն լինէր, ոչ իւիք գտեալ ոչ քուն ոչ
հանգիստ ։ Ել ապա յաղբիւր իւր 'ի լուս-
նակի • և տեսեալ զի ջուր յերաշտի իսկ
անդ հոսէր արծաթափայլ 'ի թխատեսիլ

կողաց ժայռին , եմուտ յաւազան անդր ափնածիր 'ի խնկաւէտ բուսոց • և կենդանացան անդէն ոգիք իւր , և բխէր յիշատակք ախորժք զարթեան 'ի միտս նորա ։ Նշմարէր յալիս անդ անկեալ զստուերս երկուց քօքեննեացն համատիոց իւրեանց , որոց ուղէշք կանաչագեղք և երախայրիք 'ի համբոյր եկեալ խառնէին յիրեարս զգլխով իւրով • և մտախոհ 'ի սէր Պօղայ` որ քան զանուշահոտ բուրմունս խնկոց քաղցրագոյն էր նմա , սուրբ քան զաղբերաց ալիս , և հզօր քան զարմաւենիս գրկախառնեալս , յոգւոց եհան • խորհէր 'ի գիշերն , 'ի միայնութիւն իւր , և հուր 'ի ներքուստ տոչորէր զնա ։ Յայնժամ զարհուրեալ 'ի վտանգաւոր հովանեաց անտի և 'ի ջուրց` որ քան զարեգակն այրեցականի գօտւոյն կիզանողագոյնք էին , ել 'ի բաց ոստեաւ , դիմեաց առ մայր իւր` փախստեայ յանձնէ ։ Եւ բազում անգամ կամեցեալ յայտնել նմա զվիշտ իւր , և ուժգին զձեռանէ նորա կալեալ , այն ինչ զՊօղայ կամէր տալ զանուն` սիրտ իւր դեղանէր , Թաղանայր լեզուն • և զերեսս իւր

'ի գիրկս մօրն հանգուցեալ՝ արտասուէր ևեթ :

Իսկ տիկինն Լազուր , թէպէտ գուշակէր զպատճառս անձկութեան դստերն իւրոյ , այլ չիշխէր ինքնին խօսել զայնմանէ , խրատէր միայն զնա և ասէր · Տեառն Աստուծոյ , դստրիկ իմ , զքեզ յանձն արա · Նորա է շնորհել զառողջութիւն և զկեանս · փորձէ նա զքեզ 'ի սերկեան , առ 'ի վարձատրել զքեզ 'ի վաղիւ · յուշ լիցի քեզ զի յայս իսկ եկեալ եմք յաշխարհ , առ 'ի գործել զառաքինութիւն :

Բայց 'ի տօթոյն սաստկութենէ գօլորշի բազում յովկիական ալեաց ամբարձեալ , սաւառնէին զկղզեաւս որպէս հովանի լայնատարած · և 'ի կատարս լերանց ժողովեալ , շանթք ակօսաձև 'ի միգապատ ծայրից անտի երբէք երբէք հատանէին : Ընդ հուպ և որոտընդոստ ահագին ճայթմունք ընդ մայրիս անտառաց ընդ դաշտ և ընդ ձոր գոռմամբ հնչէին , և անկանէին յերկնից տարափք հեղեղասաստք , և ուղխք փրփրադէզք 'ի կողաց սատի լերինս գահավիժէին : Խորաձոր հովտիս ծովացեալ

'ի Ջուրց , սարահարթ բլրոյդ՝ յորում հիւղքդ կան՝ երևէր կղզեակ 'ի ծովամիջի . և սահանաբացք 'ի մուտս հովտիդ , ընդ որ խառն 'ի խուռն արտասուքս հոսէին ընդ ալեաց գոչիւն ժայռք կոճեղք և հող ։

Ահիւ և դողութեամբ յաղօթս կային ամենեքեան առ Լադուր տիկնոջ . յարկ նորա 'ի բռնութենէ հողմոց ճարճատէր զարհուրելի . և թէպէտ դրունք և պատուհանք ամրափակեալ , սակայն 'ի խիտ առ խիտ փայլատակմանց ընդ ծերպս՝ ակներև ամենայն ինչ 'ի ներքս անդ երևէր ։ Իսկ Պօղ աներկիւղ , առեալ ընդ իւր զԴոմինիկ , 'ի զայրագին մրրկի անդ գնայր հիւղ 'ի հիւղէ . ուրեք 'նեցուկ ընդ որում հաստատէր , այլուր ցից վարսէր , և առ 'ի քաջալերել ևեթ զխուրսն 'ի յոյս հանդարտելոյ հուպ ընդ հուպ օդոց՝ դառնայր առ նոսա ։ Եւ արդարև ընդ երեկս դադարեցին անձրևք , դարձաւ հողմն հարաւոյ , և ընդ արևմուտս հիւսիսոյ վարեալ ամպոց՝ ծագեաց արև մերձ 'ի մուտս իւր ։

Վիրգինեայ կամեցեալ 'ի հանգրուան իւր նախ այց առնել , մատեաւ առ նա

Պօղ կասկածագին՝ աջ տալ Նմա 'ի գնացս․ և Նորա ընկալեալ զուարթագին զաջ պատանւոյն, ելին երկոքեան 'ի միասին 'ի տանէ։ Ջով էին օդք և պարզ․ ամպք սպիտակք վերանային 'ի գագաթանէ լերինդ, ուր ուղխիցն դադարելոց փրփուրք աղամողք աստ անդ երևէին։ Իսկ պարտէզն եղծեալ 'ի սպառ յահագին հեղեղայց, յոլովք 'ի պտղաբեր ծառոց խլեալ արմատաքի, և աւազակոյտք ծածկէին շուրջանակի զարօտս, լիր արկեալ և յաւազան անդր։ Բայց քոքենիքն երկոքին կային դալարագեղք, ոչ արօտք զնոքօք, ոչ հովանիք, և ոչ Թռչունք․ սլենկալք ևեթ ոմանք 'ի ծայրս շրջակայ ժայռից զկորուստ ձագուցն եղերերգէին։

Զայն ամենայն խուժան աւերանաց տեսեալ Վիրգինեայ, ասէ ցՊօղ․ Թռչունքդ ածեալք 'ի քէն այսր՝ ահա ապաւեալք 'ի մրրկէ, պարտէզդ քոյինատունկ ահա ապականեալ․ ամենայն ինչ եղծանելի ընդ երկնաւ, երկինք ևեթ կան և մնան։ Պատասխանի ետ Պօղ․ Աւա՜ղ զի չունիմ ինչ յերկնաւորաց տալ քեզ, չիք ինչ իմ և.

յերկրի աստ ։ Յայնժամ Վիրգինիա պատկառանօք ասէ ․ Բայց սրբոյն Պօղայ է առ քեզ պատկեր ։ Իսկոյն դիմեաց Պօղ 'ի տուն առ 'ի բերել զայն ․ և էր պատկերն մանրանկար սրբոյ Ճգնաւորին` որում ջերմեռանդն էր Մարգարիտ ․ և զպատկեր նորա կրեալ յանձին զամս բազումս 'ի կուսութենէ իւրմէ , ապա 'ի ծնանել մանկանն` զպարանոցէ նորա կախեալ էր զայն ։ Դարձեալ զի և 'ի ժամանակի յղութեանն յորժամ լքեալն էր յամենեցունց , 'ի ստէպ հայելոյ 'ի պատկերն` նմանութիւն իմն նորին 'ի դէմս մանկանն էր տպաւորեալ ․ և այսոցիկ աղագաւ յանուն սրբոյն կոչեցեալ զմանուկն , պաշտպան նորին ունէր զկենցաղավարեալն հեռի 'ի մարդկանէ` յորոց խարդաւանեալն էր և թողեալ ։ Զայն պատկեր փոքրիկ ընկալեալ Վիրգինեայ 'ի ձեռանէ պատանւոյն , հեղձամղձուկ ձայնիւ ասէ ․ Կալայց զսա միշտ առ իս , մինչև իցեմ կենդանի ․ և ոչ մոռացայց , եղբայր իմ, զի ետուր ինձ զամենայն որ ինչ էր քո յաշխարհի ։ Յայնժամ Պօղ , 'ի տեսանել

զայն առհաւատչեայ սիրոյ և զանակնկալ պարգև նորա 'ի գութ և յընտանութիւն, կամէր գիրկս արկանել նմա․ այլ նա հան-դիսաւորաբար թռչնոյ 'ի բաց արտացաւ, և ե-կաց միայն Պօղ ապշեալ՝ ոչ կարելով 'ի վերայ կալ նորանշան գնացից նորա ։

Բայց Մարգարիտ ասէր ցտիկինն Լա-դուր․ Ընդէ՞ր չամուսնացուցանեմք զոր-դեակս մեր՝ որ այսպէս խանդակաթք են 'ի սէր միմեանց, թէպէտ և իմոյս չէ ևս իրազեկ լեալ․ 'ի բարբառել առ նա բնու-թեանն՝ 'ի զուր լիցի մեզ այնուհետև հս-կել 'ի վերայ նոցա, ամենուստ յայտնեալ հասցէ վտանգ ։ Իսկ Լադուր տիկին պա-տասխանէր․ Դեռ ես մանկահասակք են և չքաւոր․ չիցե՞ն իսկ տղէտք, որդեակս 'ի լոյս ածել 'ի թշուառութիւն՝ չկարե-լով խնամել զնոսա․ Դոմինիկ անկեալ է յուժոյ, և Մարիամ հիւանդագին․ իսկ ես, քոյր իմ, 'ի հնգետասան ամաց և այսր յոյժ ակարացեալ եմ․ 'ի տօթագին նահանգս արագ հասանէ ծերութիւն, և արգգագոյն 'ի հոգս ։ Միակ յոյս մեր՝ է 'ի Պօղ․ թողցուք նմա զօրանալ 'ի տիս,

զի կարասցէ վաստակօք իւրովք հայթայթել զկեանս մեր : Գիտես իսկ զի չիք մեր աւելի քան զաւօրեայ պարէն․ եթէ յղեսցուք զՊօղ առ ժամանակ մի 'ի Հնդիկս, շահեսցի վաճառականութեամբ բաւական առ 'ի գնել գերիս ոմանս․ և ապա 'ի դառնալ նորա այսրէն՝ հարսնացուսցուք նմա զՎիրգինէա․ քանզի հաստատեալ գիտեմ, զի ոչ ոք բաց 'ի նմանէ կարասցէ զդստերն իմոյ յարգարել զերջանկութիւն : Հարցցուք և զդրացին մեր զայսմանէ :

Նա արդարև հարցին զնա տիկնայքն երկոքին, և ես հաւանեալ նոցա՝ ասեմ․ Հանդարտք են ծովք Հնդկայինք, և 'ի դէպ ժամանակի աստի 'ի Հնդիկս ուղևորելոյ բաւեն եօթնեակք վեց, վեց ևս 'ի դարձ․ հայթայթեսցուք պատանւոյն վաճառս ինչ ընդ գրայիս, զի սիրելի յոյժ է նոցա : Եթէ բամբակ իսկ անգործ տացուք նմա, որ առ 'ի չգոյէ աստ գործեաց՝ չէ ինչ մեզ պիտանացու, և տախտակ՝ զոր առ յոյժ առատութեան վարեմք 'ի խարոյկ, և խէժս ազգի ազգի՝ որ վաճառին

յանտանս մեր , վաճառեսցին շահաւէտութեամբ 'ի Հնդիկս՝ որ աստ անպիտանքն են մեզ ։

Վասն որոյ յանձն առի խնդրել վասն նորա 'ի քաղաքապետէն հրաման նաւարկելոյ , բայց չև խնդրեալ՝ խորհեցայ խօսել զայնմանէ ընդ պատանւոյն ․ այլ հիացեալ զարմացայ 'ի լսել զպատասխանի նորա լի իմաստութեամբ գեր 'ի վերոյ հասակին ․ զի ասէր ․ Եւ ընդէ՞ր իցէ ինձ թողուլ զընտանիս իմ առ յոյս շահու , և ո՞ր այն շահավաճառ որպէս զգործել զերկիր՝ որ բերէ ընդ միոյ յիսուն և հարիւր ։ Եթէ տուրևառից կամք իցեն , զաւելորդս մեր ածեալ 'ի քաղաք վաճառեսցուք , և չիցէ ինձ հարկ տարադէմ գնալոյ 'ի Հնդիկս ։ Եթէ ծերացեալ է Դոմինիկ և անկեալ յուժոյ , որպէս մարքն մեր ասեն , այլ ես մանուկ եմ , և յաւելում օր ըստ օրէ 'ի կորով ։ Իսկ զի՞նչ եթէ արկածք ինչ 'ի հեռաւորութեան իմում հասցեն նոցա , մանաւանդ Վիրգինեայ՝ որ հիւանդագին իսկ է ։ Ո՛հ , մի՛ , չկարեմ թողուլ զնոսա ։

Այս բանք նորա արկին զիս 'ի տագ-

նապ • զի Ղազուր տիկնոջ յայտնեալ էր ինձ զկիրս դստեր իւրոյ , վասն որոյ ցանկայր մեկնել զմանկունսն 'ի միմեանց մինչև այլ ևս ամք ինչ 'ի տիս նոցա յաւելուին • այլ զայսցանէ ակնարկել իսկ Պօղայ չէր օրէն ։ Յայնմ վայրի նաև 'ի Գաղղիոյ հասեալ, եբեր գիր առ Ղազուր տիկին 'ի հօրաքեռէ իւրմէ ։ Յարհաւրաց մահու , որ միայն ազդէն 'ի խստասիրտս , հարեալ էր սիրտ նորա • մազապուր 'ի մահացու հիւանդութենէ , որոյ թողեալ էր 'ի նմա տխուր մաշարայական՝ անբժշկելի յայնմ հասակի , պատուիրէր եղբօրորդւոյ իւրում 'ի թղթին՝ դառնալ 'ի Գաղղիա • իսկ եթէ տկարութիւն չներէր նմա զերկայն ուղևորութիւնն , յղել անդր զՎիրգինիա • որպէս զի տուեալ զօրիորդն յազնուական դաստիարակութիւն՝ հարսնացուսցէ ապա զնա ումեք յարքունիս , և ժառանգ զնա ամենայն ընչից իւրոց կացուսցէ , գթացեալ անդրէն 'ի նոսա՝ եթէ միայն լուիցեն հրամանաց իւրոց ։

Ընթեռնուլ գրոյն 'ի լուր ընտանեաց՝ լցան ամենեքին տրտմութեամբ , և Դո-

մինիկ և Մարիամ սկսան լալ. Պօղ յա-
պուշ հարեալ կայր՝ կերպ 'ի զայրոյթ.
Վիրգինեա 'ի մայր իւր անկեալ՝ չիշ-
խէր ասել ինչ ։ Ցաւաջեալ յամենեցունց
Մարգարիտ ասէ ցԼադուր տիկին. Եւ
կարիցես թողուլ զմեզ և գնալ 'ի բաց ։ Եւ
նա ասէ. Քաւ լիցի ինձ, քոյր իմ. քաւ
լիցի, որդեակք իմ. ոչ թողից զձեզ. կե-
ցի ընդ ձեզ, և ընդ ձեզ մեռայց. 'ի սէր
ևեթ ձեր ծանեայ զբարերարութիւն ։
Վիշտք մանկութեան իմոյ տկարացուցին
զիս. խստութիւն ծնողաց իմոց և մահ սի-
րելւոյ առն իմոյ հարին զիս կարեվէր 'ի
սիրտ. այլ ապա յաղքատին հիւղկս գտի
ձեօք մխիթարանս և երջանկութիւն, որպի-
սի չէր ինձ յուսալ 'ի հայրենիս իմ 'ի ճո-
խութեան ազգատոհմիս ։ Արտասուս խըն-
դութեան հեղին ամենեքին ընդ բանս
տիկնոջն. և Պօղ անկեալ զպարանոցա-
նորա, ասէ. Եւ ոչ ես թողից զքեզ, ոչ
երթայց 'ի Հնդիկս. վասն քո, մայրիկ,
վաստակեսցուք աստ ամենեքին, և մի՛ պա-
կասեսցէ ինչ քեզ ։ Այլ որ յամենեցունց
անտի առաւել հրճուեալ, և նուազ քան

զամենեսին զհրճուանս իւր յայտնէրն , էր ինքն Վիրգինիա ․ որ և զօրն զայն ողջոյն քաղցր զուարթութեամբն առատ լնուին ցնծութեան հասարակաց ընդ համդարտել իւր անդրէն ։

Ի վաղիւ անդր 'ի ծագել արեգական , այն ինչ նոցա զառաւօտին օրհնաւոր աղօթսն յառաջ քան զնախաճաշ 'ի միասին կատարեալ , ազդ արար Դոմինիկ զի հեծեալ ոք երկոքումբք սարկօք հասեալ գայր , և էր նա ինքն քաղաքապետն Պուրտոնէ ։ Որոյ մտեալ 'ի հիւղ անդր , եգիտ բազմեալ զամենեսին 'ի սեղան , և Վիրգինեայ ըստ սովորութեան տեղւոյս պաշտեալ նոցա խահուէ , որիզ խաշեալ , գետնախնձոր ջերմաջերմ , և պանան դալար ․ իսկ անօթք սեղանոյ էին կեղևք դդմենիք կիսակտուրք , և սաղարթք պանանեաց 'ի ծածկոց ։ Զարմացաւ քաղաքապետն ընդ աղքատին բնակութիւն նոցա , և ապա դարձեալ առ Լագուր տիկին ասէ ․ Հոգք հասարակաց չներեն ինձ խորհել 'ի խնամս իւրաքանչիւրոց ․ այլ զքէն պարտ է ինձ խորհել , տիկին ․ հօրաքոյր

քո 'ի Բարիզ կամի Թողուլ քեզ զժառան-
գութիւն իւր , և մնայ գնալոյ քո առ նա ։
Պատասխանի ետ տիկինն . Տկարութիւն
իմ չներէ ինձ զերկայն ուղևորութիւնն ։
Ցաւել քաղաքապետն . Այլ գոնեա ընդ-
դուստր քո յղեսջիր զօրիորդն սիրելի ,
չէ արժան քեզ անիրաւել և զրկել զնա
'ի փարթամ ժառանգութենէն ։ գիտաս-
ջիր զի հօրաքոյր քո 'ի ձեռն պետութեան
տացէ ածել զնա առ իւր . ինձ իսկ հրա-
ման է 'ի պետութենէ՝ զամենայն իշխա-
նութիւն 'ի կիր արկանել առ այս , եթէ
պէտք լիցին ։ Այլ քանզի յերջանկութիւն
ևեթ գաղթականացս կամք են ինձ վա-
րել իշխանութեամբս , ակն ունիմ զի քե-
զէն յօժարեսցիս համբերութիւն յանձն
առնուլ առ ժամանակ մի , վասն յաջո-
ղութեան հարսանեաց դստեր քո և քումդ
բարեկենդանութեան ։ Ընդէ՞ր յաճախեն
բազումք 'ի կղզիս յայսոսիկ , ո՞չ ապաքէն
'ի խնդիր մեծութեանց . իսկ արդ ո՞չ լաւ
ևս իցէ գտանել զայն 'ի բնիկ աշխարհին ։
Եւ զայս ասացեալ , եդ 'ի վերայ սեղա-
նոյն պարկ մի մեծ արծաթոյ՝ զոր մի 'ի

հնդկաց բարձեալբերէր, և յաւել․ Զայս ՚ի հանդերձանս ուղևորութեան օրիորդին հօրաքրոյր քո յղէ։ Եւ ապա աղերսական յանդիմանութեամբ կատարեաց զբանսն, թէ ընդէր տիկնոջն ՚ի կարօտութեան խուրում չէր դիմեալ առ նա, բայց և զվեհանձն ազնուականութիւն նորա գովելով։ Յայնժամ Պօղ ՚ի վեր վազեալ, ասէ․ Դիմեաց իսկ մայրն իմ առ քեզ․ այլ դու, տէր իմ, ՚ի վեր ՚ի վերոյ ընկալար զնա։ Ասէ քաղաքապետն ցտիկինն․ Է քո ուրեմն և այլ որդի։ Տիկինն ասէ․ Ոչ, այլ որդի սիրելոյն իմոյ է դա․ բայց երկոցունցս իսկ են մանկունք երկոքին, հաւասար սիրելիք։ Եւ դարձեալ քաղաքապետն ասէ ցՊօղ․ Յառնուլ քո զփորձ իրաց կենցաղոյս, պատանի դու, ծանիցես յայնժամ զթշուառութիւն աւագանւոյ՝ որպէս դիւրին է պղտորել զմիտս նոցա, և որպէս դիւրաւ է նոցա չարոյ մասին վարկանել զաներևոյթ բարւոյն մասանս։ Եւ հրաժարեալ ՚ի տիկնոջէն, բազմեցաւ առ նմա ՚ի սեղան՝ ճաշակել ըստ սովորութեան գաղթականացն եւրոպացւոց

խնաճոյէ և՞ որից խարշեալ։ Եւ զարմանայր ընդ բարեկարգութիւն և ընդ մաքրութիւն տնակին, ընդ միաբանութիւն երկոցունց սիրելի ընտանեացն, ընդ տիրասիրութիւն սպասաւորացն ծերունեաց, և ասէր․ Աստանօր փայտակերտ են կահք, այլ դէմք զուարթք և սիրտք ոսկեղինիկք։ Ցայնժամ Պօղ յընտանութենէ քաղաքապետին յորդորեալ 'ի սէր, ասէ․ Ցանկալի է ինձ բարեկամութիւն քո, զի այր բարի ես դու։ Եւ Պուրտոնեայ ախորժեալ ընդ պարզմտութիւն նորա, գիրկս էարկ նմա, և վաղ տուեալ վստահացոյց զնա 'ի բարեկամութիւն իւր։

Այսպէս յարուցեալ 'ի սեղանոյ՝ կոչեաց մեկուսի զտիկինն, և ասէ․ Է իսկ նաւ պատրաստական 'ի ջուր, դէպ ժամանակ է քեզ յուղարկելոյ զդուստր քո 'ի Գաղղիա․ յանձնեցից զնա տիկնոջ ումեմն ազգականի իմում, որ նաւարկէ անդր․ մի՛ անփոյթ առներ զբարեկենդանութիւն առ սակաւ ամաց անձկութեան։ Եւ 'ի հրաժարելն յաւելու․ Ոչ աւելի քան զերկեամ մի կարասցէ, հօրաքոյր քո կեալ,

ըստ գրելոյ բարեկամաց նորա առ իս․ քաջ խորհեսջիր, ոչ հանապազ առ ձեռին կայ բախտ․ հարց և զայլս, ոչ ոք յողջամտաց այլազգ դատեսցի։ Պատասխանի ետ տիկինն և ասէ․ Ինձ այսուհետև չիք ինչ ցանկալի ՚ի կենցաղումս, բայց բարօրութիւն դստերն իմոյ․ թողից ՚ի հաճոյս նորա եթէ կամիցի գնալ։

Բայց չէր ինչ նմա անհաճոյ՝ բաժանել այնու պատեհաւ զմանկունսն ՚ի միմեանց առ ժամանակ մի, վասն առյապա բարեբաստութեան նոցա․ վասն որոյ առեալ զդուստրն առանձինն, ասէ․ Դստրիկ իմ, ծառայք մեր ծերացեալ են, Պօղ չև ևս ՚ի տիս հասեալ, Մարգարիտ զերիտասարդական տիովք անցեալ, իսկ ես այժմէն իսկ հիւանդագին․ եթէ հասցէ ինձ մեռանել, զի՞նչ արասցես յանապատի աստ անտէրունչ և չքաւոր․ հարկ լիցի քեզ իբրև զմի ՚ի վարձկանաց գործել միշտ զերկիր առ ՚ի կեալ․ տագնապէ զիս, դստրիկ իմ, այս հոգ։ Պատասխանի ետ Վիրգինիա և ասէ․ Ի վաստակս զմեզ դատապարտեաց Աստուած, և դու ինքնին ուսուցեր ինձ

վաստակել և օրհնել զնա հանապազ․ մին-
չև ցայժմ չեթող նա զմեզ 'ի ձեռանէ, ոչ
և ս թողցէ այսուհետև․ խնամք նորա հըս-
կեն մանաւանդ 'ի վերայ տառապելոց․
զայս այսպէս ասէիր դու ինձ ստէպ, մայր
իմ․ քաւ լիցի ինձ մեկնել 'ի քէն ։ Ցուցե-
ցան գութք մօրն, և ասէ․ Ոչ խնդրեմ այլ
ինչ՝ բայց զբարօրութիւն քո, առ 'ի հարս-
նացուցանել զքեզ յաւուր միում ընդ Պօ-
ղայ․ զի ոչ է նա եղբայր քոյին․ խորհեաց
արդ, 'ի քեզ է ապաստան բաղդ նորա ։

Օրիորդ տարփաւոր համարի զսէր իւր
զանխուլ 'ի մարդկանէ, 'ի քօղ սրտին
ծածկէ նա և զաչս իւր․ այլ 'ի բառնալ
զայն բարեբար ձեռին, վիշտք սիրոյն ծած-
կեալք ընդ նովաւ՝ խուժեն արտաքս իբր
ընդ բացուած աւհանաց, և մտերմական
քաղցր զեղմունք սրտի յաջորդեն լռու-
թեան և գաղտնեաց՝ յորոց շուրջ պաշա-
րեալն էր ։ Վիրգինիա յորդորեալ 'ի նո-
րոց աստի հաւաստեաց մայրենի գթոյն,
եբաց մօր իւրում զսիրտ իւր, պատմեաց
նմա զպատերազմունս իւր ներքինս, և
յաւել․ Սրտագէտն եւեթ Աստուած գի-

տէ որ ինչ իմ ճգունս կրեալ, և զնորին խնամս տեսանեմ՚ի գուԹ քոյին մայրենի, որ հաձեալ ընդ յօժարուԹիւն իմ՝ ուղղէ զայն խրատիւք ։ ՚ի քեզ արդ կամ ապաստան, ամենայն ինչ հարկ առնէ ինձ կալ մնալ ընդ քեզ, զայժմուցս ոչ ինչ հոգացեալ, և անկասկած զապագայից ։ Եւ տեսեալ տիկնոջն զի հակառակ ակնկալուԹեան իւրոյ եղև արգելուԹիւն մտերմական բանիցն իւրոց ՚ի սիրտ դստերն, ասէ ։ Չկամիմ, դուստր իմ, բռնադատել զքեզ, խորհեսջիր պարապով, այլ մի ըղտարփանս քո յայտներ Պօղայ ։ զի պատանւոյ զսիրտ օրիորդի յափշտակեալ, ոչ ևս ինչ այլ խնդրէ ՚ի նմանէ ։

Բայց ընդ երեկս յորժամ տիկինն կայր ընդ դստեր իւրում առանձինն, եմուտ ՚ի ներքս այր ոմն անծանեայ, զգեցեալ աղձգնաւոր կապուտակ ։ և էր նա առաքելական երէց կղզւոյն, խոստովանահայր տիկնոջն և դստեր նորա, և գայր առ նոսա ՚ի քաղաքապետէն ։ Եւ ՚ի մտանելն իւրում ասէ ։ Օրհնեալ է Աստուած, ահա մեծացարուք որդեակք իմ, կարէք այսուհետև

ըստ բարութեան սրտի ձերոյ սփոփել զաղքատս ։ Գիտեմ որ ինչ Գուրտոնէ խօսեցաւն ընդ ձեզ, և որ ինչ պատասխանեցէքդ · քեզ, տիկին մայր, տկարութիւն հարկ առնէ մնալ աստէն · իսկ քեզ, դուստր սիրելի, չէք ինչ արգել · հնազանդել պարտ է Աստուծոյ, և ազգականացդ ծերունեաց՝ ևս և անիրաւելոց ։ Ծանր իցէ քեզ այդ, այլ Աստուած է՝ որ հրամայէն · Նա զանձն իւր ետ վասն մեր, և քեզ ըստ օրինակի նորա պարտ է դնել զանձն յօգուտ աղքատոհմիդ ։ Ուղևորութեան քո 'ի Գաղղիա պատրաստ կան· ելք բարեբաստիկ, և չկամիցիս երթալ անդր, դուստր սիրելի ։

Վիրգինիա խոնարհեալ զաչս իւր դողութեամբ և արտասուօք ետ պատասխանի · Եթէ այդպէս հրամայէ Տէր, առասիկ կամ, եղիցին կամք Տեառն ։ Իսկ երէցն ել գնաց պատմել քաղաքապետին զելս գործոյն, յոր առաքեալն էր ։ Բայց տիկինն Լադուր կոչեաց զիս 'ի ձեռն Դոմինիկեայ, հարցանել վասն ուղևորութեան դստերն · և ոչ բնաւ հաւանեցայ ընդ երթ նորին ։ Զի բարեկենդանութեան օրէնք

անխախտ այն ինձ թուի, նախամեծար առ-
նել ձրից բախտին զշնորհս բնութեան, և
մի խնդրել արտաքոյ զոր առ մեզս կարեմք
գտանել. ոչ ինչ յօրինաց ատուի 'ի բաց ա-
ռեալ։ Այլ զի՞նչ զօրէին խրատք զգու-
շութեան ընդդէմ հրապուրանաց մեծու-
թեան, զի՞նչ և փաստք բանականք ընդ-
դէմ մտահաճութեան ընդ վրիպակ խրատս
երիցուն։ Տիկինն Լադուր առ ակնածու-
թեան ևեթ հարցանէր զիս, ոչ ևս յեր-
կուացեալ ընդ երթ դստերն յետ վճռոյ
խոստովանահօրն։ Մարգարիտ իսկ, որ
առանց խնդրելոյ զշահ որդեկին 'ի բարե-
բաղդութենէ Վիրգինեայ՝ հակառակ կա-
ցեալն էր մեկնելոյ նորա, ոչ ևս ընդդէմ
եկաց։ Իսկ Պօղ անգէտ ամենայնի, զար-
մանայր ընդ գաղտ խօսակցութիւն Լա-
դուր տիկնոջ ընդ դստեր իւրում, և լի
տխրութեամբ խորհէր 'ի մտի՝ զի 'ի ծա-
ծուկ ինչ ընդդէմ իւր նիւթէին։

Այդ եղև 'ի կղզւոջ աստ՝ բախտին 'ի
Ժայռս յայտոսիկ այցելութիւն, և վաճա-
ռականք ազգի ազգի տարազուց այսր դի-
մեալ՝ ընդ աղքատին տաղաւարօքս պար-

ղէին դիպակս հնդկաստանեայս մեծագինս, կերպասս կուտալուբացիս, Թաշկինակս գործեալս 'ի Բալխադադ և 'ի Մաղխլիբադան. շղարշս 'ի Տաքայ, որ պարզս, որ գծանիշս, որ կիտուածոյս և որ հանգոյն լուսոյ Թափանցիկս. կտաւս 'ի Սուրադէ սպիտակափայլս, պաստառս երփնագոյն և չքնաղ՝ ոսոս կանաչագեղ 'ի կիտանիշ ենթակայս բերելով։ Բամբակին տարածանեկին կերպասս Ճենացիս չքեղս՝ անկուած ծակոտկէն. դիպակս դամասկացիս, որ սպիտակ փայլուն, որ կանաչ գալարագեղ, և որ կարմիր ակնախտիղ. բեհեզս վարդագոյնս, մետաքսեայս կըրկնավերտս, փեքինս՝ համագոյն ատուեայց փոփուկս, նանքինս Ճերմակ և դեղին, և սփածանելիս իսկ 'ի Մատակապարէ։

Տիկինն Լադուր հրաման ետ դստեր իւրում՝ առնուլ անտի որ ինչ հաճոյ էր նմա, գնոցն ևեթ և ընտրութեան վաճառացն ինքնին զգուշացեալ՝ թէ գուցէ 'ի վաճառականացն խաբեսցի։ Եւ ընտրեաց Վիրգինիա որ ինչ մօր իւրում և Մարգարտայ և Պօղայ ախորժ համարէր, և որ

ինչ 'ի կառս տանն և 'ի պէտս Մարեմայ և Դոմինիկեայ պատկանաւոր, մինչև սպառեաց արծաթ 'ի պարկին՝ չև նորա առեալ ինչ 'ի պէտս իւր. որպէս զի հարկ եղև ամենեցուն հանել նմա մասն յորոց ընծայեալն էր նոցա: Ի պարգևաց անտի գուշակեալ Գօղայ զչու օրիորդին, ընկղմեալ կայր 'ի խոր տրտմութիւն. և յետ աւուրց եկեալ առ իս, և կարեվէր սրտիւ ասէ. Քոյր իմ գնայ, քոյր իմ անհամ հանգերձի 'ի չու. աղաչեմ զքեզ, եկ առ մեզ, և 'ի շնորհս բարեկամութեանդ քո հաւանեցո զմայր նորա և զիս՝ չթողուլ զնա: Գիտէի իսկ զի ընդունայն էին բանք իմ, այլ զիջայ յաղաչանս պատանւոյն:

Վիրգինիա, որ գեղեցիկն էր ինձ յոյժ՝ կասու պէնկալացի կապուտակ արկեալ զանձամբ, և Թաշկինակ կարմիր զգլխով, գերաշխարհիկ իմն Թուեցաւ ինձ յայնժամ զարդարեալ 'ի ձևս տիկնայց երկրիս, և զգեցեալ շղարշ սպիտակ 'ի բեհեզ վարդագոյն պատեալ 'ի ներքուստ: Հասակ նուրբ և բարձրագլուխ ընդ բաճկոնակաւն 'ի վեր երևեալ, և վարսք դեղձա-

նիկէք զկուսականն գլուխ պատէին գե-ղայօրէն 'ի հիւսակս կրկէն · աչք իւր կա-պուտակք լցեալ տխրութեամբ, և սիրտ յուզեալ 'ի կրից՝ ընդ որում պատերազ-մէրն, յաւելուին 'ի դէմս նորա գոյն կեն-դանատիպ, և 'ի բարբառ նորա յեղուածս խանդաղատելի · դժկամակութիւն իսկ նո-րա ընդ շքեղ զարդս՝ զորս կրէրն՝ աղէո-ղորմ եւ զմորմոք սրտի նորա գործէին · որպէս զի չէր հնար ումեք տեսանել զնա և զբարբառ նորա լսել առանց գորովելոյ · որով և ես յաւելոյր Պօղ 'ի տրտմութիւն ։

Յայնժամ Մարգարիտ աղէկիզեալ ընդ կերս որդեկին, ասէ ցնա առանձինն · Ըն-դէր իցէ ինձ, որդեակ իմ, Թարթափե-ցուցանել զքեզ 'ի յոյս անտոի՝ որ դառ-նագոյն ես քեզ զզրկումն քո կացուցա-նեն · Ժամ է յայտնելոյ քեզ զգաղտնիս կենաց քոց և զիմոց ։ Օրիորդն Լադուր Ճոխ և ազնուական է 'ի մօրէ · իսկ դու աղքատ և շինական, և ոչ իսկ հարա-զատ որդի ։ Ընդ այս բան մօրն զարմա-ցեալ յոյժ պատանւոյն, զի անծանօթ էր նմա այն խորհ զանազանութեան, եհարց

ցմայր իւր զիմաստս բանին : Իսկ նա ասէ · Չէ քո հայր օրհնաւոր · սէր վրիպագութ՝ մինչ օրիորդն էի՝ գթեցոյց զիս, և եղէ քեզ մայր · յանցանք իմ զրկեցին ըզքեզ 'ի հայրենի ազգականաց, և սորջանք իմ 'ի մայրենեաց · չիք քո ազգական, տառապեալ որդեակ, բաց յինէն : Եւ զայս ասացեալ, սկսաւ լալ · իսկ Պօղ դրկալեր զեղեալ զնովաւ, ասէ · Մայրիկ իմ, և զի չիք ոք իմ ազգական բաց 'ի քէն, առաւել ևս սիրեցից զքեզ · այլ որպիսմ՛ ինչ գաղտնիս յայտնեցեր դու ինձ · այժմ խելամուտ լինիմ թէ ընդէր Վիրգինիա յերկամսեայ աւուրց հետէ ուծանայ յինէն, և խորհի իսկ արդ 'ի չու · ո՜հ զի չհամարի արդեօք նա զիս իւր արժանի :

Մինչ այս մինչ այն՝ եղև ժամ ընթրեաց, և նստան 'ի սեղան · այլ իւրաքանչիւր ոք յայլ և այլ կրից յուզեալ, սակաւ ինչ ճաշակեցին լուռ և անբարբառ : Վիրգինիա կանխեալ յարուցեալ 'ի սեղանոյ, նստաւ աստ՝ ուր կամքս · զհետ նորա յարեաւ և Պօղ, և անցեալ առ նմա բազմեցաւ, և լուռ նեթ կային առ վայր մի եր-

կաղքանչիւր ։ Այն գիշեր մի յայնցանէ էր, որ ընդ կրկին յեղյեղակս սովորակի պատահեն, զուարճալի յոյժ՝ զորոյ չէ մարթ ձեռին ճարտարի ածել զգեղ 'ի նկար ։ Ի բարձունս երկնից կայր լուսին սքօղեալ ամպովք՝ որ տակաւ 'ի ճառագայթից նորա փարատէին, և զաղօտաղջամ լոյս իւր ծագէր ընդ լերինս՝ որոց սարք գալարագեղք փայլէին արծաթազօծք ։ Լռէին հողմք, և ընդ անտառս և ընդ ծործորս և ընդ կատարս ժայռից լսելի լինէին ճռուողել ձագուց և քաղցր մրմունջ գըրգալոյ թռչնոց 'ի բոյնս իւրեանց, զուարճացելոց 'ի հողմախաղաղ պայծառ գիշերոյն ․ և քնաւ իսկ շունչ, մինչև 'ի ճճին, բզզայր խլրտեալ անդ ընդ գալարեօք ։ Աստեղք 'ի կամարն երկնից շողշողեալ՝ ճառագայթարձակք 'ի ծուփս ծովուն, և պատկերք նոցին դողդոջք 'ի յալեաց անդրէն ցոլային ։

Ցայնժամ Վիրգինեայ զաչս շուրջ ածեալ ընդ լայն և ընդ նսեմ ոլորտս ծովուն՝ որ շառագոյն հրատիւք ձկնորսացն որոշէր յափանց կղզւոյն, եսես 'ի մուտս

անդնաւահանգստին լոյս ստուերախառն. և այն էր լապտեր և ողնափայտ նաւուն՝ որ հանդերձեալն էր ածել զնա ի Նուրոպա, կազմ և պատրաստ 'ի շնչել հողմոյ՝ խարիսխս 'ի վեր առնուլ, պարզել զառագաստս: Խռովեցաւ օրիորդն, և դարձոյց զաչս իւր 'ի բաց, թագուցանել զարտասուս իւր 'ի պատանւոյն: Փոքր մի 'ի բացէ բազմէաք և մեք անդ ընդ պատանեօք, տիկնայքն երկոքին և ես. և 'ի լռութեան գիշերոյ լսէաք զխօսս Նոցա, զորս յիշեմ անմոռաց: Սկսաւ ասել Պօղ. Լսեմ, օրիորդիկ, զի յերիր աւուր մեկնիս 'ի մէնջ՝ գնալ դիմագրաւ վտանգաց ծովու, յորմէ զարհուրիսդ: Օրիորդն ասէ. Պարտ է ինձ հնազանդել ծնողաց, և լնուլ զպարտս իմ: Պատանին ասէ. Թողուս դու զմեզ առ սէր ազգականի ուրուք հեռաւորի, զոր չէք իսկ քո տեսեալ: Օրիորդն ասէ. Ո՜հ զի կամէի ես կալ աստ մինչև ցմահ, այլ մայր իմ ոչ կամի, և խոստովանահայրն իմ ասէ զի այս են կամքն Աստուծոյ՝ մեկնել ինձ աստի, և զի փորձութիւն են կեանք մարդոյ . . . և փորձութիւն,

ո՜հ, քանի՜ դժնդակ։ Պատանին ասէ․ Եւ իցե՞ն իսկ պատճառքդ այդոքիկ այնպէս հզօրք 'ի յորդորել զքեզ 'ի չու, և ոչ մի 'ի հակառակաց առ 'ի կալ և մնալ․ ո՜հ, իցեն արդեօք այլ պատճառք՝ զորս թագուցանես դու յինէն․ հզօրք են հրապոյրք մեծութեանց, և գտցես զոք այլուր ընդ հուպ՝ զոր եղբայր քո փոխանակ իմ անուանեսցես, և գտցես յարժանաւորաց քեզ տոհմիւ և ճոխութեամբ՝ զոր չունիմ ես ընծայել քեզ։ Այլ ո՞ւր այլ ուրեք լիցիս երջանկագոյն․ յո՞ր երկիր երթայցես, որ քան զվայր ծննդեան քո իցէ քեզ սիրելի․ ո՞ւր գտցես կենակիցս սիրելիս քան զորս սիրենն զքեզ․ կարիցե՞ս իսկ կեալ առանց մայրենի գգուանաց, յորս սովորեալն ես․ զի՞նչ իսկ լիցի մայր քոյին, որ 'ի պառաւել է արդ, 'ի չտեսանելն զքեզ առ իւր 'ի սեղանի առանին և 'ի գնալ 'ի ճանապարհի՝ ուր 'ի քեզն յենոյր․ զի՞նչ և մայր իմ, որ հաւասար քոյումդ սիրէ զքեզ․ ե՞րբ կարասցիս սփոփել զերկաքանչիւր 'ի լալ նոցա առ անձուկ քոյին։ Լըռեմ զինէն, ն անկարեկիր․ և զի՞նչ եղէց

ես 'ի չտեսանելն զքեզ ասա այգուն այգուն, զի՞նչ և 'ի դարձ երեկորին՝ յորժամ զտեղի քո խնդրեցից յակմբի մերում, յորժամ զզոյգ քօքէնեացն տեսից զհասակակիցս մեր և զբազմամեայ սիրելութեանս մերոյ վկայս: Եթէ առ անձուկ նորոյ բաղդի ընտրես լինել տարաշխարհիկ, և զվաստակս ձեռին իմոյ ընդ օտար գոյից փոխանակել, ո՛հ, թող և ինձ գալ ընդ քեզ. քաջալերեցից զքեզ 'ի նաւի 'ի յառնել մրրկաց, յորոց 'ի ցամաքի իսկ զարհուրեալ դողաս. և 'ի Գաղղիա, ուր գնասդ 'ի խնդիր բաղդի և ձոխութեան, ծառայեցից քեզ իբրև զմի 'ի ստրկաց. բերկրեցայց ընդ բարեբաստութիւն քո յապարանս, ուր տեսից մեծարեալ զքեզ և սպասաւորեալ. և համարեսցի ինձ մեծութիւն և ազնուականութիւն՝ մատուցանել քեզ զմեծագոյն քան զամենայն նուէրս, առ ոտս քո մահացեալ:

Եւ զայս ասացեալ, գելաւ բարբառ նորա 'ի հեկեկանաց. յայնժամ լուաք զի պատասխանէր Վիրգինիա հեղձամղձուկ 'ի հառաչանաց. Առ սէր քո ուղևորիմ,

առ սէր քո՝ որ ընկճիւր հանապազ 'ի վաստակոց առ 'ի կերպակերպել զիւրաքանչիւր ակար ընտանիքս • առ սէր քո անդետամ յուսոյ մեծութեանց , առ 'ի փոխարինել վաստակոց քոց բիւրապատիկ • և կայցէ՞ իսկ մեծութիւն հաւասար սիրոյդ ։ Զի՞նչ իսկ զաղգէ քանմէ խօսիս ինձ • եթէ էր ինձ ընտրել զայդ եղբայր , զո՞ իսկ քան զքեզ մեծարէի • ո՜հ Գօղ , իմս Գօղ , առաւել ես դու ինձ յոյժ քան զեղբայր ։ Քանի՜ ծանր էր ինձ մերժել զքեզ 'ի բաց • կամէի զի օգնէիր ինձ առ 'ի խուսել և յանձնել , մինչև երկինք օրհնեսցեն զմիաւթիւն մեր ։ Արարից արդ զոր կամիսդ , կալ կամ մեկնել , կեալ կամ մեռանել • յաղթեցի գգուանաց , այլ վշտաց քոց ոչ ևս զօրեմ յաղթել՝ վերջացեալ յառաքինութենէ ։

Յայնժամ զիրկս արկեալ զնովաւ պատանւոյն , և կալեալ զնա , գոչէր մեծաձայն • Գամ 'ի միասին , և ո՞վ մեկնել զիս 'ի քէն կարասցէ ։ Հասաք անդր ամենեքին , և ոխկինն Լազուր ասէ ցպատանին • Եթէ դու զմեզ թողուցուս , զի՞նչ լինիցի

մեզ, որդեակ իմ: Իսկ նորա զշողանի հա-
րեալ, և անդրէն զնորին բան կրկնեալ՝
Որդեակ իմ, որդեակ իմ, ապա յաւել.
Եւ դու, մայրիկ, դու՛ զմեզ բաժանել
կամիս, զքոյր յեղբօրէ, երկաքանչիւրոց
զքոյին կաթն արբեալ, երկաքանչիւր 'ի
վերայ ծնգաց քոց սնեալ, և 'ի քէն ու-
սեալ մեր սիրել զմիմեանս, և զայս իրե-
րաց հանապազ յիշեցուցեալ. և դու՛ արդ
բաժանես զքոյր իմ յինէն, և յուղարկես
զնա յԵւրոպա յերկիր խուժադուժ՝ որ
մերժեացն զքեզ, և առ ազգականս քո
անգութս՝ որք լքին զքեզ: Ասիցես թէ
չիք ինչ ընդ իս և ընդ նա, թէ չէ նա քոյր
իմ. այլ է իսկ նա ինձ ամենայն ինչ, դոյք
և ընտանիք և ազնուականութիւն և ամե-
նայն բարութիւն, և այլ ինչ 'ի բարեաց
չիք ինձ՝ բայց 'ի նմանէ. 'ի նոյն օրրանս
ընդ նովին յարկաւ կեցաք, և նոյն լիցի
մեզ շիրիմ: Եթէ երթիցէ նա, հարկ է և
ինձ ընդ նմա գնալ. եթէ Պաւրոոնէ զայն
ինձ ոչ ներէ, այլ զծով ինձ ոչ կարէ խա-
փանել. 'ի լող զհետ նորա պնդեցայց, և
ոչ ծով առաւել քան զցամաք լիցի ինձ

մահաբեր ։ Եթէ չկարեմ լինել առ նմա կենակից, լեցի ինձ դէմ յանդիման աչաց նորա հեռի 'ի քէն մեռանել, անգութ մայր, անողորմ ծնող. Ովկիան, որում զնա հաւատաս, մի՛ դարձուցէ զնա քեզ. ալիք նորա ածցեն զդիակն իմ առ քեզ, և ընդ նորայումն զայն ընդ խիճս ծովափանց թաւալեալ, պատրաստեսցեն քեզ մորմոք յաւերժական ընդ կորուստ որդւոց քոց երկոցունց ։

Մինչդեռ նա զայստիկ առ յուսահատ վշտին ցնորեալ բարբառէր, հասի կալայ զնա գրկապինդ. աչք նորա հրացայտք, քիրտն զհրավառ այտիւքն ոլոռն ոլոռն հոսեալ, ծունկք նորա զդողանի հարեալ, և 'ի ջերաջերմ լանջան զգայի զսրտին արագ արագ բաբախել ։ Իսկ Վիրգինիա պակուցեալ, ասէր. Վկայեն, եղբայր իմ, զբօսանք մանկութեան մերոյ. վկայեն վիշտք քո և իմք, և ամենայն որ ինչ զոգիս հիքացս երկոցունց ունին զօդել ընդ իրեարս անլուծանելի. զի եթէ կացից աստ՝ կեցից վասն քո, և եթէ մեկնեցայց՝ դարձայց անդրէն լինել քո ։ Զձեզ կոչեմ

'ի վկայս, զձեզ զամենեսին՝ որ մնուցէք զիս 'ի մանկութենէ, և որ հրամայէք ինձ և տեսանէք զարտասուս իմ. երդուեալ յերկինս՝ որ լսեն զիս, 'ի ծով ընդ որ հանդերձիմս գնալ, և յօդս՝ զոր շնչեմ, և զոր ոչն երբէք անսուրբ արարի խաբուսիկ շրթամբք:

Որպէս 'ի շող արեգական լուծեալ անկանին 'ի բարձանց Ապեննեանց պաղեալ սառամանիք, այնպէս 'ի ձայն սիրուհւոյն անկաւ պատանւոյն սաստ սրտմտութեան. և ուղխս արտասուաց հեղոյր նա յաչաց, խոնարհեալ զգլուխն 'ի խորոխտամանէն: Իսկ մայր նորա անկեալ զպարանոցաւ որդեկին, լուռ ևեթ զարտասուս իւր ընդ նորայն խառնէր: Յայնժամ տիկինն Լաւրուր այլայլեալ, ասէ ցիս. Ոչ ես ժոյժ ունիմ, մորմոքի սիրտ իմ. կասցէ թշուառ ուղևորութիւնդ այդ. տե՛ս, բարեկամ, ածել զորդեակն իմ առ քեզ 'ի հանգիստ. զի այս ութ աւուրք են, յորմէհետէ չէք ուրուք 'ի մէնջ տուեալ քուն աչաց: Իսկ ես ասեմ ցՊօղ. Ոչ ես մեկնեսցի քոյր քո, սիրելիդ իմ, վաղիւ

խօսեսցուք զայսմանէ ընդ քաղաքապե-տին . Թո՛ղ արդ հանգչել ընտանեացդ, և մեկ լեր առ իս զայս գիշեր . անագան է ժամս, և գիշերս հասարակեալ . Կշիռ 'ի միջակէտին կայ ուղղորդ աստեղանիշ խաչն հարաւաձնեմ: Եւ եկն նա ընդ իս լուռ անբարբառ . և անհանգիստ զգիշերն զայն անցուցեալ, յարեաւ ընդ առաւօտն դառ-նալ 'ի բնակութիւն իւր :

Եւ ընդէ՞ր իցէ ինձ այլ ևս յառաջ ա-ծել զպատմութիւնս . կեանք մարդոյ 'ի մասնէ ինչ տխուր է 'ի լուր, որպէս որ ընդ մէջ երկրիս արագաձիգ հոլովման շրջանն օրակշիռ . զի կիսոյ նորին չէ մարթ ունել լոյս, թէ չիցէ միւս կէս իւր 'ի խաւարի :

Այլ ես յաւելի . Աղաչեմ զքեզ, հայր, կատարեա զոր սկսարդ վէպ խանդաղա-տելի . նկարագիրք երջանկութեան ախոր-ժելիք են, այլ թշուառութեանն՝ հրա-հանգիչք . և զի՞նչ ելք իրացն եղեն հէք պատանւոյն, աղէ պատմեա :

Ի դառնալ յինէն Պօղայ, նախ առաջին

ետես զաղախինն հնդիկ՝ զի կայր հայէր 'ի բարձուէ ժայռին 'ի խորս ծովուն. և ձայնարկեալ 'ի բացուստ՝ ուստի հազիւ զնա աչք նշմարէին, գոչեաց. Ո՞ւր է նա, ո՞ւր է Վիրգինիա: Իսկ աղախնոյն շրջեալ զաչս 'ի տէր իւր պատանեակ, սկսաւ լալ: Յայնժամ Պօղ խելայեղեալ, յետս ընդրէն 'ի նաւահանգիստ անդր դիմեաց, և գիտացեալ զկանխել մեռանել Վիրգինեայ ընդ այգն 'ի նաւ, և զնաւուն առագաստել իսկոյն և անտես լինել, դարձաւ այսրէն 'ի բնակութիւն իւր, և անց գնաց առանց խօսելոյ ինչ ընդ ումեք:

Բլուրքս որ զմեօք, Թէպէտ և Թուին յետկուսէ քարակտուրք ուղղաբերձք, բայց 'ի սարաւանդս դալարազգեղս աստիճանեալ՝ ածէն ընդ դժուարուստ մինչև 'ի ստորոտ կոնաձև ժայռից, որ կարկառի կօրակօր 'ի ստոր անմատչելի՝ Բոյթ 'ի ձեռոյն անուանակոչեալ: Եւ է աստ ոտամբ դորին սարահարթ՝ ծառաստանիւք 'ի ըստուար մայրեաց՝ այնպէս բարձր և սեպացեալ, զի Թուի անտառ օդակառոյց 'ի վիհից զարհուրելեաց շղթայապատեալ:

Ցամպոց, զորս յարաձգէ դա զբարձամբքն,
աղբերացեալ ուղխք բազումք անկանին
'ի հովիտ անդր՝ որ 'ի Թիկանց լերինդ կայ՝
այնպէս խորաձոր, զի խոխոջք ուղխիցն
անկելոց չեն իսկ 'ի բարձանց անտի լսելի։
Անտի տեսանի մեծ մասն կղզւոյս բեր-
ձակատար բլրովքն, ընդ որս և անուա-
նեալքն Եռաստին և Բիէդէր-Պուտհ՝ ան-
տառախիտ ձորովքն, և ապա ծով ընդար-
ձակ, և Պուրպոնեանն 'ի նմա կղզի ընդ
արևմուտս՝ հեռի քառասուն փարսախաւ։
Ի բարձուէ անտի նշմարէր Պօղ զնաւ
Վիրգինեայ անդր ևս քան զտասն փար-
սախ որպէս կէտ 'ի ծովու սևանիշ, և
հարուստ մի ժամ կայր անդ 'ի զնին, և
զվաղ իսկ աներևան լեալ յաչաց՝ դեռ ևս
կարծէր տեսանել։ Իսկ իբրև մէգ ընդ ո-
լորտս ծածկեաց զայն 'ի սպառ, նստէր
նա 'ի վայրի անդ՝ ուր յարակոծեալ 'ի
հողմոց տատանին անդադար գագաթունք
արմաւենեաց և Թաթամաքեաց, և սօ-
սաւիւն նոցա և խուլ մռնչիւն որպէս եր-
գիոն հնչեալ 'ի հեռուստ՝ ազդէ 'ի սիրտ
խորին տխրութիւն։

Անդ գտի զՊօղ, յելից արևու շրջեալ
զհետ նորա. և գտի զնա զի կայր երկրա-
պին՝ յեցեալ գագաթամբ 'ի մի 'ի ժայ-
ռից. և յոյժ աշխատ եղէ մինչև հաւանե-
ցուցի զնա իջանել առ իւրսն: Դարձաւ
ուր ուրեմն ընդ իս 'ի տուն. և նախկին
ազդումն 'ի նմա, 'ի տեսանել զտիկինն Լա-
ւդուր, եղև դառն բողոք զխաբկանացն:
Բայց տիկինն պատմեաց մեզ, զի յառա-
ւօտուն պահու 'ի շնչել հողմոյ և 'ի կազ-
մել նաւուն 'ի չու՝ եկեալ քաղաքապետն
սպայիւք ոմամբք հանդերձ երիցամբն 'ի
խնդիր Վիրգինեայ, և դեսպակ ընդ իւր
ածեալ, ոչ աղերսականն բանից դստերն
լուեալ, և ոչ արտասուաց իւրոց և Մար-
գարտայ երեսս արարեալ, իւրովքն առ
հասարակ աղաղակելով՝ զի այն էր ամե-
նեցուն մեզ 'ի բարի, առեալ տարեալ էր
զնա կիսամեռ: Յայնժամ ողբս առեալ
Պօղայ, ասէր. Եթէ գէթ տուեալ էր իմ
նմա ողջոյն հրաժարական, սփոփէր սիրտ
իմ: Ասէի նմա. Քոյր իմ, եթէ երբէք
վշտացուցի զքեզ յորմէ հետէ կեամքս 'ի
միասին, մինչչև մեկնեալ քո անդարձ՝ ա-

սա ինձ թէ ներես : Ասէի նմա · Ողջամբ երթիջիր , սիրեցեալդ իմ Վիրգինիա · ոչ ևս լիցի ինձ տեսանել զքեզ, կելով կեցցես դու հեռի յինէն գոհ և երջանիկ : Եւ 'ի տեսանել զմայր իւր և զտիկինն Լադուր զի լային , ասէ · Մի՛ ևս զիս , զայլ ոք խնդրեցէք առ 'ի սրբել զարտասուս ձեր : Եւ թողեալ զնոսա ողբովք և հեկեկանօք , շրջէր թափառական ընդ վայրս՝ սիրելւո Վիրգինեայ · և այծուց նորա և ուլից՝ որ զհետ գային բառաչելով, ասէր · Զի՞ խնդրէք յինէն , ոչ ևս տեսանիցէք ընդ իս՝ որ ափով իւրով ջամբէր ձեզ ճարակ : Եւ երթեալ 'ի Հանգրուանն Վիրգինեայ , 'ի տեսանել անդ զթռչունսն՝ որ շուրջ թևածէին , և ցնոսա ասէ · Եղո՜ւկ դուք , ոչ ևս ընդ առաջ գնայցէք բարեգութ դայեկին ձերում : Եւ տեսեալ զշնիկն Հաւատարիմ՝ որ հոտոտելով գնայր հետազօտ , ասէ հառաչանօք · Ո՜հ , զի ոչ ևս գտցես զնա : Եւ ապա բազմեալ 'ի ժայռին՝ ուր յերէկն խօսեցեալ էր ընդ նմա , և հայեցեալ ընդ ծով՝ ուր էր նաւն նորին անտես լեալ, հեղոյր ուղխս արտասուաց :

Բայց մեք ամենայն ուրեք զհետ նորա շրջէաք, թէ գուցէ 'ի յոյզս կրիցն յաղէտս ինչ մտաբերեսցէ: Աղաչէին զնա մայր նորա և տիկինն Լադուր դողորեկ գգուանօք, մի ցաւս 'ի վերայ ցաւոց իւրեանց յաւելուլ յուսահատութեամբն, մինչև յաջողեաց Լադուր տիկնոջ փոքր մի սփոփել զնա՝ տալով նմա անուանս զարթուցիչս յուսոյ 'ի նմա, կոչելով զնա որդի իւր և փեսայ, և զդուստր իւր՝ հարսն նորա. և բռնադատեաց զնա մտանել 'ի տուն, և ճաշակել ինչ: Եկն նստաւ ընդ մեզ 'ի սեղան մերձ 'ի տեղին Վիրգինեայ. և առ իւր զնա համարելով բազմեալ, խօսէր ընդ նմա, և մատուցանէր նմա յախորժելեացն 'ի ճաշակ. և ապա 'ի զգաստ լինել ցնորիցն, սկսանէր լալ: Ի վաղիւանդր ամփոփեալ որ ինչ Վիրգինեայ 'ի կիր արկեալն էր, և զյետին փունջս ծաղկանց յօրինեալս 'ի նմանէ, և զըմպանակն քօքենի՝ որով սովորն էր ըմպել, զայն ամենայն նշխարս սիրուհւոյն իւրոյ որպէս պատուականագոյն քան զամենայն գանձս համբուրէր և կրէր 'ի ծոցին: Զի

ոչ այնպէս ակն բազմագունի բուրէ անուշահոտ, որպէս յոր ինչ ձեւոյն սիրելւոյ հպեալ։ Բայց իբրեւ ետես զի 'ի վշտաց իւրոց յաւելուին և ևս վիշտք մօրն և Ղազուր տիկնոջ, և զի առ 'ի լինել զպէտս ընտանեաց՝ հարկ էր վաստակել, ձեռն էարկ անդրէն օգնականութեամբն Դոմինիկեայ մշակել զպարտէզն։

Աւուրք ինչ 'ի վերայ անցեալ, և ահա պատանին՝ որում ըստ գաղթականաց եւրոպացւոց չէր ինչ փոյթ երբեմն զանցից քաղաքականաց՝ խնդրէր ուսանել յինէն դպրութիւն, առ 'ի կարօղ լինելոյ թղթակցել ընդ Վիրգինեայ, աշխարհագրութիւն՝ առ 'ի գիտել ուր նաւն նաւարկէր, և պատմութիւն՝ առ 'ի ճանաչել զբարս մարդկան, ընդ որս պարտ էր նմա կեալ։ Նորին սիրոյ ազդեցութեամբ քաջիկ ուսեալ էր նորա մշակել և 'ի վայելչութիւն ածել զերկիր և զկարի իսկ առապար. զի յոլովագոյնք 'ի գիտութեանց և յարուեստից արգասիք են ակնկալեալ վայելից՝ յոր կիրքս այս բուռն և անհանդարտ իրախուսէ, որպէս զրկումն յայնց յորդորէ

յիմաստասիրութիւն՝ առ 'ի սփոփել նովաւ: Այսպէս բնութիւն, համագոյից էից զօդ միութեան զսէր կացուցեալ, եդ զայն սկզբնաշարժ մարդկային ընկերութեան, և յորդորիչ գիտութեանց և բերկրանաց:

Բայց ոչ յոյժ հաճոյ թուեցաւ Պօղոյ աշխարհագրութիւն, որ փոխանակ նկարագրելոյ զբարս աշխարհաց՝ զքաղաքական բաժանմունս եւեթ նոցին ուսուցանէ. ոչ ինչ ընդհատ և պատմութիւն, մանաւանդ արդի ժամանակաց, տեսանելով 'ի նմա անդադար աղէտս հասարակաց՝ զորոց չկարէր 'ի միտ առնուլ զպատճառս, և պատերազմունս՝ առանց գիտելոյ առ իմէ՝ և առ ինչ մղեալ, հնարս զաղտագողի, ազգս չարաբարոյս, և իշխանս անողորմս: Սիրելի ևս էր նմա ընթեռնուլ վէպս յօգուածոյս, որոց առաւելագոյն ազդեցութիւն է 'ի սիրտ և 'ի միտս, և ինչ ինչ հանգոյն կրիցն իւրոց գտանէր 'ի նոսա. վասն որոյ ախորժելի քան զամենայն գիրս էին նմա վէպք Տելեմաքայ, վասն որ 'ի նմա նկարագրութեանցն գեղջկային կենաց և

ընդարձոյս կոչից մարդկեղէն սրտի ։ Հա-տուածս 'ի Նմանէ , ազդողագոյնս 'ի սիրտ իւր , ընթեռնոյր 'ի լուր մօրն և Լազարու տիկնոջ ։ և յընթեռնուլ անդ՝ գեղձեալ գորովականն յիշատակօք , գերոյր ձայն նորա , և արտասուք քամէին յաչացն ։ զի թուէր նմա տեսանել զպատկեր Վիրգինեայ յԱնտոնայէ ըստ հանգարտութեանն և զգօնութեան , և յԵւքարիս ըստ խանդաղատացն և աղէտից ։ Բայց և խռովէր յոյժ յընթերցմանէ այժմուցս հնարակերտեալ վիպաց , յորս յաճախեն զեղծմունք բարուց և իմաստից ։ և զխոտացեալ , զի որ 'ի նոսա նկարագիրքն էին՝ ընծայէին զտիպս բարուց եւրոպական ժողովրդոց , անկանէր 'ի կասկած ոչ իսկ տարապարտ , թէ գուցէ ղեղծեալ անդ Վիրգինեայ՝ ոչ ևս յիշեսցէ զինքն ։ Մանաւանդ զի ամ և կէս 'ի վերայ անցեալ , և չև ևս հասանէր զրոյց առ Լազարու տիկին , ոչ 'ի դստերէ իւրմէ և ոչ 'ի հօրաքեռէ ։ բայց միայն զի զողջամբ հասանել զդստերն գիտացեալ էր նորա յայլոց ։ Յետոյ ուրեմն հասեալ անդր նաւ գնացական 'ի Հնդիկս , ած

ծրար մի և Թուղթ ինքնագիր 'ի դստերէն , ուստի ծանեաւ զտառապանս նորա , Թէպէտ և լռէր զայն հեզահամբոյր դուստրն սիրելի · և այնպէս ճշգրիտ 'ի Թղթի անդ նկարագրեալ էին հանգամանք նորին և բարք , զի յիշեմ զպատճէն դորին բառ առ բառ , և էր այս ·

ՍԻՐԵԼԻ ԵՒ ԱՆՁԿԱԼԻ ՄԱՅՐԻԿ .

Գիրս յոգունս գրեցի քեզ իմով իսկ ձեռամբ · այլ չև ևս ընկալեալ 'ի քէն պատասխանի , կասկածեմ զի չիցեն հասեալ առ քեզ · բայց սա յուսամ զի հասցէ , 'ի կիր արկեալ իմ զամենայն զգուշուԹիւն առ 'ի տալ քեզ զրոյցս զինէն և ընդունել զքոյսդ : Բազում արտասուս հեղի յօրէ մեկնելոյ իմոյ 'ի ձէնջ , որ ընդ այլոց աղէտս ևեԹ սովորեալն էի արտասուել : Հօրաքոյր մեր 'ի հասանել իմում այսր զարմացաւ յոյժ , քննեալ և տեսեալ զի անգէտ եմ դպրուԹեան · եհարց ցիս՝ Թէ զի՞նչ արդ 'ի մանկուԹենէ հետէ ուսեալ իցեմ : Եւ 'ի պատասխանել իմում՝ զառ-

տեսին իւրաց յանձանձանս և հպատակել
մօր , յաւել զի զդաստիարակութիւն ա-
ղախնոյ ընկալեալ իցեմ: Ի վաղիւ անդր
եդ զիս 'ի վարժ 'ի կուսաստանի ուրեք
մերձ 'ի Բարիզ, յորում ամենայն ազգի
ազգի վարժից են ուսուցիչք . և ընդ այլ
վարժեալս՝ ուսուցանեն ինձ զպատմու-
թիւն , զաշխարհագրութիւն , զքերակա-
նութիւն , զչափական գիտութիւնս , ևս
և զհեծելութիւն . այլ այս ամենայն սա-
կաւ ինչ օգնեցին ինձ , առ 'ի չգոյէ յիս
բաւականութեան . Ճանաչեմ զտկարու-
թիւն մտաց իմոց, որպէս և վարժապետքս
ինձ տան 'ի միտ առնուլ: Հանդերձ այսու
ամենայնիւ հօրաքոյր մեր ոչ դադարէ 'ի
խնամոց . հանդերձանի նոր ըստ եղանակս
տարւոյ պարգևէ ինձ . կացոյց ինձ 'ի ըս-
պաս նաժիշտս երկու , որ հանգոյն տիկ-
նայց զգեցեալ են . և մեծարանաց անուամբ
տայ կոչել զիս կոմսուհի , այլ եբարձ յի-
նէն զմականուն իմ Լադուր՝ որ սիրելին է
ինձ որպէս և քեզ վասն վշտացն կրելոց 'ի
հօրէ իմմէ առ 'ի պսակելոյ ընդ քեզ , որ-
պէս պատմէիրն . և փոխանակ հայրենի

մանկանութեան զմայրենիդ ետ ինձ, որ և այն սիրելի է ինձ՝ օրիորդիդ մականուն: Ի տեսանել իմում զայս ամենայն սպասս հանդերձանաց, աղաչեցի զնա նպաստ ինչ յղել քեզ. և Երբ կարիցեմ գրել քեզ զպատասխանին. այլ դու խրատեիր զիս տալ զամենայն անկեղծութեամբ: Նա պատասխանի՝ զի սակաւ ինչ նպաստ ոչ ինչ օգնեսցէ քեզ, իսկ բազումն զսակաւապէտ կեանսդ աղմկեսցէ: Զառաջինն կամէի ընդ այլոյ ձեռն գրել քեզ, զի չկարէի ինձէն. այլ չունելով զոք՝ յոր մարթէր ինձ 'ի հասանել իմում այսր վստահել, պարապեցի զտիւ և զգիշեր յուսումն դպրութեան, և Տէր օգնեաց ինձ ուսանել 'ի սուղ ժամանակի գրել և ընթեռնուլ:

Զնախագրեալսն իմ յանձնէի նաժըշտաց՝ որ կան ինձ 'ի սպասու, առ 'ի հասուցանել առ քեզ. այլ կասկածեմ տխկնոջ իւրեանց տուեալ նոցա զայնս: Վասն որոյ զսա միում 'ի մտերիմ աշակերտակցաց իմոց յանձնեցի. և խնդրեմ զի յանուն նորին յղեսցես ինձ զպատասխանին, յա-

ւելըով իմ սաստ զերեսագիր Նամականւոյ նորա : Հօրաքոյր մեր արգել ինձ զամենայն թղթակցութիւն, թէ գուցէ խափան լիցի այն մեծամեծ բարեացն՝ զորս խորհի առնել ինձ : Ինքն միայն այց առնէ ինձ ընդ պատուհանն վանդակապատ, և ծեր ոմն բարեկամ իւր՝ որ, ըստ ասելոյ իւրոյ, հաճեցեալ է ընդ իս · այլ ես, ընդդէ՞ր թագուցից, չեմ հաճեալ ընդ նա, եթէ հաճել իսկ յոք յօժարեսցի սիրտ իմ։

Ի մեծութեան կեամ, այլ չեմ դանկի ևս միոջ տէր · զի հեռանամս չարեաց կասկածեն անուտի · հանդերձից իսկ իմոց իշխեն նաժիշտք իմ, և յափշտակեն յերերաց՝ չև իմ թողեալ զպճնասիկ 'ի բաց · չքաւորագոյն 'ի ճոխութեան ասա գտանիմ քան առ քև, զի չունիմ ինչ՝ զոր թէ տալ ումեք կարիցեմ : Եւ տեսեալ իմ, զի գիտութիւնք բարձունք՝ զոր ուսանիմն՝ չօգնեն ինձ առ 'ի բարերարել ումեք, յասեղն իմ դարձեալ եղէ ապաստան՝ յոր ըստ բախտի վարժեալ գտանիմ 'ի քէն · և ահա յղեմ գուրպայս բազումս ձեռագործս իմ քեզ և կնքամօր իմում Մար-

դարոտայ , գդակ ցայգանոց Դոմինիկեայ , և մի 'ի կարմիր Թաշկինակաց իմոց Մարեմայ ։ Յաւելում 'ի ծրար անդր կորիզս մրգաց՝ 'ի նախաճաշիցս իմոց պահեալ, և հատս ազգի ազգի ծառոց՝ 'ի ժամ զբօսանաց իմոց 'ի պարտիզի աստ վանացս քաղեալ ։ Յաւելում և սերմանս ծաղկանց , մանուշակ , մարգրատիկ , հրանունկ և այրեծաղիկ , 'ի դաշտաց ժողովեալ · զի յառօսս աստ ծաղկունք գեղեցիկք քան 'ի մերումն գաւառին , անտեսք լեալ ։ Ոչ ինչ երկբայիմ զի ծրարս այս հաճոյ եւս Թուեսցի քեզ և կնքամօր իմում քան զպարկն գրամոց , բաժանման մերոյ 'ի միմեանց և իմոցս արտասուաց առիթ ։ Ուրախ եղէց յոյժ 'ի վայելել ձեր յաւուր միում 'ի տեսիլ խնձորենեաց աճելոց ընդ պատուհանիս , և ոստոց կաղնեաց խառնելոց ընդ քօղենիս · Թուեսցի քեզ յայնժամ կալ 'ի Նորմանտիա , ուր յոյժն սիրես ։

Պատուիրեցեր ինձ գրել առ քեզ զխնդութիւնս իմ և զվիշտս · յորմէհետէ մեկնեալս եմ 'ի ձէնջ , չեղև ինձ երբէք խնդալ · իսկ 'ի վիշտս իմ սփոփիմ, ածեալ

զմտաւ զի ուր կամիս՝ կամքն Աստուծոյ և հրամանաւ քով կամ։ Այլ դառնագոյն ինձ այն է, զի ոչ ոք ինձ աստ յիշէ զքեզ, և ոչ ընդ ումեք լինի խօսել ինձ զքէն. աղախնայք իմ, զի մի ատացից հօրաքեռն մերոյ՝ որում աղախինն են քան ինձ, 'ի խօսել իմում զիրաց՝ որ առաւել սիրելի են ինձ, ասեն. Ցուց լիցի օրիորդիդ՝ զի 'ի Գաղղիա կաս, պարտ է քեզ զաշխարհս վայրենիս 'ի մոռացօնս արկանել։ Այլ ինձ լիցի իսկ մոռանալ զանձն քան զերկիր՝ ուր ծնեալս եմ, և ուր դուքդ կայք. երկիր վայրենի այս է ինձ՝ ուր կեամս անտէրունչ, և չունիմ զոք՝ որում կարացից յայտնել զսէրն, որով սիրեմս զքեզ և սիրեցից մինչև ցմահ,

Մայր իմ սիրելի և անձկալի

Հնազանդ և կաթոգին դուստր քո
ՎԻՐԳԻՆԻԱ ԼԱԴՈՒՐ

Յանձն առնեմ բարեգութ մօրդ իմում զՄարիամ և զԴոմինիկ, որ այնչափ խնամ կալան ինձ 'ի մանկութենէ. գգուեսջիր

յինէն զՇնիկն Հաւատարիմ, որ եգիտն զիս յանտառի: ...

Զարմացեալ կարկեալ կայր Պօղ, զի Վիրգինեայ յիշատակեալ զամենեսին, մինչև զՇնիկն ևս, և չասէր ինչ տակաւին զինքենէ. բայց սովորութիւն է կանանց զսիրելագոյն իմաստս թողուլ 'ի վերջ երկարագունից իսկ թղթոց: Վիրգինիա յաւելույր յետ գրութեան՝ յանձնել առաւելապէս 'ի խնամս Պօղայ զսերմանս մանուշակի և զայրեծաղկին, տայր նմա տեղեկութիւնս զերկաքանչիւրոցն, ցուցանէր զվայրս դիպողս սերմանցն արկանելոյ, և ասէր. Մանուշակն է ծաղիկ փոքրիկ 'ի գոյն ձանձախարիթ, սիրէ ծածկիլ մացառաղօղ, այլ բուրումն անուշահոտ յայտնէ զնա փութով: Եւ ասէր սերմանել զայն յեզր աղբերն, առ արմին քոքենւոյ իւրոյ, և ապա յաւելոյր. Այրեծաղիկն գեղեցիկ է, և 'ի թուխ կարմիր սպիտականիշ՝ գոգցես զսուգ զգեցեալ, վասն որոյ և այրւոյ ծաղիկ անուանի. սիրէ նա զքարուտ և զհողմակոծ վայր: Եւ

տաէր սերմանել զայն 'ի քարաժայռ ըլլէին՝ ուր 'ի վերջնումն գիշերի խօսեցեալն էր ընդ նմա, և աղաչէր՝ առ սէր իւր զքարաժայռն զայն կոչել Վէմ հրաժեշտի։ Եւ սերմանքն էին ամփոփեալ 'ի քսակ հիւսկէն անպաճոյճ, այլ կալաւ զայն Պօղ որպէս զանձ անգին՝ 'ի տեսանելն զնովաւ զսկզբնատառս անուան իւրոյ և զօրիորդին Պ և Վ խառն ընդ միմեանս հիւսեալ հերովք, զորս 'ի գեղոյն ծանեաւ՝ զի էին 'ի վարսից Վիրգինեայ։

Ի լուր գրելոյ բարեգորով և առաքինի օրիորդին ամենայն ընտանիք նորա յարտասուս շարժեցան. և գրեաց մայր նորա յանուն ամենեցուն պատասխանի, առնել որպէս և հաճոյ թուի նմա, կալ անդ կամ դառնալ. և տաէր՝ զկարեար մեծամ բարեկենդանութեան իւրեանց կորուսեալ ամենեցուն 'ի մեկնել նորա, և զի ինքն առաւել քան զամենեսեան տառապէր անմխիթար։ Գրեաց և Պօղ գիր երկայն, յորում խոստանայր արժանի նմա պատրաստել զպարտէզն, յեռալ անդ զտունկս եւրոպականս խառն ընդ հնդէացիս՝ որպէս

նորա զանուանս իւրեանց յեռեալ էր ընդ միմեանս յիւրում ձեռագործին ։ Եւ յըղղեալ առ նա միրգս 'ի քօղէննեաց աղբերն հասուննս , ասէր ․ Զյաւելուամ յղել 'ի սերմանց կղզւոյս , որպէս զի կարօտութեամբ ծաղկանց նոցա փութասցիս 'ի դարձ ։ Եւ աղաչէր ընուլ վաղագոյն զանձուկ ընտանեացն , և մանաւանդ զիւրն՝ որ չկարէր առանց նորա վայելել ինչ 'ի բերկրանաց ։

Եւ ցանեաց Պօղ ամենայն խնամով ըղձերմանն եւրոպականս , և մանաւանդ զմանուշակն և զայրեծաղիկ , ոչ միայն վասն նմանութեան նոցա ընդ բարս և ընդ հանգամանս Վիրգինեայ , այլ և վասն առ 'ի նմանէ ընծայութեանն ․ բայց սակաւք յայնցանէ բուսան , այլոցն եղծեալ թերևս 'ի նաւարկութենէ , և կամ զի օդք կողմանցն այնոցիկ Լիբերոյ չէին նոցա սածիչք ․ և որք բուսանն ևս , ոչ բարգաւաճեցին ։

Բայց նախանձ խոչընդոտն բարեկենդանութեան , մանաւանդ առ դաղթականս Գաղղիոյ , արկ աստանօր զըրոյցս՝ որ

յաճախէին հոգս Պօղայ ։ Ուղևորք հասեալք նաւաւն՝ որոյ զթուղթ Վիրգինեայ ածեալն էր՝ ասէին պատրաստեալ զհարսանիս նորա , և զանուն իսկ սատանիկ պատանւոյն՝ ընդ որում պատկելոցն էր · այլք վաղ իսկ զնա ասէին պսակեալ, և իւրեանց իսկ անդ 'ի հարսանիսն գտեալ ։ Ի սկզբան անդ արհամարհեաց Պօղ ըզզրոյցսն · զի նաւք վաճառականք ամենայն ուրեք յանցս իւրեանց համբաւս սուտս սովոր են ծաւալել · այլ զի բազումք 'ի բնակչաց կղզւոյս պատճառեալ զգութ՝ յաճախէին կարեկից լինել վասն այնր ընդ նմա , սկսաւ կասկածել ։ Այն զի և 'ի վէպս ուրեք մատնութեանս հանգոյնս այնմ ընթերցեալ էր նիւթեալս ընդ խաղ, և գիտէր իսկ զի վէպքն այնոքիկ էին ճըշգրիտ նկարագիրք եւրոպական բարուց · վասն որոյ կասկածէր թէ գուցէ օրիորդն 'ի հրապոյրս զառածեալ՝ մոռասցի զխոստմունս իւր · գիտութեանցն անդստին իսկ սկսեալ լինել պատանւոյն 'ի թշուառութիւն ։ Եւ յաւելուին կասկածանք նորա այնու , զի նաւք բազումք յետ այ֊

Նորին հասեալ անդր յԵւրոպայ՝ չածէին գիր 'ի Վիրգինեայ զամիսս վեց ։

Ի կասկածանաց սատի տագնապեալ հէք պատանին գայր առ իս ստէպ հարցանել, և 'ի փորձ իրաց՝ ընդ որս անցեալ է իմ՝ հաստատել կամ փարատել զկասկածանս իւր ։ Բնակութիւն իմ հեռի է սատի փարսախաւ և կիսով, որպէս ասացի, յեզր վտակի միոջ՝ որ գնայ առ Երկայնանիստ լեռամբն . անդ կեամ միայնաւոր, չիք իմ ոչ կին, ոչ որդի, և ոչ ստրուկ ։ Քանզի յետ դժուարադէպն երջանկութեան ունելոյ ամուսին ըստ սրտի, նուազագոյն 'ի թշուառութիւնս ապաքէն միայնութիւն է . ամենայն ոք վշտակրեալ խընդրէ զմիայնութիւն, և տես ինձ զի առ ազգս թշուառս ըստ կարծեաց ըստ բարուց և ըստ կարգաց տեսչութեան, եղեն դասք քաղաքացեաց՝ որք միայնաւոր և ամուրի կենաց պարապեցին . որպէս եգիպտացիք յանկանել պետութեան իւրեանց, Յոյնք յաւուրս յետին ինքնակալաց, և առ մեօք Հնդիկք և Ճենք և արդի Հելլէնք, և յոլովագոյնք յարևելեան

ազգաց և յարևմտեայց Եւրոպայ : Միայ-
նութիւն յեղանակաւ իմն ածէ զմարդ 'ի
բնիկն իւր երջանկութիւն , զերծուցեալ
զնա 'ի չարեաց ընկերութեան • զի յընկե-
րութիւնս մեր բազմադիմի մտահաճու-
թեամբք պատուականեալս՝ յուզի անդադար
սիրտ մարդկեղէն 'ի բազմամբոխ և 'ի ներ-
հակակիր խորհուրդս , որով անձինք փա-
ռասէր և Թշուառ ընկերութեան հնարին
նուաճել զիրեարս • իսկ 'ի միայնութեան
'ի բաց ընկեցեալ զօտարոտի և զխառնա-
յոյզ պատրանսն , գտանայ անդրէն յան-
եղծ զգացումն անձին և համագոյից և
հաստչի նոցին : Այսպէս ուղխ պղտոր
յողողելոյ զանդաստանս , 'ի խորաձոր ու-
րեք մեկուսի յընթացիցն ամփոփեալ ,
Թողու զտիղմ և զաւազ 'ի յատակի • և 'ի
գտանալ նորա 'ի բնիկն պայծառութիւն՝
յականակիտ աղիս անդ երևին իբր 'ի հայ-
ելւոջ զարդարանք իւր , երկիր զալարա-
գեղ, և երկինք լուսաւորքն : Միայնութիւն
և զմաստունս մարմնոյ ընդ հոգեղէնս յար-
մարեալ յօրինէ • որով երկայնակեացս
քան զամենեսին 'ի կարգս միայնակեցաց

է պտանել, որպէս առ բրակմանս իսկ հնդիկս ։ Եւ բանից գլուխ՝ այնպէս կարևոր համարիմ զմիայնութիւն առ 'ի կեալ բարեբաստիկ 'ի կենցաղումս, զի անհնար թուի ինձ վայելել յոր ինչ և իցէ բերկրանս ընդ երկար, և անյողդողդ օրինօք կենցաղավարել, առանց կազմելոյ 'ի ներքս 'ի մեզ միայնարան՝ ուստի դուն ուրեք խորհրդոց մերոց իցեն ելք, և այլոցն մի բնաւ անդր մուտք ։ Իբր ոչ եթէ պարտ իցէ մարդոյ ամենևին իսկ մենակեաց գոլ, ուր պիտոյիւքն կցորդեալ է ընդ մարդկան, և որպէս մասն համազգիցս՝ պարտի վաստակել այլոց ․ այլ որպէս զգայարանս արար մեզ Աստուած պատկանաւորս տարերց երկրի՝ ուր կամքս, ոտս առ 'ի գնալ ընդ երկիր, թոքս 'ի տուրևառ օդոց, աչս առ 'ի տեսանել զլոյս, և չէ մեզ մարթ զպէտս նոցին յեղաշրջել, այսպէս և զսիրտ՝ որ երիցագոյն 'ի զգայարանս մեր է՝ իւր ևեթ պահեաց տուիչն կենաց մերոց ։

Այսր աղագաւ հեռի 'ի մարդկանէ կեամ․ հալածեալ 'ի նոցունց՝ որոց ծա֊

ռայեալն կամքի, և յածեալ ընդ մեծ մասն Եւրոպայ և ընդ կողմանս ինչ Ամերիկայ և Ափրիկեայ, զկայ առի 'ի սակաւաբնակ կղզւոջս՝ վասն բարեխառնութեան օդոցն և ամայութեան: Հիւղ՝ զոր կառուցի առ արմին միոյ 'ի մայրեաց անտառին, ածու փոքրիկ՝ զոր մշակեմս, և վտակ՝ որ առ դրամբ իմով գնայ, լնուն զպէտս իմ և զզբօսանս: Յաւելում 'ի վայելս այսոցիկ և գիրս ինչ օգտակարս՝ որ խրատեն զիս 'ի լաւութիւն, և զաշխարհ՝ զոր թողի՝ 'ի բարեբաստութիւն իմ ծառայեցուցանեն, յանդիման առնելով ինձ զկիրս թշուառացուցիչս բնակչաց նորա, և ընծայելով 'ի զուգակշիռ զկենցաղ նոցա ընդ իմումս, որով բերկրիմ 'ի տեսանել զանձն զերծ 'ի թշուառութենէ նոցա: Որպէս ոք ապրեալ 'ի նաւաբեկութենէ և 'ի ժայռի ուրեք զկայ առեալ, այսպէս 'ի մենարանէ աստի իմմէ նկատեմ զմրրիկս՝ որ ալէկոծեն զաշխարհ, և 'ի հեռաւոր մռնչիւն նոցա վայելեմ 'ի հանդիստ կրկնապատիկ: Յորմէ հետէ ոչ ճանաչեն զիս մարդիկ, և ոչ ես զնոսին, ոչ ևս ատեամ զոք 'ի նոցանէ,

այլ գթամ ՚ի նոսին. և ՚ի տեսանել իմում զոք տառապեալ՝ ջանամ օգնել նմա խրատուք, որպէս անցաւոր ոք առ գետով՝ զի աջ կարկառիցէ հիքի վտանգելոյ ՚ի ջրահեղձ կորուստ. սակայն գրեթէ ոչ ոք ձայնի իմում լսէ բաց յանմեղութենէ ։

Ի զուր առ ինքն հրաւիրէ բնութիւն զմարդիկ. ամենայն ոք ըստ կրից իւրոց նկարեալ ՚ի միտս իւր զնորին պատկեր, և զհետ ցնորիցն իւրոց յամենայն կեանս իւր երթեալ մոլորական, բողոքէ ապա ընդդէմ երկնից զմոլորութենէն՝ յոր անձամբ զանձն էարկ ։ Ցամբոխէ թշուառաց, զորս ՚ի բնութիւն անդր գուն գործէի դարձուցանել, չգտի զոք՝ որ չէր արբեցեալ թշուառութեամբն. լսէին ինձ առ վայր մի, յուսացեալ շահել ինչ փառս կամ ճոխութիւն. այլ ապա ՚ի տեսանելն զի ուսուցանէի հրաժարել յայնցանէ, զիս ինքն համարէին թշուառ՝ զի ոչ երթայի զհետ իւրեանցն անղէտալի երջանկութեան ։ Եպերէին զմենակեաց կեանս իմ, զանձինս ևեթ համարէին պիտանիս մարդկութեան, և ջանային ՚ի յորձանս

անդր քուրեանց ձգել զիս • այլ ես ընդ ամենեցուն կենակցեալ, ոչ ումեք լինիմ անձնատուր • 'ի բազում ինչ՝ անձն իմ բաւէ ինձ 'ի խրատ : Զի 'ի խաղաղութեան յոր կեամս՝ յուշ ածեմ զապմունս ընդ որս անցին կեանք իմ, և որք մեծ ինչ յաչս իմ թուէին, շնորհք աւագանւոյ, ճոխութիւն, համբաւ, բերկրանք, և կարծիք ամենայն ուրեք ընդ ոլորտս երկրի ընդգիմամարտք : Զամբոխ մարդկան՝ զորս տեսանէի զայրագնեալս 'ի վէճ ցնորիցն, և որք չենն արդ 'ի միջի, համարիմ համ'գոյնս ալեաց ծովոյս վտակի՝ որ փրփրեալ ընդ ժայռս, ոչ ևս երևին • իսկ իմ թողեալ խաղաղութեամբ զանձն 'ի հոսանս ժամանակին՝ որ յանեզրականն յանցի յՈվկիան, 'ի տեսիլ համագոյեցս ներգաշնակ յօրինուածոյ՝ 'ի յօրինիչ նոցին ամբառնամ, և նաև գեղեցկագոյն յուսամ յանախին ինձ պատրաստեալ :

Յանտառի, ուր բնակեմս, չիք տեսանել զայս ամենայն՝ որ 'ի բարձուէ աստի տեսանին երևոյթք • այլ են և անդ տեսարանք ցանկալիք, մանաւանդ որոց իբրև

զլխան միրլեցեն 'ի ներքս լուրեանց քան որտաքոյ դեգերել: Վտակն՝ որ հոսէ անդստ. ինն՝ գնայ ուղիղ ընդ անտառն, գետահետեալ ընդ հովանեաւ սաղարթագեղ ծառոց՝ յորս են Թաթամենիք և ողնիազք, և որ խնձորենիքն ասա կոչին, և ձիթենիք և դարիձենիք: Են ուրեք ուրեք և ծառատունկք արմաւենեաց, որոց բունք մերկք և երկայնք ամբառնան սիւնաձև բարձր քան զհարիւր ոտնաչափ՝ բերելով 'ի գագաթան ողկոյզ արմաւոյ, և գեր 'ի վերոյ բոլորից ծառոց՝ երևին որպէս անտառ զանտառաւ: Են անդ և պատաղինձք ազգի ազգի, որք ծառոց 'ի ծառս ընդոստուցեալ՝ ուրեք դրասանդս յօրինեն ծաղկեայս, և այլուր կանաչագեղ սրահակս: Յոլովագոյնք 'ի ծառոց անտոի բուրեն անուշահոտ, և 'ի հանդերձից իսկ ուրուք զանցս նորա ընդ անտառն է գուշակել, այնպէս բուրմունք ծառոցն 'ի նորին տարրացեալ: Թռչունք ազգի ազգի տարաշխարհիկք յեղա ամարայնոյ անհատանելի տիւն երբմանէ հատեալ զծով լայնածաւալ, գան յանծանօթ նահանգաց Ճա-

րակել զունգս բուսոց՝ որ աստ 'ի կղզւոջս, և երփներանգ փետրոցն պայծառութեամբ փայլէն 'ի սաղարթս ծառոց խըրթնացեալս արևակէզ ։ Են 'ի նոսա և ազգազգ պապկայից, և պադաւիկքն յորջորջեալ աստ կապուտակ աղաւնիք ։ Կապիկք բնակաւորք յանտառի անդ՝ 'ի նսեմ ստուս ծառոց պար առեալ խաղան, 'ի գորշախառն և 'ի դեղնաշորթ 'ի սաևս խուրեանց և յարջնաթոյր 'ի դէմս յոստոց անտի զանազանեալ · կէպք ընդ ձեռս 'ի կախ՝ ընդ օդս ճօճին, կէպք ոստ 'ի յոստոյ ընդոստք վազվազէն կորեամբքն 'ի գրկի, մահացու զինուց ոչ ուրեք երբէք զխաղաղութիւն նոցա վրդովեալ ։ Ընդ ձայնք ևեթ ցնծութեան հարաւայնոց թռչնոց ոմանց լինին լսելի, և ճճուել նոցա և երգ անծանօթ, զորս անտառին կրկնեն արձագանգք ։ Եւ 'ի վճիտ ալիս գետոյն, որ յորձնեռանդն ընդ քարուտս 'ի մէջ մայրեաց ընթանայ, ահաւոր և նսեմաստուեր սաղարթուց նոցա, և երջանիկ հիւրոցն՝ որ յոստս նոցա պարէն, ցոլանան պատկերք ։ Անպարիզաւ անտի 'ի բացեայ ան-

կանխի նա ընդ աստիճանեալ ժայռս գահավէժ, բիւրեղ 'ի հոսանման երևեալ միապաղաղ, և խորատակի յանկանելն փրփրծադէզ. և խռովելոց ջուրցն խոխոջք խառնաձայնք 'ի մէջ անտառին սփռեալ 'ի հողմոց, մերթ խուսեն 'ի բաց, մերթ միահամուռ հնչեն 'ի մօտոյ, և իբր 'ի ղօղանջ ստուար զանգակաց կաթողիկէից 'ի հընչիւն նոցա դռնչեն լսելիք: Օդք 'ի յուզմանէ ջուրցն յարաշարժք, և 'ի տօթագին իսկ ամարայնի, միշտ դալարագեղ յաւէրժ հովասուն գործեն անդանօր զեզերս գետոյն, որպիսի այլուր և 'ի բարձրաբերձ լերինս կղզւոյս հազիւ է գտանել:

Է անդ 'ի բացէ վէմ սարաւանդեալ, այնչափ ինչ հեռի՝ զի ջուրցն խոխոջք չածեն ինչ տաղտուկ 'ի լուր լսելեաց, և այնչափ ինչ մօտ՝ զի է վայելել 'ի տեսիլ նոցին, 'ի հով զովացիկ, և յախորժ մրմունջ: Անդր ամարայնի գնայաք երբեմն 'ի տօթաժամու ճաշել ընդ քըլաւ վիմին 'ի միասին տիկինն Լադուր, Պօղ և Վիրգինիա, Մարգարիտ և ես: Վիրգինիա, զի և զսովորական գործս իւր օգտակար այ-

լոց հնարէր առնել, 'ի ճաշակել միրգս 'ի բացի՝ զկորիզ նոցա կամ զունդ արկանէր 'ի հող, և ասէր· Բուսցին ծառք և պտղաբերեսցեն անցաւորաց և կամ գէթ թռչնոց: Եւ 'ի միում աւուրց անդ 'ի ստորոտ վիմին ճաշակեալ փափէի, զսերմանս նորա եարկ ընդ հողով· և յետ աւուրց ինչ բուսան անդանօր փափենիք յոգունք, և մի յայնցանէ էգ և պտղատու: Ծառս այս 'ի մեկնել Վիրգինեայ չէր ինչ բարձր քան զբարձս ոտից նորա· այլ զի վաղ աճէ, յերկեամ ժամանակի բարձրացեալ էր քսան ոտնաչափ՝ բերելով միրգս 'ի գլխակին հասունս՝ կարգ ըստ կարգէ շրջապատեալ: Դէպ եղև Պօղայ անցանել ընդ այն, և տեսեալ ծառ մեծ 'ի փոքրիկ սերմանէն աճեցեալ՝ որում ականատեսն լեալ էր 'ի սերմանել զայն սիրուհւոյն իւրոյ, լցաւ ուրախութեամբ· այլ հետ ընդ հետ անկաւ 'ի խոր տրտմութիւն, զերկարատև նժդեհութիւն նորին վկայելով ծառոյն: Որ ինչ հանապազօրն տեսանեմք՝ չազդեն մեզ զերագասահ ընթացս կենցաղոյս, ծերանան ընդ մեզ անզգալի· այլ որ ինչ յետ

ամաց դէպ լինի մեզ դարձեալ տեսանել, զգալի ձուներն մեզ զգետօրէն սահել նորին: Զարմացայ Պօղ և խռովեցայ 'ի տեսանել անդ մեծացեալ և պղտորեալ զփափենին, որպէս ուղևոր՝ որ 'ի բազմամեայ նժդեհութենէ դարձ 'ի հայրենիսն արարեալ, ոչ ևս զհամահասակս իւր, այլ զորդիս նոցա երբեմն զիեցիկս՝ գտանիցէ արդ տանուտերս լեալ: Էր զի մտաբերէր հատանել զծառն, կարի յոյժ նովաւ զերկարութիւն նժդեհութեանն Վիրգինեայ զգացեալ. և էր զի համբուրէր զայն իբր արձան յիշատակի բարերարութեանց նորա սիրալիր և անձկալից բանիւք, և ասէր. Ո՛վ որ յանտառի մերում սերեալդ ծառ, ցանկալի դու ինձ և վեհ քան զյաղթական կամարս հռովմէականս. դարք, որ զփառամոլ արքայից եղծանեն հանապազ զդաստակերտս, իցէ՛ զաղքատիկ աղջկանն զյիշատակ բարեաց յանտառս մեր բազմացուցանէին:

Անդ առ փափենեաւն լինէր ինձ անվրէպ հանդիպել պատանւոյն՝ 'ի գալ նորա 'ի կողմանս իմ. 'ի միում աւուրց գտի զնա

անդ ընկղմեալ 'ի տրտմութիւն, և պատմեցից քեզ զոր ինչ խօսեցաք 'ի միասին, եթէ ոչ տաղտուկ քեզ թուեսցի արտաքոյ առաջարկութեանս յամել· բայց ներեսցես զայս աղեաց իմոց իբր արդասիս յետին բարեկամութեան։ Եւ պատմեցից 'ի նոյն ձև խօսակցութեանս մերոյ, զի 'ի միտ առցես զպատանւոյն ընդաբոյս զգօնութիւն, և 'ի հարցուածոց և 'ի պատասխանեաց դիւրաւ զերկաքանչիւրոցս ծանիցես զբանս։

Սկսաւ ասել պատանին· Տրտմութիւն է ինձ յոյժ, զի յորմէհետէ մեկնեցաւ օրիորդն Լաւուր՝ անկան ամք երկու և ամիսք կրկին, և տակաւին ոչ դառնայ, և այս ութ և կէս ամիսք են՝ զի չգրէ ինձ· մոռացեալ արդեօք իցէ զիս, մեծատուն ինքն գոլով, և ես աղքատ։ Նաւարկեցից 'ի Գաղղիա, մուծից անդ 'ի ծառայութիւն արքունի և ճոխացայց· և 'ի հասանել իմում յաւագութիւն, հօրաքրոյր նորա տացէ ինձ զնա 'ի հարսնութիւն։

Ծերն· Ա՜յլ ո՞չ դու ինքն ասէիր ինձ, սիրեցեալդ իմ, գոլ անազգի։

Ասէ․ Ի մօրէ իմմէ լուեալ զայն ասէի․ զի ես չգիտեմ զինչ իսկ իցէ անազգին գող, և չկարեմ հաւատալ լինել թէ որպէս չիցէ իմ ազգ, և այլոց գուցէ։

Ասեմ․ Այդ թերութիւն փակէ առաջի քո 'ի Գաղղիա զճանապարհ հասանելոյ յաւագութիւն․ և ոչ այսչափ միայն, այլ և ոչ 'ի խումբս ազնուականաց տացի քեզ մուտ։

Ասէ․ Մի 'ի պատճառաց մեծութեան Գաղղիոյ զայն ասէիր դու ինձ ստէպ, զի և տրուպ քաղաքացին կարէ անդ ամբառնալ 'ի բարձրագոյն աւագութիւնս, և անուանէիր իսկ ինձ զյոգունս յերևելեաց, որ երբեմն աննշանք՝ յաճախեցին ապա փառս հայրենեաց․ ապա ուրեմն ոչ ճըշմարտութեամբ տայիր ինձ խրախոյս։

Ասեմ․ Չկամիմ լքուցանել զքեզ, որդեակ․ Ճշմարտութեամբ ասէի քեզ զայն, զի այնպէս իսկ էր յառաջագոյն․ այլ արդ կերպարանափոխ եղև ամենայն, և ամենայն ինչ արծաթոյ վաճառի 'ի Գաղղիա, ամենայն ինչ սակաւուց տոհմից է ժառանգութիւն, և կամ բաժին կուսակցա-

թեան: Թագաւոր արեգակն է, զոր աւագանին և կուսակիցք պատեն որպէս ամպք, և ճառագայթք նորա չկարեն ծագել 'ի մեզ: Վաղ ուրեմն, յորժամ տեսչութիւն իւրաց չէր այսպէս բազմակնճիռ, յաջողէին սքանչելիքդ. և հանճար և վաստակք ամենայն ուրեք յայնժամ 'ի վեր երևէին, որպէս երկիր անարօր եկեալ 'ի մշակութիւն՝ յուռթի պտղաբերէ: Այլ սակաւք են 'ի թագաւորաց, որ գիտիցեն ճանաչել և ընտրել զմարդիկ. յոլովագոյնք այնոքիկ են, որք ըստ դրդելոյ աւագանւոյն և կուսակցաց գնան:

Ասէ. Այլ թերևս ոք յաւագանւոյ անտի ձեռնտու լիցի ինձ:

Ասեմ. Առ 'ի գտանել ձեռնտուութիւն յաւագաց, հարկ է արբանեկել փառասիրութեան նոցա կամ հաճոյից. իսկ դու կարիցե՞ս առնել զայդ երկիւղածդ գոլով և անազգի:

Ասէ. Այլ արութիւնս այնպիսի մեծամեծս գործեցից, այնպէս անդրժելի 'ի խոստմունս լեալ, անթերի 'ի պաքտս, հաւատարիմ և հաստատուն 'ի բարեկա-

մութիւն , զի որդեգրութեան շնորհի յումեքէ 'ի նոցանէ եղէց արժանի , որպիսիս 'ի հնապատում վէպս գտանեմ՝ զորս ետուրն ինձ յընթերցումն :

Ասեմ . Առ Հելլէնս և առ Հռովմայեցիս , սիրեցեալդ իմ , ևս և յանկանել պետութեան նոցա՝ աւագանին պատկառ կայր առաքինութեան . իսկ առ մեզ բազումք են 'ի դասուց ժողովրդեան յամենայն ազգի ազգի իրս երևելիք լեալ , և ոչ զոք 'ի նոցանէ գիտեմ որդեգրեալ յաւագանւոյ : Եթէ չէին թագաւորք մեր , առաքինութիւն դատապարտէր 'ի Գաղղիա 'ի մշտնջենաւոր բաժին գռեհկաց . նոքա երբեմն մեծարեն զայն 'ի տեսանելն : Այլ արդ , որպէս տեսցի , պատիւք՝ որ նմա պահէին՝ արծաթոյ ևեթ ընծային :

Ասէ . Եթէ չգտից զոք յաւագանւոյ , խնդրեցից շնորհս գտանել առ կուսակիցս , համախոհ լեալ նոցա . և զոգի նոցին և ըղձակարծիս յանձին բերելով , սիրելի եղէց նց :

Ասեմ . Ուրեմն և դու իբրև զայլս արարցես , հրաժարեալ 'ի խղճէ մտաց , առ 'ի հասանել մեծութեան :

Ասէ․ Քաւ լիցի, ոչ երբէք հրաժարեցայց ՚ի ճշմարտութենէ ։

Ասեմ․ Այդ փոխանակ սիրելի լինելոյ, ատելի թերեւս լիցիս նոցա․ նոցա չէ ինչ փոյթ զճշմարտութենէ, զի առ փառամոլս անխտիր են կարծիք, թէ իշխել միայն կարիցեն այլոց ։

Յայնժամ ՚ի խորոց սրտէ հառաչեալ, ասէ․ Ո՜վ աղէտից, բաւան է ինձ յամենայն կողմանց․ ճակատագրեալ անձին իմում յանարգ վաստակս անցուցանել զկեանս հեռի ՚ի Վիրգինեայ ։

Ասեմ․ Աստուած միայն լիցի քեզ ձեռնտու, և ազգ մարդկան քեզ կուսակից․ երկաքանչիւրոցն պատկառ կաց ։ Տոհմից և կուսակցութեանց և ազգաց և թագաւորաց են իւրաքանչիւր կիրք և մտահաճութիւնք, և դուն ուրեք մարթ իցէ ապասաւորել նոցա առանց ախտիցն արբանեկելոյ․ այլ Աստուած և ազգ մարդկան զառաքինութիւն ևեթ խնդրեն ՚ի մէնջ ։ Եւ ընդէ՞ր իսկ դեր ՚ի վերոյ կամիս լինել այլոց, ոչ տուաւ քեզ ՚ի բնէ ցանկութիւնդ այդ․ զի եթէ ամենեքեան այդմ

ցանկայքն , պարտ էր ամենեցուն յար 'ի պատերազմի կալ ընդ միմեանս : Շատ լիցի քեզ լինել զպարտս կենացդ՝ յորում կացոյց զքեզ Աստուած . գոհացող լեր 'ի դմին , զի ներէ դա քեզ զխիղճ մտաց քոց պահել անարատ , և ոչ հարկ առնէ խնդրել զբարեբաստութիւն զօրէն աւագանւոյ 'ի կարծիս սինլքոր մարդկան , և որպէս զմի 'ի սինլքորաց քծնել առ աւագանին առ 'ի կեալ: Կան յերկրի և 'ի կեանս , ուր չեն ինչ պէտք խաբկանաց և շողոմից առ 'ի կեալ , և ոչ իջանելոյ 'ի նուաստութիւն որպէս զկոգունս յեւրոպացւոց հետամուտս մեծութեան . ուր չէք քեզ խափան առաքինութեան , և աներկեան մարթ է քեզ՝ լինել լաւ , ճշմարիտ , անկեղծ , բարեկիրթ , համբերող , ժուժկալ , զգաստասէր , անյիշաչար , և բարեպաշտ , առանց ծաղր կացուցանելոյ զդեռափթիթ իմաստութիւն քո : Ի քեզ 'ի շնորհելոյ երկնից ազատութիւն , առողջութիւն և երկիւղածութ̄ի , են քեզ և բարեկամք . Թագաւորք , առ որս ցանկաս գանել շնորհս , չեն իբրև զքեզ բարեբաստիկք:

Ասէ · Ալլաւամ , զի չէ առ իս Վիրգինիա · առանց նորա ոչ ինչ ունիմ , իսկ նովաւ զամենայն ինչ · նա ինքն է ինձ ազնուականութիւն և փառք և մեծութիւն ։ Հօրաքոյր նորա կամի տալ զնա առն ականաւորի 'ի հարստութիւն · և զի ուսումն և մատեանք գիտուն և երևելի առնեն ըզմարդ , ցանկամ ուսանել · զի գիտութեամբք օգտակար եղէց հայրենեաց , ոչ վնաս ինչ ումեք հասուցեալ , և ոչ գերի լեալ այլոց , անձամբ անձին արարից նովաւ փառս ։

Ասեմ · Որդեակ , դժուարագիւտ ևս է հանճար քան զազնուականութիւն և զճոխութիւն · և լաւագոյն իսկ քան զայնոսիկ է , զի է անկապտելի , և մեծարոյ ամենեցուն ամենայն ուրեք կացուցանէ ըզմեզ · այլ ծանրագնի է ստանալ զայն ։ Պարտ է հրաժարել յամենայն ազգի ազգի վայելչից , և զզգայունս գոլ 'ի բնէ՝ որով թշուառք 'ի ներքս 'ի մեզ գտանիմք , և արտաքոյ հալածեալք 'ի ժամանակակցաց ։ Ատենակալք 'ի Գաղղիա ոչ նախանձին ընդ փառս զինուորականաց , և ոչ սոքա ընդ

նաւազին. այլ ամենեքեան անդ ցանկան երևել հանճարեղ, և ամենեքեան կալցին զառաջս քո։ Կամիս օգտակար լինել հայրենեաց. որ որայ մի աւելի տացէ պտղաբերել երկրի, օգտակարագոյն է հայրենեաց քան զմատենագիր։

Յայնժամ պատանւոյն փարեալ զփափիճենեաւն, համբուրեաց զայն և ասէ. Ո՜հ, որ զծառս զայս տնկեաց՝ մեծագոյն ինչ և սիրելի ետ բնակչաց անտառիս, քան թէ շնորհէր նոցա մատենադարան։

Ասեմ. Զգեր 'ի վերոյ 'ի մատեանս ըղսուրք աւետարանն, որ խրատէ 'ի հաւասարութիւն 'ի սէր 'ի հեզութիւն և 'ի միաբանութիւն, եւրոպացիք ընդ բազում գարս տարաբին մոլեգնութեան իւրեանց պատրուակ. և հարստահարութիւնք բազումք ցարդ ևս գործին յանուն նորա 'ի վերայ երկրի։ Ո՞ այսուհետև յուսասցի լինել մատենագրութեամբ օգտակար մարդկան. յուշ լիցին քեզ որ ինչ անցք ընդ յոգունս յիմաստասիրաց անցեալ, որ քարոզէին զիմաստութիւն։ Հոմերոս, որ հրաշազան տաղիւք փառաւորեաց զայն,

մուրացիկ կեայր. Սոկրատ, որ զայնպիսի ցանկալի խրատուն եւ աթենացւոց բանիւք և օրինակաւ, դատապարտեցաւ յատենի նոցա 'ի մահադեղ. և զաշակերտ նորին զվեհն Պղատոն, նոյն ինքն Թագաւորն՝ որ պաշտպաններն զնա, մատնեաց 'ի գե-րութիւն. և յառաջ իսկ քան զնոսա կրօ-տոնացիք այրեցին կենդանւոյն զՊիւթա-գոր, որ յանաստուածս իսկ զԹասիրէր: Զի՞նչ ևս ասացից. յոլովագունից յերևե-լեաց անտի արանց՝ երգիծական նկարա-գրութեամբք այլանդակեալ հասին առ մեզ յիշատակք, այսպէս հաճոյ լեալ ա-պաշնորհ մարդկան ածել զնոսա 'ի տեսիլ: Եւ եթէ սակաւուց ոմանց 'ի բազմութե-նէ անտի՝ անեղծ և անաղօտ դատանին հա-սեալ առ մեզ փառք, այնոցիկ իսկ են՝ որք հեռի 'ի ժամանակակցացն իւրեանց կե-ցին. հանգոյն անդրեաց՝ որ 'ի դաշտս Ել-լադայ և Իտալիոյ պեղլին ողջանդամք, խո-րասոյզ ընդ երկրաւ զերծեալք յերեսաց մոլեգնութեան խուժադուժ ազգաց: Տե՛ս ինձ արդ, զի և առ 'ի ստանալ զբազմա-վաանդ փառս հանճարոյ՝ մեծի առաքինու-

թեան պէտք են, և զկեանս իսկ փոխանակելոյ։ Եւ դարձեալ՝ կարծիցես զի վաստակք գրաւորականք շարժեսցեն զսիրտս Ճոխից Գաղղիոյ. ոչ ինչ փոյթ է նոցա զգիտնոց, որոց գիտութիւնք ոչ հասուցանեն զնոսա յաւագութիւն և 'ի յանձանձանս իրաց պետութեան, և ոչ բանան նոցա մուտս յարքունիս։ Ապաքէն 'ի մերումս դարու, ուրում չէ ինչ փոյթ զիմեքէ՝ բաց 'ի գանձուց և 'ի բերկրանաց, չհալածին գիտունք. բայց գիտութիւն և առաքինութիւն չառնեն զոք ականաւոր, զի ամենայն ինչ արծաթով վճարի արդ։ Էր երբեմն զի պատրաստ կային նոցա մրցանակք յեկեղեցական և 'ի քաղաքական աստիճանս. այլ արդ ոչ մնայ ինչ նոցա, բայց մատենագրել։ Սակայն վաստակք նոցա, թէպէտ և ոչ ինչ յաչս աշխարհի մեծարեալք, արժանի են միշտ երկնաւոր իւրեանցն ծագման. զի մատենագրութեան է առաւելապէս պայծառացուցանել զառաքինութիւն լքեալ 'ի մթան, սփոփել զտառապեալս, լուսաւորել զազգս, և առ թագաւորս իսկ խօսել

զՃշմարտութիւն․ և չէ մարթ երկնից վե֊հագոյն քան զայսպիսի փառս շնորհել մարդոյ մահկանացուի։ Իսկ ո՛վ ոք ոչ ափոփեսցի 'ի կրել զրկանս և արհամար֊հութիւն յիշխանաց՝ ածեալ զմտաւ զի վաստակ իւր դարուց 'ի դարս և յազգաց յազգս կացցէ ամբարտակ ընդդէմ մոլո֊րութեան և բռնաւորութեան, և փառք իւր ծագեալ 'ի խաւարէն՝ յորում եկեաց՝ աճցէ սաուերածս յոգունց 'ի Թագաւո֊րաց, որոց արձանք յիշատակի անկցին 'ի մոռացօնս կանգնեալք և դրուատեալք 'ի շողոմից։

Ասէ․ Այլ ես առ 'ի փառաւորել ևեթ զՎիրգիլիա, և առ 'ի սիրելի առնել զնա ամենեցուն, խնդրեմ զփառս։ Դու, որ այդքանեաց իրաց քաջահմուտդ ես, ասէ ասա, իցէ՞ թէ յաջողեսցի մեզ պսակել ընդ միմեանս․ ցանկայի ուսանել, գէթ առ 'ի գուշակելոյ զհանդերձեալն։

Ասեմ․ Ոչ ոք հանդերձելոցն լեալ գի֊տակ՝ թէ յօժարեսցի կեալ․ արկածք մօ֊տալուտք յաճախեսցեն նմա տագնապս 'ի զուր, և հաւաստիք ակնկալեալ աղե֊

ուց դառնացուցեն զաւուրս նորա մինչև ցօրն աշխատաբեր : Չէ իսկ պարտ խոկալ յաղէտս՝ որ շուրջ կան զմեօք . երկինք , որ ետուն մեզ խելամտութիւն՝ առ 'ի նախահոգ խնամս պիտոյից մերոց , յաւելին տալ մեզ զպէտս՝ առ 'ի չափու ունել զխելամտութիւն :

Ասէ . Եթէ արծաթով որպէս ասացերդ՝ մարթէ յԵւրոպա հասանել բարձի և աւագութեան , թո՛ղ ինձ ապա գնալ 'ի Պենկալ և հարստանալ՝ առ 'ի կարող լինելոյ ժառանգել զՎիրգինիա . հա՛պա երթայց :

Ասեմ . Եւ ո՞չ խնայեսցես 'ի մայր նորա և 'ի քոյդ , լքանել զնոսա աստ :

Ասէ . Ո՞չ ապաքէն դու ինքնին խրատ տայիր ինձ գնալ 'ի Հնդիկս :

Ասեմ . Այլ յայնժամ աստ էր Վիրգինիա , իսկ արդ 'ի քեզ կան ապաստան քոյդ և նորին մայր :

Ասէ . Բայց օգնեսցէ նոցա Վիրգինիա 'ի ձեռն իւրոյ Ճոխ ազգականի :

Ասեմ . Ճոխք դուն ուրեք բարերարեն այնոցիկ , որք չենն նոցա 'ի պարծանս .

են իսկ նոցա ազգականք քան զոխկիննն Լազուր եղկելեք, որոց չգտեալ 'ի նոցանէ նպաստ՝ մտանեն 'ի ծառայութիւն առ 'ի շահել զկեանս ։

Ասէ․ Ո՞չ իսկ ապա երկիրդ այդ արժանի բնակութեան․ ո՛հ, ընդէ՞ր Վիրգինիա չդառնայ այսրէն, զի՞նչ օգուտ է նմա ունել ազգական ձոխ․ որպէս գոհ էր նա աստ ընդ տաղաւարօքս, որպէս չքնաղ և գեղանի՝ թաշկինակ կարմիր ածեալ զվարսիւք, և պսակ 'ի ծաղկանց բոլորեալ 'ի գլուխ ։ Արի՛ էկ, քոյր իմ, թո՛ղ զապարանս և զմեծութիւն, դարձի՛ր ընդ քըլաւժայռիցս, ընդ հովանեաւ մայրեաց և քողքնեաց մերոց․ աւա՜ղ, գուցէ տառապիս դու արդ ։

Եւ զայսոսիկ արտասուօք ողբաձայնեալ, յաւել․ Հայր իմ, մի՛ թագուցաներ յինէն․ եթէ զհարսանեացն Վիրգինեայ ընդ իս չկարիցես ասել ինչ, գէթ զայն ինձ ասա՝ թէ տակաւին սիրիցէ՞ նա զիս, շրջապատեալ յաւագանւոյն՝ որք՝ խօսակից լեալ ընդ արքայի և այց առնեն նմա ։

Ասեմ· Լեր աներկեան, որդեակ, զի սիրէ նա զքեզ 'ի բազում իրաց յորդորեալ, և մանաւանդ յառաքինութենէ :

Յայնժամ անկեալ զպարանոցաւ իմով ցնծալից, ասէ· Իցէ՞ն արդարև կանայք Եւրոպայ որպէս 'ի կատակերգութիւնս անդ նկարագրին և 'ի գրեանն՝ զոր ետուր ինձ ընթերցումն :

Ասեմ· Կանայք չեն հաւատարիմք, ուր բռնաւոր են արք· զի ամենայն ուրեք բըռնութիւն դրդէ 'ի նենգ :

Ասէ· Եւ որպէս մարթ իցէ բռնանալ 'ի վերայ կանանց :

Ասեմ· Ամուսնաւորելով զնոսա առանց յօժարութեան ընդ միմեանս, զօրիորդ մատաղ ընդ առն ծերոյ, և զհարսն դիւրազգաց ընդ անզգայ փեսայի :

Ասէ· Եւ ընդէ՞ր իցէ չպատշաճել պատանի ընդ պատանւոյ և սիրելի ընդ սիրուհւոյ :

Ասեմ· Զի 'ի Գաղղիա յոգունց 'ի պատանեաց չէք ձոխութիւն առ 'ի հարսանիս, և ձոխանան 'ի ծերութեան· վասն որոյ չև ծերացեալ՝ ապականեն զդըրացի

կանանին, իսկ 'ի ծերանալն ոչ ևս սիրելիք են ամուսնացն: Պատրեն զայլս յերիտասարդութեան, և պատրին յայլոց 'ի ծերութեան· որպէս զփոխարէնսն ընկալեալ յարդարութենէ՝ որ վարէն զտիեզերս, ուր չարեաց կշռին փոխարէն չարիք: Ըստ այսմ օրինակի յոլովք յեւրոպացւոց 'ի կրկնակի անկարգութեանս յայսմիկ կենցաղավարին, և յաճախէ անկարգութիւնս այս՝ որչափ 'ի սակաւս ամփոփին մեծութիւնք: Պետութիւն պարտէզ իմն է, ուր ոչ բարգաւաճեն թուփք առ ստուար մայրեօք՝ որ խափանեն զարև նոցա· և թէպէտ ծառք սակաւք բարձրուղէշք կարեն գեղազարդել զպարտէզ, այլ պետութիւն ոչ պայծառանայ 'ի ձեռն սակաւուց ոմանց ճոխից՝ առանց բազմութեան և հաւասարութեան հպատակաց:

Ասէ· Եւ զի՞նչ պէտք իցեն ճոխութեան առ 'ի հարսանիս:

Ասեմ· Որպէս զի ամուսնացեալք կեցցեն 'ի լիութեան առանց վաստակելոյ:

Ասէ· Եւ ընդէ՞ր իցէ չվաստակել, ահա ես քաջիկ վաստակեմ:

Ասեմ․ Զի չէ 'ի պատուի յԵւրոպա վաստակ ձեռագործ, վասն որոյ և կոչի ծառայական․ երկրագործութիւն իսկ անգ անարգ քան զամենայն վաստակս է, և ձեռագէտ պատուականագոյն համարի քան զարդիւնարար ։

Ասէ․ Զարմանք են․ անարգի ուրեմն յԵւրոպա արուեստ՝ որ կերակրէն զմարդիկ․ չկարեմ 'ի վերայ կալ բանիցդ ։

Ասեմ․ Չէ իսկ մարթ 'մնելումն ըստ կարգաց բնութեան, խելամուտ լինել անկարգութեանց քաղաքաժողով մարդկան․ զկարգի մարթ է ճշգրտիւ 'ի միտ առնուլ զկերպարանս, այլ զանկարգութեան ոչ ևս ։ Են ինչ օրէնք համեմատութեան գեղոյ և առաքինութեան և բարեբաստութեան, այլ տգեղութեան յոռութեան և թշուառութեան չիք և ոչ մի ։

Ասէ․ Ապա ուրեմն երջանիկք են ճոխք, զի չիք ինչ նոցա խոչընդոտն, և կարեն վայելել 'ի հաճոյս և 'ի սիրելիս իւրեանց ։

Ասեմ․ Այլ յոլովք 'ի նոցանէ յափրանան 'ի հաճոյից, այնու զի առ ձեռն պատրաստ կան նոցա ։ Չիցէ՞ քո զփորձ ա-

ռեալ՝ զի հանգիստ 'ի վաստակելն է ախորժելի, ճաշակ 'ի քաղցնուլն, և ջուր 'ի ծարաւի. այսպէս և 'ի համոյս սիրոյ և փոխադարձ սիրելութեան անձկութեամբք և հրաժարմամբք է վայելել: Արդ մեծութիւնք բառնան 'ի ճոխից զայս ամենայն ախորժակս, կանխեալ քան ըղձեալս նոցին զվայելս: Ի յափրանս անդր՝ որ զհեշտ զայ յղփութեան, յաւել և զհըպարտութիւն՝ որ 'ի մեծութեանց անտի, և զայն ևս զի 'ի գուզնաքէից իսկ զրկումն կարեւորս խոցէ զնոսա, թէպէտև մեծամեծացն վայելք ոչ ևս քաղցրանան նոցա: Բուրմունք բուրաւոր վարդից վայրենի մի ընծայեն ախորժ, այլ միոյ 'ի փշոց նոցա խայթուած ածէ ցաւս երկարատև. վիշտ ինչ 'ի բերկրանս՝ փուշ է 'ի մէջ ծաղկանց վասն մեծատան, իսկ վասն աղքատին ծաղիկ 'ի մէջ փշոց բերկրութիւն 'ի վիշտս. զի ամենայն ազդումն հակառակաւն զօրանայ, զուգակշռէ զամենայն ինչ տնօրինեալ բնութեան: Եւ քաջ իսկ կըշռեալ, որ իցէ քեզ ընտրելի. չյուսամ իմէք և կասկածել յամենայնէ, թէ չկա-

կածել յիմեքէ և յուսալ ամենայնի . այն է բաժին մեծատանց, և այս աղքատաց: Այլ դժոխըմբերք են մարդկան երկոքին ևս այսոքիկ ծայրայեղ անչափութիւնք, 'ի միջասահմանին կալով և յառաքինութեան բարեբաստութիւն:

Ասէ . Եւ զի՞նչ իցէ առաքինութիւն:

Ասեմ. Որ վաստակօք քովք զընտանիսդ կերակրես՝ չեն ինչ պէտք, որդեակ, տալ քեզ զսահման առաքինութեան: Առաքինութիւն է բուռն առնել անձին յօգուտ այլոց, առ 'ի հաճոյ լինել Աստուծոյ:

Ասէ. Առաքինի ուրեմն է Վիրգինիա. այո՝ վասն առաքինութեան յանձն էառ նա մեծանալ առ 'ի բարերարել այլոց. վասն առաքինութեան մեկնեցաւ աստի, և առաքինութիւն դարձուսցէ զնա այսրէն:

Եւ այնպէս զուարթացեալ յայնժամ միտք պատանւոյն 'ի յոյս մօտալուտ դարձի օրիորդին, զի փարատեցան ամենայն անձկութիւնք նորա, և ասէր. Վիրգինիա չգրէ ինչ, զի մերձ իսկ է 'ի հասանել. զի 'ի շնչել աջողակ հողմոյ 'ի սուղ

ժամանակի մարթէ գալ այսր յԵւրոպայ ։ Թուէր մի ըստ միոջէ զնաւս՝ որոց 'ի նաւազ քան զեռամնեայ աւուրս արարեալ էր զայն նաւարկութիւն չորեքհազար և հինգհարիւր փարսախաց, և յաւելյր · Նաւն Վիրգինեայ ոչ ինչ աւելի քան զերկամսեայ աւուրս յամեացէ, վասն նաւակերտիցն արգեաց ճարտարութեան, և նաւաստեացն հմտութեան ։ Խօսէր և զհանդերձանաց ընդունելութեան նորա, զբնակութենէն՝ զոր կամէր կառուցանել նմա, և զզբօսանաց և զնորանոր իրաց՝ զորս երկներն 'ի մտի հայթայթել օր ըստ օրէ հարսին իւրում ։ Եւ 'ի խորհելն 'ի նա՝ զմայլէին միտք իւր, և ասէր ցիս · Ցայնժամ և դու, հայրիկ, գոնէ յայնժամ ոչ ևս վասստակեսցիս՝ բայց ըստ հաճոյից քոց, զի հնդիկք արծաթագինք Վիրգինեայ փոխանակ քո վաստակեսցեն · իսկ դու կացցես ընդ մեզ հանապազ առանց հոգոց 'ի զբօսանս և 'ի վայելս ։ Եւ յափշտակեալ միտք երթայր առ ընտանիս իւր, զեղուլ 'ի նոսա զխնդութիւն՝ որով զմայլեալն էր ։

Բայց սաստիկ յուսոյ արագ յաջորդէ
կասկած սաստիկ, և բուռն կիրք ծայ-
րայեղ 'ի ներհակակիրս զառածանին: Ի
վաղիւ անդր դառնայր առ իս պատանին
ընկճեալ 'ի տրտմութենէ, և ասէր. Վիր-
գինիա չգրէ առ իս. եթէ էր նա մեկնեալ
յԵւրոպայ, կանխէր զեկուցանէր ինձ.
ո՜հ, ոչ վայրապար ընթանային զրոյցք
զնմանէ՝ ումեմն յաւագաց հարսնացեալ.
խարդաւանեցաւ և նա հանգոյն այլոց 'ի
սէր մեծութեանց: Ի գիրս անդ, ուր քա-
ջիկ նկարագրին կանայք, առաքինութիւն
սեթևեթ ևեթ վիպացն է. եթէ առաքի-
նի էր նա, չթողոյր զմայր իւր և զիս.
մինչ ես խորհիմս 'ի նա հանապազ, նա
զիս ոչ ևս յիշէ. ես 'ի վիշտս կամ, նա 'ի
զբօսանս. ո՜հ ո՜հ, այս զիս սրտաբեկէ,
այս ինձ տաղտկալի առնէ զվաստակ, և
ծանր զընկերութիւն. ո՜ տայր ինձ պա-
տերազմ 'ի Հնդիկս, և գնայի անդր 'ի մահ:

Ասեմ. Հարևանցիկ է արիութիւն, որ-
դեակ, որ մղէն զմեզ 'ի մահ, և 'ի մնոտի
գրուատեաց դրդեալ. է է արիութիւն
այլ, չքնաղ և կարևոր, որ տայ մեզ հա-

Նապաստաւորդ արկածից կենցաղոյս ժուժ-կալել՝ անտես 'ի մարդկանէ և անխրա-խոյս · այն իսկ է համբերութիւն : Այս ոչ 'ի կարծեաց մարդկան առնու զօրութիւն, և ոչ 'ի բնութենէ կրից, այլ 'ի կամաց Աստուծոյ · համբերութիւն խրախոյս է առաքինութեան :

Այն · Եղիցի ինձ, չեմ ես տալս առա-քինի · ամենուստ տագնապ է ինձ և յու-սահատութիւն :

Այսմ · Առաքինութիւն յարատեւ, ա-ռաքինութիւն հաստատուն և անյեղլի, ոչ է մարդոյ մահկանացուի բաժին · 'ի խուռն յուղեղաց 'ի մեզ կրից՝ միայն մեր աղմկեալ մթագնին · այլ մարթ է մեզ լու-սաւորել զայն ջահիւք գիտութեանց : Գի-տութիւնք, որդեակ իմ, են նպաստք եր-կնաձիրք, և ճաճանչք իմաստութեանն՝ որ վարէ զաշխարհ, որոց գիտաց մարդ աստուածուսոյց հնարիւք տալ կայունս յերկիր · ոյք զօրէն ճառագայթից արե-գական լուսաւորեն, զուարթացուցա-նեն, և ջեռուցանեն : Գիտութիւն հուր է երկնային, և հանգոյն հրոյ 'ի սպաս

սխտոյից մերոց ածէ զհամապոյս. Նովաւ ամենայն ինչ, և վայրք, և մարդիկ, և դարք, համախմբին զմեօք. Նա զմարդկային կեանս բարեկարգէ, զկիրս խաղաղէ, զախտս նուաճէ, զառաքինութիւն՝ լաւագունացն վեհ օրինակօք՝ յորդորէ, հռչակելով զնոսա, և զպատկերս նոցին՝ մեծարեալս յամենայն դարուց՝ յանդիման առնելով մեզ: Գիտութիւնք հոգիք են երկնաւորք իջեալք 'ի յերկիր առ 'ի սփոփել զաղէտս մարդկան. ազդեցութեամբ նոցա կացին մատենագիրք հզօրք յամենայն դարս, եւ և 'ի դժոխըմբերս մարդկութեան, յաւուրս վայրենութեան և աւարառութեան: Գիտութիւնք քաջալերեցին զԹշուառագոյնս քան զքեզ բազումս, որպէս իմ. զՔսենոփոն զտարագրեալն 'ի հայրենեաց՝ յետ դարձուցանելոյ անդր զբիւր հայրենակիցսն. զՍկիպիոն Ափրիկեցին զպարտաւեալն 'ի քաղաքակցացն զապարատութենէ, զԼուկուլլոս 'ի չարանիւթ հնարից նոցին, և զԿատոնեան յորդորանեացն ապերախտութենէ: Հելլենք, ազգ հանճարեղ, բաղ-

խնդրին զկցն իմաստուհեաց զմասունս ի֊ մացականին 'ի տեսչութիւն ։ Թողցուք ապա 'ի խնամս գիտութեանց զկիրս մեր, նուաճել զայնոսիկ ընդ լծով և սանձահարել. նոցա պարտ է զզօրութիւնս մեր հոգեղէնս վարել, որպէս ժամք առասպելեալք զքառաձի արեգականն լծեալ երամանակեն ։ Ընթերցիր ապա, որդեակ իմ. որ երիցագոյնք քան զմեզ ժամանակակացին մատենագիրք իմաստունք, որպէս ուղեորք յառաջընթացք կարապետեն մեզ ընդ շաւիղս Թշուառութեան, աջ կարկառեն անկելոցս և զքեզ յամենեցունց, և հրահանգեն զմեզ յուղեկցութիւն ։ Որպէս մտերիմ բարեկամ, այնպէս է մատեան ընտիր ։

Յայնժամ գոչեաց պատանին. Ո՛հ, չէին ինձ պէտք ուսանելոյ, ցորչափ առ իս էր Վիրգինիա. ինքն իսկ չէր ինչ ուսեալ քան զիս, այլ յակնարկել նորա յիս և 'ի կոչել եղբայր իւր զիս՝ չէր մարթ տրտմութեան մուտ ունել առ իս ։

Եւ ես ասեմ. Այո ամենեւին, չիք ինչ քաղցր հանգոյն սիրուհւոյ. և Թող զայս,

հոգեղէն իմն զուարթութիւն կնոջ փարատէ զտրտմութիւն առն , և շնորհք որ 'ի նմա՝ մերժեն զախուր ցնորս խորախորհուրդ մտաց ։ Քաղցր հրապոյրք մտերմութեան են 'ի դէմս նորա , և ո՛ր այն խնդութիւն՝ որ 'ի խնդութենէ նորա ոչ յաճախեսցէ , ո՛ր այն ճակատ խոժոռմեալ՝ որ 'ի ժպիտ նորա ոչ պարզեսցի , ո՛ր այն զայրոյթ՝ որ արտասուաց նորա հանդարտեսցէ ։ Վիրգինիա դարձցի ճոխ քան զքեզ իմաստասիրութեամբ , և զարմասցի 'ի տեսանել չև ևս նորոգեալ զպարտէզն , զոր ինքն 'ի նուաղութեան իսկ իւրում յազգականէն , և 'ի պանդխտութեան իւրում հեռի 'ի մօրէ իւրմէ և 'ի քէն , խորհի զարդարել ։

Այսպէս 'ի յոյս դարձի օրիորդին ընդ հուպ՝ քաջալերեալ անդրէն պատանին , զշինական վաստակոց իւրոց դարձեալ բուռն եհար , խնդամտեալ 'ի վիշտս անդ ընդ կէտ նպատակի վաստակոյն՝ որ զկիրս նորա ափոփէր ։

Յամին 1744 'ի քսաներորդի չորրորդի աւուր ամսեան դեկտեմբերի , յարու-

ցեալ Գօզայ ընդ առաւօտն՝ եւ եւս դրօշակ ազխառակ 'ի լեառնն Դիտարան, Նշանակ գալստեան նաւուց: Եւ ընթացեալ 'ի քաղաքն անդր՝ առնուլ զլուր, եկաց անդ մինչեւ 'ի դարձ մերձակացուի նաւահանգստին՝ որ երթեալն էր ըստ սովորութեան յայց եկաւորի նաւուն: Որոյ դարձեալ ընդ երեկս, պատմեաց քաղաքապետին՝ զի երկեալն այն նաւ էր Սենժերան, որ ունէր ըսէրս 140 բիւր, զի նաւապետին անուն էր Ոպէն, զի չորիւք փոքրանաւօք կայր 'ի բացեայ, եւ զի 'ի շնչել աջողակ հողմոյ՝ 'ի վաղիւ անդր ընդ երեկս մարթէր նմա մտանել 'ի նաւահանգիստն Լուդովիկեան. այլ հանդարտութիւն էր յայնժամ հողմոց: Նա ինքն եւ զինամականնին, զոր բերէր նաւն այն 'ի Գաղղիոյ, եւ քաղաքապետին. յորս էր եւ առ Լադաւր տիկին գրեալ 'ի Վերսալինեայ: Ընկալաւ զայն Գօզ, եւ համբուրեալ հրճուանօք եդ 'ի ծոցին, եւ գնացեալ 'ի տուն. եւ 'ի նշմարել 'ի հեռուստ զընտանիսն՝ որ մնային զարմանի նորա, 'ի Վէնն հրաժեշտի, ամբարձ զԹուղթն 'ի վեր՝ ոչ կարելով բարբառել.

յայնժամ փութացան ամենեքին առ Լա-
դուր տիկին, լսել զբանս թղթոյն ։

Եւ գրեր Վիրգինիա առ մայր իւր՝ որ
ինչ 'ի հօրաքեռէն կրեալ տառապանս.
քանզի բռնի զնա կամեցեալ հարսնացու-
ցանել, և 'ի չառնուլ նորա զայն յանձն՝
անժառանգեալ էր զնա, և նոյնհետայն
յուղարկեալ յետս, որով հարկ լեալ նմա
'ի մրրկալից եղանակի հասանել 'ի կղզի
անդր ։ Զի ընդունայն լեալ էին ամենայն
աղերսականս բանք իւր առ 'ի համոզել
զնա՝ յանդիման առնելով նմա զկարօտու-
թիւն մօրն օգնականութեան իւրում, և
զայլազգ կեանսն՝ յոր սովորեալն էր 'ի
մանկութենէ ։ Զի յիմար յաչս նորա
թուէր և զգլխեալ յընթերցմանէ առա-
պելեաց. զի ցնծայր ընդ բախտ իւր տե-
սանելոյ վերստին զընտանիսն և զերկս
արկանելոյ նոցա. և զի առօրեին զանձուկ
ծիրոյն մարթէր նմա լինել, եթէ նաւա-
պետին ներեալ էր նմա իջանել 'ի մակոյկ
վերակացուի նաւահանգստին. այլ նա-
ւապետին չէր թողացուցեալ նմա զայն
վասն հեռաւորութեան իւրեանց 'ի ցա-

մաքէ , և վասն երրադարձ խորոց ծովուն 'ի հանդարտել իսկ հողմոց ։

Ի լուր բանից գրոյն՝ ընտանիքն առ համարակ ձայն բարձին հրճուանօք , տերանց և ծառայից գիրկս արկեալ միմեանց՝ թէ ահա եհաս Վիրգինիա ։ Յայնժամ Լադուր տիկին ասէ ցՊօղ ․ Ո՛րդի , որդեակ իմ , ազդ արա դրացեաց զգալուստ Վիրգինեայ ։ Եւ Դոմինիկ ընդ նմա ոստ բևեկնեայ ջահ 'ի ձեռին՝ յուղի անկեալ գայլին առ իս ։ Էր ժամ իբր տասներորդ երեկոյին , և իմ այն ինչ անցուցեալ զճրրագն և ընկողմանեալ՝ տեսանէի լոյս յանտառին ընդ ծերպս հիւղին ․ և լուայ անդէն զձայն պատանւոյն՝ որ կոչէրն զիս ։ Յարեայ առժամայն ․ և չև իմ զգեցեալ՝ դիմեաց նա առ իս , և անկեալ զպարանոցաւ իմով շնչասպառ և խելայեղեալ , ասէ ․ Արի՛ եկ ընդ իս , զի ահա եհաս Վիրգինիա ․ երթիցուք 'ի նաւահանգիստ անդր , ուր 'ի ծագել այգուն մտցէ նաւն խարիսխ արկանել ։ Վաղվաղակի անկաք յուղի ․ և յանցանել ընդ լեառնն Երկայնանիստ , 'ի Ճանապարհին՝ որ 'ի Բամպլըմուսէ գնայ

'ի նաւահանգիստն , լուայ ոտնաձայն 'ի յետուստ՝ զի գայր հնդիկ ոք ձեպընթաց։ Եւ իբրև եհաս , ասեմ . Ուստի՞ գաս , և ո՞ւր գնաս տագնապաւ ։ Ասէ . Գամ 'ի Բուարըտոր Թաղէ , և գնամ առ քաղաքապետն ազդ առնել՝ զի նաւ մի գաղղիացի խարիսխ արկեալ առ Ամպր կղզեաւ , հրետս արձակէ , խնդրէ օգնութիւն ։ Եւ զայս ասացեալ, անց գնաց ձեպով ։

Յայնժամ ասեմ ցՊօղ . Երթիցուք անդր 'ի Բուարըտոր ընդ առաջ Վիրգինեայ , զի երիւք ևեթ փարսախօք հեռի է աստի ։ Գնացաք ընդ հարաւակողմն կղզւոյս , և էր տօթ հեղձամղձուկ . լուսինն 'ի բարձու 'ի բակ մթին եռապատիկ պարուրեալ, և երկինք աղջամղջին ահարկու . 'ի նշոյլ խիտ առ խիտ փայլատականց՝ երևէին ամպք երկայնաձիգք թանձունք և նսեմք , զի գային սրընթացք 'ի ծովէ ընդ խոնարհ , թէ և ոչ շնչէր հողմն 'ի ցամաքի , և դիզանային 'ի մէջ կոյս կղզւոյս ։ Թուէր մեզ լսել և որոտաձայն 'ի գնալս մերում . այլ ուշ եդեալ ծանեաք , զի էին բոմբիւնք հրետից կրկնեալք յարձագանգաց ։ Ի

ձայնէ անտի, և 'ի տեսիլ մրրկէին ընդ ծով, դղրդմանի հարեալ՝ ոչ ևս տարակուսէի զի 'ի վտանգի կայր նաւն 'ի ծովու մերձ 'ի կործանել: Վայրիկ մի անցեալ խոր կիսաժամու, և ոչ ևս լսելի լինէին ձայնք հրետից. բայց լռութիւնն այն ահաւոր ևս քան զխնդիւնան էր: Ճեպէաք յընթացս անշշունջք, ոչ իշխելով երկաքանչիւր ըզտագնապ սրտից մերոց յայտնել իրերաց. և 'ի մէջ գիշերի 'ի ծովեզր անդր հասաք 'ի Բուսըրըոր ընդ քիրտն Թաթաւեալք: Գայլքն անդր ալեք և խորտակէին ահեղ շառաչմամբ, ծածկելով զխիճ և զժայռ 'ի սպիտակափայլ փրփրուր ակնախտից, և 'ի լուսաբեր կայծս՝ յորոց 'ի նշոյլ նշմարէաք 'ի խաւարի անդ զմակոյկս ձկնորսաց արկեալ 'ի ցամաք քաշ 'ի բաց 'ի ծովէ:

Անտի ոչ յոյժ 'ի բացեայ 'ի մուտս անտառին տեսանէաք զբազումս 'ի բնակչաց կղզւոյն առ հրով. անդր և մեք մատեաք 'ի հանգիստ, մնալով այգուն լինելոյ: Եւ մինչ դեռ բազմեալն էաք անդ, մի ոմն 'ի նոցանէ պատմեաց և ասէ. Տեսի ընդ ե-

րեկս 'ի խորս ծովուն Նաւ մի՝ որ 'ի կղզեն այսր վարէր 'ի յալեաց , այլ գիշերոյ 'ի վերայ հասեալ գողացաւ զայն յաչաց իմոց • և յառաջնումն պահու գիշերոյն լսելի եղեն թնդիւնք հրետից 'ի խնդիր օգնականութեան , այլ առ սաստիկ մրրկին՝ չեղև հնար իջուցանել կուր 'ի ծով , և հասանել յօգնութիւն • և վայրիկ մի յետոյ թուէր ինձ տեսանել լուցեալ զլապտերս Նաւուն , և յայնչափ մերձենալոյ Նորա 'ի ծովեզր՝ կասկածեմ, զի անցանէր Նա ընդ ցամաք և ընդ Ամպր կղզեակ՝ այլ ընդ այլոյ առեալ զայն ընդ Անկեան Դիտակն , առ որով անցանեն Նաւք եկաւորք 'ի Նաւահանգիստն Լուդովիկեան • և եթէ արդարև այս այսպէս իցէ , որպէս կասկածեմս , 'ի մեծի վտանգի կայ Նաւն ։ Բայց այլ ոք 'ի կղզայնոց ասաց ասէր • Բաղում անգամ անցեալ է իմ ընդ կերճն՝ որ անջրպետէ ընդ Ամպր և ընդ ծովեզր , և չափեալ զանդունդս Նորա • ընդարձակ է ծով և խոր 'ի կրճին , և քաջ իսկ յապահովն կարեն անդ Նաւք զկայ առնուլ և խարիսխ արկանել որպէս յանքոյթ Նա-

ւահանգստի․ մարթ է ինձ անդ իբր 'ի ցամաքի հանգչել յանդորր 'ի քուն, գոյիւ չափ զկեանս իմ գրաւականեալ։ Եւ այլ ոք անդուստ պնդէր ընդ հակառակն, և ասէր․ Անհնարին է նաւուս անցանել ընդ կիրճն, ընդ որ հազիւ երթևեկէ ակատ․ տեսի իսկ զնաւն զայն անդր քան զԱմպր խարխափ արկեալ, և մարթ իսկ է նմա ընդ այգն 'ի շնչել հողմոյ խաղալ 'ի խորս և կամ 'ի նաւահանգիստ այսր մտանել։ Այլք այլ իմն վիճեալ պնդէին, որպէս է իսկ սովորութիւն անգործ որերոյ առ գաղթականս եւրոպացւոց։ Իսկ Պօղ և ես լուռ և եթ կայաք անդ մինչև յայգ․ այլ այգուն այնորիկ այնպէս աղօտ էր լոյս, զի երևէր և ոչ ինչ ընդ ծովն միգապատ։ Թուէր մեզ տեսանել ամպ թուխ 'ի բացէ, և ծանեաք զի էր այն Ամպր կղզի փարսախաւ հեռի 'ի ծովափնէ․ և չտեսանէաք այլ ինչ 'ի գիշերակերպ տուընջեանն, բայց զսպառուած ծովեզերն՝ ուր կայաք, և սարաւանդս ոմանս 'ի ներքնակողմն կղզւոյս՝ որ երբէք երբէք գային յերևան 'ի ծոցոյ շրջապատեալ ամպոց։

Ջեօթն ժամու առաւօտուն դափէին թմբուկք ընդ անտառս • և ահա գայր հասանէր քաղաքապետն հեծեալ, և ընդ նմա գունդ հրազինեալ և ամբոխ հնդկաց և կղզայնոց ։ Կարգեաց նա զզօրականն առ ծովեզերբ, և հրաման ետ հուր 'ի միասին 'ի զէնսն առնել • և ընդ ճայթել հրազինուցն՝ երևէր լոյս աղօտ 'ի ծովու, և նոյնհետայն թնդալ հրետի ։ Յորմէ իմացեալ՝ զի ոչ յոյժ հեռի էր նաւն 'ի ցամաքէն, փութացաք ամենեքին յայն կողմն՝ ուստի լսելի եղև թնդիւն • և տեսաք 'ի միգի անդ զողնափայտ և զկայմս նաւու մեծի այնպէս մերձ հասեալ՝ զի և 'ի գոչել ալեացն լսէաք զսուլել նաւապետին առ նաւազն 'ի գործ, և զկարդալ նոցա կեցցէ արքայ, որպէս սովորութիւն է գաղղիացւոց յանհնարին վտանգս և 'ի մեծի խնդութեան, զարքայն իւրեանց յօգնութիւն կոչել կամ զկեանս իւրեանց նուիրել նմա ։

Յուսացեալ այնուհետև նաւապետին օգնականութիւն գտանել 'ի մէնջ, ոչ ևս դադարէր 'ի տալոյ նշան՝ ռումբս ստէպ արձակելով ։ Հրաման ետ յայնժամ քա-

զաքարապետան հրատս խիտ առ խիտ առ ծո-
վեզերբն լուցանել. և առաքեաց շուրջ
առ բնակիչս՝ ածել պարէն, տախտակ,
պարան, և կարաս փայտակերտս: Եկին
հասին անդր նախճաման ամբոխ մեծ 'ի
կողմանց Բուարրլտորի և Գլայքայ և 'ի
Ոսամբար գետոյ, համագերձ գերուովք՝ որք
բարձեալ ընկերէին պաշար և սորխ նաւու:
Անդ ծերունի ոմն 'ի բնակչաց վայրացն,
մատուցեալ առ քաղաքապետն, ասէ.
Հնչիւն աղօտաձայն լսելի լինէր զցայգ 'ի
լերինս, սաղարթք մայրեաց առանց հող-
մոյ տատանէին յանտառս. հաւք ծո-
վայինք դիմէին 'ի ցամաք. այս ամենայն
գուժեն, տէր, մրրիկ մեծ: Եւ քաղա-
քապետն ասէ. Իցէ իսկ որպէս ասեսդ,
բարեկամ. այլ մեք կազմ և պատրաստ
կամք, զնոյն և նաւորդք աներկբայապէս:
Եւ արդարև ամենայն ինչ մօտալուտ
մրրկի էր գուժկան. ամպք զկուտակօք
երկնից մթինք 'ի ծոցի 'ի մռայլ ահարկու,
և յեզերսն պղնձաշորթք. ծաղրիկք և
հողամայք և երամք ազգի ազգի հաւուց
ծովայնոյ ընդ խաւարչտին օդս կարկա-

չելով, Թռուցեալ շուրջանակի յամենայն կողմանց 'ի կղզի այսր դիմէին ապաստանել: Եւ զինն ժամու առաւօտուն հնչէին 'ի ծովէ ձայնք ահագինք որպէս հեղեղաց խառն ընդ որոտընդոստ ամպրոպս հոսելոց 'ի լերանց բարձանց. յայնժամ գոչեցին ամենեքեան՝ թէ ահա մրրիկ: Եւ մրրիկ ահեղ փարատեաց իսկոյն զմէգն՝ որ զԱմպր համոզերձ կրծիւն պարածածկէր, և նաւն բազմութեամբ նաւորդաց եկն յերևան. կայմք և Թևք առագաստից տախտապարեալ, և գրօշակն խոնարհեալ. քառեակ մակոյկք յառաջակողմն կուռէ, և միւսով յետևոյ պարուանդեալ: Եւ կայր նա ընդ Ամպր և ընդ ցամաք խարիսխ արկեալ յայսկոյս ժայռից՝ որ զկղզեաւս կան շրջապատ, և մտեալ անդր ընդ խրամատ՝ ընդ որ ուրուք 'ի նաւաց յառաջ քան զնա չէր երբեք անցեալ: Առաջ նորա կայր դէպ ուղիղ ընդդէմ ալեաց՝ որ 'ի խորոց ծովուն դիմէին անդր, և 'ի խուժել նոցին 'ի կիրճ անդր՝ ամբառնայր վեր 'ի վեր, և ողնափայտն ողջոյն ընդ օդս երևէր. իսկ խելք նաւուն յափս

անդր յայնժամ ընկղմեալ վայր 'ի վայր՝ ծնօտիւքն չափ կորնչէր յաչաց իմր 'ի սպառ խորասուզեալ։

Այսպէս հողմոյն և ալեաց յերկիր զնա մղելով, ոչ դառնալ յետս կարէր ուստի նկեալն էր, և ոչ խզեալ զպարանն՝ յա-ւաղուստ անդր խրել, ուստի զնա խորք և խութք անջրպետէին։ Որք 'ի ծովեզր այսր դայլին խորտակել ալիք, անդր ևս մինչև 'ի խորշս ներքինս մրմռելով դիմեալ՝ ար-կանէին զխիճս 'ի բաց ցլիսուն տանաչափ, և յընկրկելն անդրէն՝ թողուին ցամաք զլպտակ ծովուն ցմեծ հեռաստան, թա-ւալեալ զքարինս 'ի միասին 'ի կերկերա-ձայն մռնչիւն ահեղ։ Լեռնանայր ծովն հողմուռոյց, և կիրճն ողջոյն՝ որ ընդ Ամպր և ընդ ծովեզր կղզւոյս՝ համակ սպի-տակ 'ի փրփուր, կոհակս ուրեք ուրեք 'ի խոր թխատիպս ածէր 'ի տեսիլ. և հողմ զփրփուրսն, որ 'ի խորշս անդ դիզանային ցվեց տանաչափ, քերեալ զնոքօք՝ առնոյր տանէր ընդ զառ 'ի վեր ափանց ծովուն անդր քան զփարսախ և կէս 'ի բաց. և տեղ սպիտակ 'ի ցայտից նոցին հասա-


J. Bernasconi inc.

նէր հողմավար մինչև 'ի ստորոտս լերանց շուրջանակի, որպէս ձիւնաբերք ամբարձեալ 'ի ծովէ։ Ամենայն ինչ 'ի ծիրս երկնից սպառնայր մրրիկ երկարատև. ծով ընդ երկինս խառնեալ, ամպք ահարկուք անդադար 'ի վեր երևէին, կէսք արագաթռիչք հանգոյն թռչնոց սլացեալ ընդմեջ, այլք զօրէն ժայռից կայկայեալ։ Ոչ ևս երկնից կապուտակ ուրեք մասն ինչ երևէր, 'ի լոյս լրթագոյն և թխատեսիլ երևեալ աղօտ էիցս ընդ երկիր ընդ ծով և ընդ օդս։

Արկածքն, յորմէ խիթայաք, պատահեցին. 'ի սաստկակոծ բաղխմանէ ալեաց՝ առաջակողմանն նաւուն խզեցան պարանք, և միով եւեթ յետակուսէ կալեալ՝ հարաւ ընդ ժայռս հեռի 'ի ցամաքէ իբր վաթսուն գրկաչափ։ Յայնժամ գոյժ բարձաք ամենեքին, և Պօղ 'ի ծով անդր դիմէր. այլ բուռն հարեալ իմ զնմանէ, ասեմ. Կամիցիս, որդեակ, գնալ 'ի կորուստ։ Իսկ ինքն գոչէր. Թո՛ղ երթայց օգնել նմա կամ մեռանել։ Եւ զի խելայեղէր առ յուսահատութեան, Դոմինիկ և ես պարան եր-

կայն պզտուայ նորին խորհեցաք կասկել, և կալեալ զծայրէն՝ թողաք նմա գնալ ընդ ալիս. և երթայր նա մերթ 'ի լող, և մերթ ընդ ժայռս, քաջալերեալ երբեք երբեք մատչել 'ի նաւ անդր: Քանզի ծով 'ի սաստիկ մրրկի անդ էր զի նահանջեալ՝ թողուր զնաւն գրեթէ 'ի ցամաքի, մինչև մարթել հետևակել շուրջ զնովաւ. և էր զի անդրէն զայրագին եւ դարձ արարեալ՝ ծածկէր զայն լեռնաձև ալեօք, և զառաջակողմն նորին յօդս ամբառնայր. և ըղհէք պատանին քաշ 'ի բաց յետս 'ի ծովեզր անդր ընկենոյր կիսահեղձոյց, արիւնաթաթաւ ոտիւք և լանջիւք կոշկոճելովք: Այլ այն ինչ ոգի առեալ, դիմէր նա անդրէն արիագոյնս 'ի նաւ անդր՝ որ սկսանէրն փեռեկել յահագին ալեկոծմանէն: Ցայնժամ նաւորդացն յուսահատեալ 'ի կենաց՝ ընկեցին զանձինս 'ի ծով, որ 'ի կայմս, որ 'ի տախտակս, որ 'ի կարասի, և որ 'ի տակառս բուռն հարեալ:

Անդ էր տեսանել աղէտս արժանի անսպառ մորմոքանաց. օրիորդ մատաղ 'ի խելս նաւին բազկատարած առ աստուա-

լըն իւր՝ որ ոգւով չափ ճգնէրն հասանել նմա յօգնականութիւն. զի յարիութենէ անտի նորա ծանեաւ զնա Վիրգինիա ։ Ի տեսիլ սիրելի օրիորդին, որ յահագին վտանգի անդ կայր, վիշտ և յուսահատութիւն զսիրտս մեր կեղեքէին. իսկ ինքն վեհ և անվեհեր դիմօք նշանացի առնէր մեզ ձեռամբ, իբր ողջունելով 'ի հրաժեշտ անդարձ ։ Նաւորդաց առ հասարակ խուժեալ 'ի ծով, մի և եթ 'ի նոցանէ կայր դեռ ևս 'ի նաւուն մերկ և յաղթ՝ որպէս միւս այլ Հերակլէս. որոյ մատուցեալ պատկառանօք առ օրիորդն, և խոնարհեալ առ ոտս նորա, տեսանէաք զի հնարէր 'ի բաց առնուլ 'ի նմանէ զհանդերձսն. այլ նորա մերժեալ սաստիւ զայրն, շըրջէր զաչս իւր 'ի բաց ։ Իսկ որք 'ի գնին արկածիցն կային ; զաղաղակ բարձին. Ապրեցո զդա, մի թողուր ։ Եւ ահա լեռնաձև կոհակ ահագին դիմեալ ընդ Ամպր և ընդ ծովեզր, գայր մռմռեալ 'ի նաւանգր. և լրթագոյն 'ի կողս, փրփրադէզ 'ի դագաթն, սպառնայր կլանել զնա ։ Յորմէ զահի հարեալ առնն, ընկէց զինքն 'ի

ծովլ. իսկ Վիրգինիա 'ի տեսիլ անհրաժեշտ մահուն՝ աջովն զհանդերձսն ամփոփեալ, ահեակ զսրտիւն, և զաչս ամբիծս 'ի վեր ամբարձեալ, թուէր մի 'ի զուարթնոց, 'ի թռիչս ահա ընդ երկինս պատրաստեալ։

Օր աղխողորմ. աւաղ, կորեաւ ամենայն ինչ անդնդասույզ։ Խուժան ալեացն յետս ընդ կրունկն արկ յերկիր զկէսս յայնցանէ՝ որ առ գութ օրիորդին 'ի ծովեալ անդր ընդ առաջ նորա մատուցեալ էին, և զնաւաղն ինքնին՝ որ կամէրն փըրկել զնա 'ի լող։ Որոյ մազապուր անկեալ 'ի յերկիր, եդ ծունր յաւաղի անդ, և ասէ. Դու կեցուցեր զիս, Տէր. այլ ես մտադիւր տայի զկեանս իմ ընդ ամբիծ օրիորդին, որ զիւրն ընդ պարկեշտութեան փոխանակեաց։ Յայնժամ ձգեցաք ընդ Դոմինիկեայ յալեաց անտի 'ի բաց զՊօղ անզգայեալ, և արիւն ընդ քիթ և ընդ բերան և ընդ ականջս նորա գայր։ Քաղաքապետին զնա 'ի խնամս վիրաբուժից յանձնեալ, իսկ մեք խնդիր ընդ ծովեզերս առնէաք գիւական օրիորդին, ա-

լեաց Թերևս զնա անդր արկանելով. այլ 'ի շրջել յանկարծ հողմոյն՝ որպէս պատահէ 'ի մրրկի, տրտմեալ կայաք՝ ոչ կարելով և ոչ զսպաս Թաղման մատուցանել հիքին : Եւ մեկնեցաք անտի արհաւրօք, 'ի կորնչել այնչափ մարդկանն 'ի Նաւաբեկելոյ՝ ամենեցուն ընդ միոյն կորուստ աղեկիզեալ, և բազմաց զաստուածախնամ տեսչուԹենէն երկմտեալ 'ի տեսիլ եղերական մահու առաքինասէր օրիորդին. զի են են արկածք ահագինք և աղէտք անպարտակիրք, ուր և իմաստնոց սասանի յոյս :

Բայց Պօղ 'ի մերձակայ ուրեք տան՝ ուր ածեալն էր՝ սկսանէր անձին զգալ, մինչև մարԹել ապա 'ի բնակուԹիւն իւր ածել զնա : Իսկ ես ընդ Դոմինիկեայ դառնայի անդրէն առ 'ի պատրաստել զմայր աղջկանն և զՄարգարիտ 'ի լուր չարագոյժ աղէտիցն : Եւ 'ի հասանել 'ի մուտս հովտին Լատանեայ գետոյ՝ լուեալ 'ի հնդկաց զի բեկորս բազումս Նաւու խորտակելոյ ընկենուին ալիք 'ի ծոց անդր հանդիպակաց, իջաք անդր. և ահա անդէն տեսի զդիակն

Վիրգինեայ խրեալ յաւաղի 'ի նոյն 'ի կերպի՝ յորում տեսեալ էր զնա 'ի յափրշտակել ալեաց • դէմք նորա ոչ ինչ զոգցես այլայլեալ, աչք նորա փակեալ, այլ զուարթութիւն դեռ ևս 'ի ճակատուն բերելով • մանուշակք ևեթ գունատք և մահատիպք խառն ընդ վարդագեղ պատկառանս յայտս նորա երևէին • աջ նորա զհանդերձիւքն, իսկ ահեակն՝ որ 'ի վերայ սրտին՝ կծկեալ կայր և բռնացեալ, և տուփ 'ի նմա փոքրիկ ։ Բացի զձեռնն ուժգին, ձգել 'ի բաց զտուփիկն • և 'ի տեսանել 'ի նմա զկենդանագիր պատանւոյն՝ զոր խոստացեալն էր ունել առ իւր մինչև 'ի մահ, կարկեցայ կացի հիացեալ • և ընդ այն յետին առհաւատչեայ անյեղլի սիրոյ հէք օրիորդին լացի դառնապէս ։ Իսկ Դոմինիկ կոծէր զկուրծս իւր, և 'ի ճիչ աղըտառուչ լնոյր զայերս ։ Ածաք զդիականն 'ի տաղաւար ուրեք ձկնորսաց, և աւանդեցաք Մալապարից ոմանց կանանց՝ որք խնամ կալան լուանալ զայն ։

Մինչդեռ նոքա 'ի տխուր սպասուն կային, ելաք մեք սասանեալ 'ի տուն անդր •



և գտաք անդ զԼադուր տիկին և զՄար-
գարիտ, զի կային յաղօթս՝ մնալով առ-
նուլ զբոյց։ Իբրև ետես զիս տիկինն, գո-
չեաց իսկոյն. Ո՞ւր է Վիրգինիա, ո՞ւր է
դստրիկն իմ սիրելի, ո՞ւր է զաւակն իմ։
Եւ 'ի լռութենէ իմմէ և յարտասուաց գու-
շակեալ զաղէտսն, հեղձամղձուկ և գառ-
նակսկիծ՝ կողկողէր հեկեկանօք։ Ան-
դուստ և Մարգարիտ ողբս առեալ՝ Ո՞ւր
է որդեակն իմ, ոչ ևս երևի, անկաւ նուա-
ղեալ։ Ի վերայ հասաք զգաստացուցանել
զնա, և հաւատարիմ արարի նմա զի կեն-
դանի էր Պօղ, և կայր ընդ խնամովք քա-
ղաքապետին։ Ոչ առ այլ ինչ թուէր յինքն
եկեալ Մարգարտայ, բայց առ 'ի խնամել
զտիկինն Լադուր՝ որ ստէպ նուաղէր, և
կայր անզգայեալ։ Զգիշերն ողջոյն ան-
ցոյց նա այսպիսեօք դառն տառապանօք.
յորոց երկարութենէ խելամուտ լինէի,
զի չիք ցաւ հաւասար մայրենի ցաւոց։
Ապա 'ի զգալ անձին՝ պշուցեալ հայէր
ընդ երկինս տխուր և անթարթ աչօք. և
թէպէտ Մարգարիտ սիրելին իւր և ես
կալեալ զձեռանէ նորա՝ սիրայորդոր ա-

նուամբք ձայնեաք զնա, այլ թուէր նա անզգայ սիրոյ մերոյ՝ զոր ճանաչէրն իսկ, և 'ի հեղձամղձուկ սրտէ նորա հառաչանք ևեթ արձակէին ։

Ի վաղիւ անդր բարձեալ բերին զՊօղ դեսպակաւ, և էր պատանին ուշաբերեալ՝ այլ չկարէր յօդել բարբառ ։ Տեսութիւն նորա ընդ մօրն և ընդ Լադուր տիկնոջ, որ յաւելոյրն ինձ կասկած, եղև նոցա օգտակար քան զամենայն խնամս՝ զոր արարեալ էր իմ ցայն վայր ։ Նշոյլ ինչ մխիթարութեան սկսաւ երևել 'ի դէմս երկոցունցն իսկ տառապելոց մարց․ երկաքանչիւր բազմեալ առ նմա, և գիրկս արկեալ զնովաւ, համբուրէին զնա․ և արտասուք նոցա՝ առ վշտին սաստկութեան արգելեալք ցայն վայր՝ սկսան աղբերանալ, և պատանին զիւրսն խառնէր ընդ նոցայն ։ Եւ 'ի սփոփել բնութեան տառապելոցն երեցունց՝ դառնակսկիծ ցաւոց նոցա յաջորդեաց երկար թմբրութիւն, և անկաւ զնոքօք քուն խորին՝ սակաւ ինչ ընդհատ քան զմահաքուն ։

Այդ եղև ինձ 'ի քաղաքապետէն, զի

դիակն Վիրգինեայ 'ի քաղաք անդր ըստ հրամանի նորա ածեալ՝ անտի յուղարկելոց էր յեկեղեցի անդր 'ի Բամբլըմուս. և փութացեալ իջի 'ի Բոր-Լուի, և գտի անդ ժողովեալ յամենայն կողմանց զքնակիչս 'ի հանդէս յուղարկաւորութեան նորա, որպէս սիրելւոյ քան զամենեսեան 'ի կղզւոջս: Նաւք 'ի նաւահանգստի անդ, 'ի թեւս կայմից խաչաձեւս և 'ի դրօշակս խոնարհեալս, հրետս երբեք երբեք թնդեցուցանէին: Զառաջեաւ յուղարկաւորացն գնային զօրք հրազինեալք՝ զհրազէնս զլխիվայր խոնարհեալ. Թմբուկք 'ի քօղ երկայն պարածածկեալ՝ դափէին 'ի դընդիւն եղերական. և տխրութիւն նկարեալ 'ի դէմս պատերազմիկ որերոյ, որոց յաճախ 'ի մարտի անայլայլակ դիմօք դիմագրաւեալ էր մահու: Օրիորդք ութ սպիտակազգեստք յազնուականագունից կղզւոյս, ոստ արմաւենի 'ի ձեռին, զհասակակցին իւրեանց բարձեալ բերէին ըզդիակն զառաքինւոյ օրիորդին՝ ծածկեալ համասփիւռ 'ի ծաղկանց: Զհետ դայր մատաղերամ մանկտւոյ պար ողբանուագ,

և զհետ նոցա աւագորեար կղզւոյս և ըն-պայագունդ , և ապա քաղաքապետն ինքնին հանդերձ բազմամբոխ ժողովըրդեամբ: Այս ամենայն այսպէս 'ի սպաս առաքինութեան օրիորդին 'ի պետութենէ տնօրինեալ:

Այլ երբեւ եհաս դիակն նորա 'ի սառբոտ լերինս , 'ի տեսիլ հիւղիցդ` յորս կեցեալն էր նա երջանիկ ընդ այնչափ ամս , և որ յայնժամ լնուին անմխիթար տըրտմութեամբ , խռովեցաւ չուն եղերական , լռեցին սաղմոսերգութիւնք և նուագք , և ոչ այլ ինչ լսելի լինէր 'ի հովտին` բայց հառաչանք և հեկեկանք: Հասանէին անդր 'ի մերձաւոր վայրաց երամք դստերաց` հպել 'ի դագաղս նորա Թաշկինակս վարդարանս և պսակս 'ի ծաղկանց , կարդալով զնա երբեւ զմի 'ի սրբուհեաց յօգնութիւն: Մարք խնդրէին 'ի Տեառնէ դստերս այնպիսիս , պատանիք սիրուհիս նմանապէս անյողդողդս , աղքատք բարերարս հանգոյն նմին ողորմածս , և տարուկք տկարս որպէս զնա մարդասէրս: Եւ 'ի հասանել դագաղացն 'ի գերեզման անդր ,

կանանին Հնդիկ՝ եկք 'ի Մատակասգարէ և 'ի Քափրաստանէ 'ի գաւառաց Մոզամպեան աշխարհին՝ զնէին զնովաւ ըստ սովորութեան իւրեանց սակաւիս պտղալից, և կերպասս շուրջանոցի կախէին զծառոց․ իսկ Հնդիկք Պէնկալայ և ծովեզերեայց Մալապարայ ածեալ Թռչունս 'ի վանդակի, Թռուցանէին զցխակամքն յազատութիւն: Այսպէս ընդ մահ սիրեցելոյ մորմոքին ամենեքեան․ և առաքինութեան տառապելոյ այնքան է ազդեցութիւն 'ի սիրտ, զի զամենայն իսկ այլ և այլ կրօնս զգերեզմանաւ իւրով ժողովէ:

Հարկ եղև պահ առ գերեզմանաւն կացուցանել 'ի զգուշութիւն գաւերաց աղքատանեւոյն, որ անդր խնդրէին հոսել զանձինս՝ սպանելով․ Չիք մեզ այսուհետև յուսալ ափոփանս, լաւ իցէ մեզ մեռանել ընդ միակ մերումս բարերարի: Եւ Թաղեցաւ Վիրգինիա առ եկեղեցեաւն 'ի Բամբլըմուս, յարևմտից կուսէ, մերձ 'ի շամբուան, ուր նա՝ 'ի գնալն յեկեղեցի ընդ մօր իւրում և ընդ Մարգարտայ՝ ա-

խորժէր հանգչել, հանդերձ եղբարբն՝ որպէս անուանէրն նա յայնժամ զՊօղ։

Յետ եղերական հանդիսին եւ այսր Պուրտոնէ ոմամբք յիւրոցն, և խոստացաւ Լադուր տիկնոջ և Մարգարտայ օգնել յամենայնի՝ յոր ինչ և կարէր. եցոյց սուղ ինչ բանիւ զայրոյթ ընդդէմ անողորմ հօրաքեռ նորա. և ապա մատուցեալ խօսեցաւ ընդ պատանւոյն՝ որ ինչ 'ի սփոփանս նորին համարէր, և յաւել. Վկայէ ինձ Աստուած, զի ցանկամ զքո և զքոյոց ընտանեացդ բարեկենդանութիւն. այլ պարտ է քեզ գնալ 'ի Գաղղիա, սիրելիդ իմ, և արարից քեզ անդ մտանել 'ի գործ արքունի. և ցորչափ դու անդ կացցես, ես ինքն խնամ կալայց սորա մօր քում որպէս իմումս։ Եւ աջ մատոյց նմա. այլ Պօղ ամփոփեաց զձեռն 'ի նմանէ, և զգլուխ իւր դարձոյց 'ի բաց առ 'ի չտեսանելոյ զնա ։

Իսկ ես կայի միայն առ երկոսին տառապեալ տիկնայսն բարեկամս իմ, օգնել նոցա և պատանւոյն որչափ ձեռնհասն էի ։ Եօթնեակք երեք 'ի վերայ ան֊

ցին, և Պօղ զօրացեալ՝ սկսաւ շրջել. բայց Թուէր ըստ զօրանալ մարմնոյն՝ յաւելուլ ցաւոց սրտին ։ Անզգայեալ իմն էր, նուաղեալ էին աչք նորա, և ոչ ինչ առ հարցուածս առնէր պատասխանի ։ Տիկինն Լաղուր, որ իբր դիակն շրջէր, ասէր ցնա ստէպ. Որդեակ իմ, ցորչափ տեսից զքեզ՝ համարեցայց տեսանել զիմս Վիրգինիա ։ Իսկ նա 'ի լսել զանուն օրիորդին՝ զգողանի հարեալ գնայր 'ի բաց, ոչ անսալով հրաւիրանաց մօրն՝ որ կոչէրն զնա առ սիրելին իւր. և մեկնեալ միայնակ 'ի պարտէզն, բազմէր ընդ քղքենեաւն՝ պշուցեալ յաղբիւր անդր ։ Բժիշկ քաղաքապետին, որ զամենայն ջան 'ի գործ առնէր 'ի խնամս նորա և տիկնայցն երկոցունց, ասաց ցմեզ՝ զի առ 'ի բոյժ բեկանմաղձ տխրութեանն պարտ էր թողուլ նմա առնել որ ինչ և յօժարէրն, և մի ընդդէմ դառնալ կամաց նորա. զի այսուիկ ևեթ մարթէր բժշկել զյամառ լռութիւն նորա ։ Եւ եգի ես 'ի մտի առնել ըստ խրատու բժշկին ։

Ի կազդուրել զօրութեան պատանւոյն,

մեկնեցաւ 'ի տանէ․ և գնայի ես զհետ
նորա՝ առանց կորուսանելոյ զնա յաչաց,
պատուէր տուեալ Դոմինիկեայ՝ առնուլ
պաշար և գալ զհետ։ Յէջս պատանւոյն
'ի լեռնէ աստի՝ յաւելոյր 'ի նմա տակաւ
զօրութիւն, և թուէր զուարթանալ․ և
գնայր նա զէմ եղեալ 'ի Բամբլըմուս։ Ի֊
բրև եհաս մերձ յեկեղեցի անդր 'ի շամ֊
բուտն, մատեաւ 'ի տեղին՝ ուր դեռ ևս
քրքրեալ կայր երկիրն․ և ծունր եդեալ,
զաչս յերկինս ամբարձեալ, եկաց հա֊
րուստ մի ժամ յաղօթս։ Յայնժամ քա֊
ջալերեցայ 'ի յոյս զգաստութեան մտաց
նորա․ զի ապաւինել պատանւոյն յէն
գերաբուն՝ գուշակ լինէր յինքն գալոյ
մտաց նորա․ ծունր եդաք և մեք, և ա֊
ղօթեցաք ընդ նմա։ Եւ ապա յարուցեալ՝
կալաւ զճանապարհ ընդ հիւսիսակողմն,
անտես արարեալ զմեզ․ և զի չգիտէր նա,
ոչ միայն զթաղումն դիականն Վիրգինեայ
անդ՝ այլ և ոչ զի գտեալ էր մեր զայն և
հանեալ 'ի ծովէ, հարցի ցնա զվասն էր
կալոյ նորա անդ յաղօթս․ և պատասխա֊
նեաց՝ զի յաճախէին անդր 'ի միասին։

Եւ յառաջ ընթացեալ մինչև 'ի մուտս անտառին, եհաս մեզ անդ գիշեր • և բըռնադատեցի զնա առնուլ ընդ մեզ կերակուր, և ապա հանգեաք անդ 'ի քուն ընդ միով 'ի ծառոց ։ Ի վաղիւ անդր կարծէի դարձ առնել նմա յետս, զի եկաց իսկ նա վայրիկ մի դիտելով 'ի կողմն դաշտին ընդ Բամբըլմուս զեկեղեցին և զճանապարհան անկախիտս երկուստեք 'ի շամբից հնդիկ եղեգանց • այլ այն ինչ ուսն առեալ կերպ 'ի դարձ, կառեաւ եմուտ յանկարծ յանտառն՝ դէմ եդեալ դարձեալ ընդ հիւսիս ։ Ծանեայ զմիտս նորա, և գուն գործէի շրջել զնա 'ի խորհրդոցն, այլ 'ի զուր • և հասեալ զմիջաւուրբ 'ի Բուտըրլոոր, աճապարեաց նա 'ի ծովեզր՝ ուր կորեան Սէնժէրան ։ Եւ իբրև ետես զկղզին Ամպր, և զկիրճ նորա՝ որ յայնժամ հողմախաղաղ կայր հարթարդակ իբր հայելի, գոչեաց ողբաձայն • Վիրգինիա, իմ Վիրգինիա • և անկաւ նուաղեալ ։ Բարձեալ տարաք զնա 'ի ներքս յանտառն, և հազիւ եղև մեզ ածել զնա 'ի զգաստութիւն • և յինքն եկեալ՝ կամէր դառնալ 'ի ծով֊

եղեն . այլ աղաչեցաք զնա՝ մի՛ զլուրն և զմեր վիշտս նորոգել դառն յիշատակօք , և կալաւ այլ ճանապարհ : Եւ զի՞ երկարեմ, յուլթ աւուրս այց արար նա ամենայն վայրաց՝ յորս 'ի մանկութենէ հետէ լեալ էր ընդ Վիրգինեայ . անց ընդ ուղին՝ ընդ որ երթեալն էին 'ի Սեաւ գետ , խնդրել նորուամն հնգկին գերւոյն . եղև 'ի գետեզր Եռասատին լերին՝ ուր հանգեանն փարատակարեկ , և 'ի կողմն անտառին՝ ուր մոլորեցանն : Եւ վայրք ամենայն՝ որք յուշ ածէին նմա զանձկութիւնս սիրահւոյն , զխաղս , զճաշ և զբարերարութիւնս նոցա , զեան Երկայնանիստ լերին , հեռուն իմ , սահանք ջուրցն անդր մերձակայք , փափինին ձեռապատանի նորա , արօտք ընդ որս սիրէրն արշաւել , կիցք ուղեաց անտառին՝ ուր ախորժէրն նուագել , զարձեալ վերստին խլուցանէին արտասուս յաչաց պատանւոյն . և որ սակս զձայնս ցնծութեան նորա կրկնեալն էին արձագանգք , զողբոց նորա հնչմունան յայնժամ երկբողեին՝ յեղյեղելով Վիրգինիա , ով Վիրգինիա :

Բայց 'ի բացօթեայս և 'ի թափառական կենաց անտի սորեցին աչք նորա, հաստագոյն երեւացին, և առողջութիւն նորա եւս քան զեւս նուազեցաւ: Եւ զի մի աղէտք նորա յաճախեսցեն յիշատակաւ անցելոց բերկրութեանց, և սաստկանայցեն կիրք նորա 'ի միայնութեան, խորհեցայ հեռացուցանել զհէք պատանին 'ի վայրաց՝ որ յուշ առնէին նմա զկորուստն, և ածել ուրեք՝ ուր զբաղէին միտք նորա: Եւ ածի զնա յՈւիլըէմ 'ի բնակաւէտ բլուրս կղզւոյս՝ ուր չէր նորա լեալ, և ուր երկրագործութիւն և վաճառականութիւն յաճախեն շարժումն և փոփոխութիւն: Ամբոխ հիւսանց տաշէին անդ զբունս ծառոց 'ի գերանս, և ողողէին 'ի տախտակս. կառք ընդ արահետս երթեւեկէին. Ճարակէր նախիր բազում եզանց և ձիոց ընդ արօտս. և համասփիւռ ընդ արտորայս էին բնակութիւնք, և 'ի բարձունս անդ բազում ուրեք յաջողեալ ազգի ազգի բուսոց եւրոպականաց մշակութիւն: Հունձք 'ի դաշտս անդ ուրեք ուրեք երևէին, զարեգունի վայրս անտառաց ծածկէր եղակ

թիւն մահաշշուկ 'ի տեսիլ պատկերին առ-
կայծեաց յաչս նորա. ընկալաւ զայն դող-
դոջելով ձեռին, և 'ի շրթունս իւր մա-
տոյց. յայնժամ գեղաւ սիրտ նորա, և
յարիւնառուշտ աչս իւր եկաց արտօսր 'ի
հոսելոյ։ Եւ յաւելլի. Լո՛ւր ինձ, որդեակ
իմ, որ սիրեմս զքեզ, և որ սիրէի զՎիր-
գինեա, և այնպահկագամ զքեզ ընդդէմ յե-
ղակարծ արկածից կենաց յաճախ յար-
դարէի. առ ի՞նչ է քո այդ սուգ անհնա-
րին, զքոյլի՞ն թէ զՎիրգինեայ զդառ-
նակսկիծ անցէաս աշխարհս։ Եթէ զաղէտս
քոյին, արդարև ծանունք են. կորուսեր
զցանկալին յօրինուրդս, որ հանդերձեալն
էր լինել արժանագոյնն 'ի կանայս. նա
զիւրն զամենայն փոխանակեաց 'ի վերայ
քո, նախամեծար զքեզ արար մեծու-
թեան՝ արժանի փոխարէն առաքինու-
թեան իւրում զքեզ միայն համարեալ։
Այլ որովք դու ակն ունէիր վայելել յեր-
ջանկութիւն անխառն 'ի վշտաց, ո՞ գիտէ,
գուցէ նոյն իսկ լինէր քեզ աղբիւր ան-
սպառ աղէտից։ Ի տեսանել քո զնա չքա-
ւոր մերժեալ 'ի ժառանգութենէ, չմնայր

քեզ այլ ինչ հնար՝ բայց վաստակել ընդ նմա. այլ նա, փափկագոյն ևս 'ի դարձին ըստ հարկի դաստիարակութեանն, և արիագոյն 'ի վշտակրութենէն, ընկճէր արդեօք օր ըստ օրէ ընդ ճգամբ՝ վաստակակից ընդ քեզ կամելով լինել։ Իսկ 'ի ծնանել որդւոց, և ևս յաճախէին երկաքանչիւրոցդ վիշտք, զի ոչ դիւրին ինչ էր ձեզ վաստակովք ևեթ ձերովք ծերատածել զմարս ձեր՝ միանգամայն և զնորածին ազգատոհմդ։

Անիցես թէ քաղաքապետն օգնէր ձեզ. այլ զի՞ գիտիցես՝ թէ 'ի տեսչութիւն գաղթականիդ, ուր յաճախ փոփոխին քաղաքապետք, յաջորդեսցեն նմանիք Պուրտոնեայ. գուցէ փոխանակ նորա գայցեն այք ժանտք և չարաբարոյք, և գուցէ չմարթէր հարսին քում՝ առանց սպաս հարկանելոյ նոցա՝ գտանել նպաստ։ Եւ եթէ յանկարծ պատահէր նմա գթել, եղկելի լինէիր. իսկ եթէ անսասան կայր, մնայիր աղքատ, թէ արդեօք և հալածեալ վասն գեղոյ նորա և զգաստութեան, յայնցանէ՝ յորոց յուսայիր օգնականութեան։

որպէս գործ ; և ցանկք վարդենեաց գնային երկուստեք Ճանապարհաց ։ Օդոյ իսկ անդ զովութիւն ձգտեալ զՋիղս՝ օգնէ յառողջութիւն եւրոպացւոց ։ Ի բլրոց անտի՝ որ 'ի մէջ կոյս կղզւոյս շրջապատեալ 'ի ըստուար ծառոց՝ ոչ զծով է տեսանել, ոչ զԲոր-Լուի, ոչ զեկեղեցին՝ որ 'ի Բամբլըմուս, և ոչ այլ ինչ՝ որով 'ի յուշ գայր Վիրգինիա պատանւոյն ․ Լերինք իսկ՝ որ 'ի Բոր-Լուի քաղաքէ երևէին յայլ և այլ առաՋս բաժանեալ՝ 'ի դաշտաց Ուիլեէմայ Թուէին հրուանդան իմն երկայնատարած և ուղղաբերձ, քարաժայռք 'ի նմա խիտ առ խիտ բրգաձև յամպս ծրարեալ ։

Արդ 'ի դաշտս անդր ածի զՊօղ, և ոչ տուեալ նմա հանգիստ՝ զցայգ և զցերեկ յարևու և յանձրևի շրջէր ընդ նմա, մոլորեցուցեալ զնա ընդ անտառս, ընդ անդաստանս և ընդ դաշտորայս՝ առ 'ի զբօսեցուցանել զմիտս նորա աշխատութեամբ մարմնոյն, և շրջել զխորհուրդս նորա անգիտութեամբ վայրացն՝ ուստի ուր գնայաքն ։ Բայց սիրտ տարփածուի գտանէ ամենայն ուրեք զյիշատակս սիրոյ-

նոյն ․ ոչ տիւ և ոչ գիշեր , ոչ խաղաղութիւն անմարդի վայրաց և ոչ շաւինդն բնակախիտ շէնից , և ոչ ժամանակ՝ որ զայնքաննեաց իրաց յիշատակս յափշտակեալ տանի , ոչ կարեն հեռացուցանել զմիտս նորա 'ի սիրելւոյն ․ որպէս աստղն շփեալ ընդ խանդումանդ թէ և շարժեսցի , այն ինչ դադարեալ՝ 'ի բևեռն կոյս առնէ դարձ անդրէն ։ Ի հարցանել իմում 'ի դաշտս անդ թէ յո՞ երթայցեմք , դառնայր 'ի հիւսիս և ասէր ցիս միշտ ․ Ահա լերինք մեր , անդր երթիցուք ։

Իբրև տեսի զի անհնար էր սփոփել զնա , և զի չմնայր այլ ինչ՝ բայց ճակատել դէմ ընդդէմ կրից նորա , բովանդակ իսկ զփանաքիմաց մտացս 'ի կիր արկեալ զհնարս , ասացի ցնա ․ Այո , ահա լերինքն՝ ուր սիրելին քո բնակէր , և ահա պատկեր քոյին՝ զոր դու ինքնին ետուր նմա , և զոր առ սրտին 'ի մեռանելն իւրում ունէր՝ պչեալն իղձս իւր քեզ նուիրեալ ։ Եւ զոյգ ընդ բանիցս մատուցի նմա զկենդանագիրն , զոր առ աղբերբն քղքենեաց տուեալն էր Վիրգինեայ ։ Խնդու-

թիւն մահաշշուկ 'ի տեսիլ պատկերին առկայծեաց յաչս նորա . ընկալաւ զայն դողդոջելով ձեռին , և 'ի շրթունս իւր մատոյց . յայնժամ գելաւ սիրտ նորա , և յարիւնուուշտ աչս իւր եկաց արտօսր 'ի հոսելոյ : Եւ յաւելը . Լո՛ւր ինձ , որդեակ իմ, որ սիրեմս զքեզ, և որ սիրէի զՎիրգինիա , և այնդակազմ զքեզ ընդդէմ յեղակարծ արկածից կենաց յաճախ յարդարէի . առ ի՜նչ է քո այդ սուգ անհնարին , զքոյի՞ն թէ զՎիրգինեայ զցաւնակսկիծ ադէտս աշխարես : Եթէ զաղէտս քոյին , արդարև ծանունք են . կորուսեր զցանկալին յօրիորդս , որ հանդերձեալն էր լինել արժանագոյնն 'ի կանայս . Նա զիւրն զամենայն փոխանակեաց 'ի վերայ քո , նախամեծար զքեզ արար մեծութեան՝ արժանի փոխարէն առաքինութեան իւրում զքեզ միայն համարեալ : Այլ որով դու ակն ունէիրն վայելել յերջանկութիւն անխառն 'ի մշտաց , ո՞ գիտէ , գուցէ նոյն ինքն լինէր քեզ աղբիւր անսպառ աղետից : Ի տեսանել քո զնա չքաւոր մերժեալ 'ի ժառանգութենէ , չմնայր

քեզ այլ ինչ հնար՝ բայց վաստակել ընդ նմա․ այլ նա, փափկագոյն ևս 'ի դարձին ըստ հարկի դաստիարակութեանն, և արիագոյն 'ի վշտակրութեննէն, ընկճէր արդեօք օր ըստ օրէ ընդ ճգամբ՝ վաստակակից ընդ քեզ կամելով լինել։ Իսկ 'ի ծնանել որդւոց, և ևս յաճախելին երկաքանչիւրոցդ վիշտք, զի ոչ դիւրին ինչ էր ձեզ վաստակովք ևեթ ձեռովք ծերաստածել զմարս ձեր՝ միանգամայն և զնորածին ազգատոհմդ։

Ասիցես թէ քաղաքապետն օգնէր ձեզ․ այլ զի՞ գիտիցես՝ թէ 'ի տեսչութիւն գաղթականիդ, ուր յաճախ փոփոխին քաղաքապետք, յաջորդեսցեն նմանիք Պուրտոնեայ․ գուցէ փոխանակ նորա գայցեն այլք ժանտք և չարաբարոյք, և գուցէ չմարթէր հարախին քում՝ առանց սպաս հարկանելոյ նոցա՝ գտանել նպաստ։ Եւ եթէ յանկարծ պատահէր նմա գթել, եղկելի լինէիր․ իսկ եթէ անաստան կայր, մնայիր աղքատ, թէ արդեօք և հալածեալ վասն գեղոյ նորա և զգաստութեան, յայնցանէ՝ յորոց յուսայիրն օգնականութեան։

Անիցես զի և առանց մեծութեան մար֊
թէր քեզ վայելել 'ի բերկրանս խնամելոյ
զսիրելին քո՝ որ առաւել ևս յարէր 'ի քեզ
կարօտութեամբն, մխիթարելոյ զնա հո֊
գովքդ, ուրախ առնելոյ տրտմութեամբդ,
և աճելոյ 'ի ձեզ փոխադարձ սիրելութեան
'ի վշտաց անտի: Այս ամենեքին. սէր և
առաքինութիւն վայելեն 'ի բերկրանս յայ֊
դոսիկ դառինս. բայց Վիրգինիա ոչ ևս
է, և միայն քեզ որ ինչ յետ քո սիրելիք
էին նմա՝ մայր իւր և քոյդ, զորս անմխի֊
թար սգովք իջուցես 'ի գերեզման. բեր֊
կրութիւն քո, որպէս էր իսկ նորայն,
լիցի օգնել նոցա: Բերկրանք առաքինւոյ,
որդեակ իմ, այն իսկ է բարերարել. և
քան զայսպիսի բերկրանս չէք գերագոյն
ինչ և սրբազնագոյն. մարդոյ մահկանա֊
ցուի, որ պանդուխտն է և անցաւոր 'ի
վերայ երկրի, ոչ է վայելել 'ի զբօսանս 'ի
հանգիստ 'ի դրգանս 'ի լիութիւն և 'ի
փառս. տես զի այն ինչ կամեցեալ 'ի մե֊
ծութիւն անդր քայլափոխել, յորպիսի՛
անդունդս գահավիժեցաք: Ապաքէն հա֊
կառակ կացեր դու այնմ, այլ ո՞ իսկ զու֊

զաւորութիւն Վիրգինեայ չհամարէր նմա և քեզ 'ի բարեբաստութիւն • հրաւէրք ճոխ և պատուաւ հօրաքեռ, խորհուրդ իմաստուն քաղաքապետին, խրատ և պատուէր քահանային, սահմանեցին զաղէտս օրիորդին ։ Այսպէս 'ի կորուստ մեր ընթանամք, մղեալք և 'ի խոհականութենէ այնոցիկ՝ որ մեզն հրամայեն • լաւ ևս էր արգեօք չանսալ նոցա, և չվստահել 'ի յուսադրութիւն սխալոտ մարդկան • այլ ո՞վ ոք յայնքան բազմութենէ՝ որք 'ի դաշտավայրս յայսոսիկ կան ապարապեալ, կամ 'ի խնդիր մեծութեանց գնան 'ի Հընդիկս տարադէմ, կամ անդէն իսկ յաշխարհին իւրեանց յԵւրոպա վայելեն յանդորրու 'ի վաստակս այլոց, անկորուստ ժառանգիցէ զայն՝ որ քան զամենայն ինչ սիրելին է նմա, զմեծութիւն, զգանձ, զկին, զորդիս կամ զբարեկամս ։ Նա աւանիկ յոգունք 'ի նոցանէ ընդ աղէտս կորստեան յաւելուն ողբալ և զանխոհեմութիւն իւրեանց • իսկ դու թէ յանձն քո հայիս, չունիցիս մեղադրել ինչ քեզ ։ Հաւատարիմ կայեր 'ի խոստմանդ, 'ի

ծաղկի հաստակիդ զգօնութիւն իմաստնոյ բերեր յանձին՝ ոչ խոտորեալ յազդեցութենէ բնութեան : Օրինաւոր էին իղձք քո, զի էին ամբիծք և պարզք և ոչ 'ի խնդիր անձին ինչ օգտի. և ժառանգէիր 'ի վերայ Վիրգինեայ իրաւունս սուրբս, որոց ոչ հաւասարէին մեծութիւնք աշխարհի: Կորուսեր զնա. այլ ոչ անխոհեմութիւն քոյին, ոչ ագահութիւն, և ոչ սնոտի ճարտարմտութիւն եղեն պատճառք կորստեանդ. այլ Տէր ինքնին՝ թողացուցեալ մարդկեղէն կրից 'ի ներքս անկանել՝ էառ զսիրելին քո, այն՝ որ ետ քեզ զամենայն, և գիտէ զօգուտ քոյին, և որոյ իմաստութիւն չտայ քեզ տեղի ապաշաւանաց և յուսահատութեան՝ որ զհետ գան աղետից 'ի մէնջ նիւթելոց. և մարթ իսկ է քեզ ասել յաղէտս քո. Անպարտ 'ի վերայ իմ հասին չարիքս:

Իսկ զՎիրգինեա՞յ աշխարհիցես զաղէտս, և զո՞ր, զմա՞հ նորին թէ զարդի կեանս: Հատոյց նա զհարկն, ընդ որով ազնուականութիւն և գեղ և ինքնակալութիւնք ինքնին անկեալ դնին. կեանք մարդոյ,

հանդերձ ամենայն ըղձիւքն իւրովք, ամբառնայ իբրև աշտարակ փոքրիկ՝ որոյ կատար մահ է։ Անդստին ՚ի ծնէ դատապարտեալ էր նա ՚ի մահ, և բարեբախտ գոլով՝ լուծեալ ՚ի կենաց նախ քան զմայր իւր և քան զքոյր. և նախ քան զքեզ. զի ոչ կրեաց մահունս նախ քան զյետինն։ Բարի է մարդոյ մեռանել, որդեակ իմ. բազմահոգ տուրնջեանս՝ որ կոչի կեանք, գիշեր ՚ի վերայ հասանէ մահ. և ՚ի քուն մահու հանգչին ՚ի սպառ հիւանդութիւնք ցաւք և արհաւիրք, որ տագնապեն զմեզ անհանգիստ ՚ի կենցաղումս։ Հայեաց յայնոսիկ իսկ՝ որ երջանկագոյնքն համարին, և տեսցես զի ծանրագնի ստացեալ է նոցա զկարծեցեալ երջանկութիւնն, զպատիւ՝ ատենին վշտօք, զճոխութիւն՝ կորըստեամբ առողջութեան, և զբերկրանս սիրելութեան զդժուարինն ՚ի ժառանգութիւն՝ հանապազորդ ձգամբք. և բազում այն է՝ զի յետ նուիրելոյ զկեանս յօգուտ այլոց, գտանին շուրջ պատեալ ՚ի սուտ բարեկամաց և յապաշնորհ ազգականաց։

Բայց Վիրգինիա երջանիկ գոլով մին-

չև 'ի սպառ. երջանիկ մինչ առ մեզն էր՝
բարեմասնութեամբքն 'ի բնէ, երջանիկ
'ի նժդեհութեան՝ առաքինութեանն ձր-
րիւք, և երջանիկ յարհաւիրս իսկ մա-
հուն՝ որում ականատեսն եղաք: Զի թէ-
պէտ 'ի գաղթականն առ հասարակ ակն-
արկէր 'ի սուգ համակեալ, և թէ 'ի քեզ՝
որ անվեհեր արիութեամբ դիմէիր առ նա
յօգնութիւն, տեսանէր քանի՛ սիրելի էր
ամենեցուն: Ամբիծ կենացն յիշատակաւ
խրախուսեալ 'ի յոյս հանդերձելոցն, ըն-
կալաւ նա յայնժամ զյաղթանակն՝ որ
պահի առաքինեաց, զարիութիւն ասեմ
գեր 'ի վերոյ քան զվտանգս, և լուրջ ե-
րեսօք դիմագրաւեաց մահու: Զի այս են
կամքն Աստուծոյ, որդեակ իմ, անցա-
նել առաքինւոյ ընդ արկածս կենցաղոյս.
յայտ իմն այսպէս առնելով զի նմա միայնոյ
է յօգուտ 'ի կիր արկանել զայնս, և հա-
սանել նորօք երջանկութեան և փառաց:
Յորժամ երևելի կամի առնել զնա՝ ածէ
'ի թատր մեծ, և ընդդէմ մահու խրախու-
սէ զնա 'ի կռիւ. յայնժամ արիութիւն
նորա օրինակ այլոց արձանանայ, և զյի-

շատակ աղէտից նորա Թանան արտասուօք յետինք յազգէ յազգ. այս արձան յաւերժական պահեալ նմա յերկրի՝ ուր ամենայն ինչ անցանէ, և ուր յիշատակք յոլովագունից իսկ 'ի Թագաւորաց Թաղին հուպ ընդ հուպ 'ի մոռացօնս յաւիտենից:

Վիրգինիա կենդանի է տակաւին. տե՛ս ինձ, որդեակ, զի ամենայն ինչ փոփոխի յերկրի, այլ կորնչի և ոչ ինչ. չիք արուեստ մարդկեղէն՝ որ զկարի իսկ փոքրիկ մասն նիւթոյ 'ի չիք կարասցէ դարձուցանել. և զիա՞րդ հնար իցէ կորնչել այնմ՝ որ Ճոխացեալն է բանականութեամբ, զգայութեամբ, սիրով, առաքինութեամբ և կրօնիւք, այնմ՝ որոյ անեղծանելի են տարերք: Եթէ երանելի էր առ մեզ Վիրգինիա, երանագոյն ևս իցէ այժմիկ. համագոյք առ հասարակ քարոզեն, որդեակ իմ, զի է Աստուած. չիք հարկ ածել քեզ հաւաստիս առ այս. անզգամութիւն ևեթ առնէ մարդոյ ուրանալ զէն արդարագատ՝ յորմէ երկնչի. զգամք զնա 'ի սրտի, որպէս աչք մեր զարարածս

Նորա տեսանեն ։ Արդ կարծիցես թէ թողցէ Նա անվարձ զՎիրգինիա · կարծիցես զի արարիչն, որ ետ Նմա զայն գեղ՝ յորում զաստուածային զօրութիւն Նորա Նկատէիր, չկարէր ապրեցուցանել զնա յաւեաց · կարծիցես զի որ 'ի բարեբաստութիւն կենաց մարդկան սահմանեաց օրէնս անհաստանելիս, չիցէ կարող այլ իմն ազգ բարեբաստութիւն շնորհել Վիրգինեայ՝ որում դարձեալ չկարիցեն հասու լինել միտք քո ։ Եթէ մարթէր մեզ խորհել մինչ չև յոչէից 'ի գոյ ածեալ, կարէաք առնուլ 'ի միտ զկերպարան գոյութեանս մերոյ · և երբ արդ 'ի խաւարային և անցաւոր կենցաղումս կարիցեմք 'ի միտ առնուլ որ ինչ պատրաստեալն է մեզ յետ մահու ։ Միթէ իբրև զմարդ իցէ Աստուած, կարօտ երկրիս փոքու առ 'ի հանդէս առնել իմաստութեան իւրոյ և բարութեան · չկարիցէ Նա անդր ևս քան զգերեզման տալ մեզ ձգել զկեանս ։ Համատարած ծովուն մէն մի շիթ լի է կենդանեօք առ 'ի պէտս մեր, և չիցէ ինչ վասն մեր յաստեղս՝ որ 'ի վերոյ մեր շըր-

ջին ․ մատ ևեթ առ մեօք բնակիցէ իմաս-
տութիւնն գերաբուն և աստուածեղէն
բարութիւն , իսկ 'ի բիւրաւոր գունդս
ճաճանչադեղս և յանհուն ասպարէզս
լուսոյ՝ որ զնոքօք պատեալ , ուր ոչ մրրիկք
են և ոչ գիշեր երբէք զնոսա մթագնէ ,
չիցէ՞ անդ այլ ինչ՝ բայց վիհ ունայն և չէք-
ուչէք յաւիտենական ։ Եթէ էր մեզ իշ-
խելի , որ չունիմքս ինչ յանձնէ ․ հաստա-
նել սահման ամենակալ զօրութեանն՝
յորմէ ունիմք զամենայն , ասելի էր՝ զի
յեզերս սահմանաց ինքնակալութեան նո-
րա գտանիմք , ուր կեանք ընդ մահու և
անմեղութիւն ընդ հարստահարութեան
մաքառին ։ Ո՞ է ուրեք , ուր առաքինու-
թիւն ընդունի զվարձս իւր ․ Վիրգինիա
երջանիկ է այժմիկ ․ և եթէ յօթևանաց
զուարթնոցն մարթէր նմա բարբառել առ
քեզ , զայս քեզ տայր ողջոյն հրաժարա-
կան ․ Իմս Պօղէ , փորձութիւն են կեանք
մարդոյ ․ պատկառ կացի օրինաց բնու-
թեան սիրոյ և առաքինութեան , ծովէ 'ի
ծով անցի՝ հնազանդեալ ծնողաց իմոց ,
հրաժարեցի 'ի մեծութեանց առ 'ի կալ 'ի

խոստմանս իմում, փոխանակեցի զկեանս ընդ համեստութեան ։ Զընթացս իմ համարեցան երկինք կատարեալ, և զերծուցին զիս 'ի սպառ յաղքատութենէ, 'ի զրպարտութենէ, 'ի վտանգաց, և 'ի տեսանելոյ զաղէտս այլոց, ոչ ևս հասցեն ինձ չարիք ահարկուք մարդկան, և դու աշխարհիս զիս․ ես որպէս նշոյլ լուսոյ պայծառ և անաղօտելի, իսկ դու 'ի գիշեր կենաց անդրէն զիս հրաւիրես ։ Սիրեցեալդ իմ Պօղէ, յուշ լիցին քեզ աւուրքն բարութեան, յորս վաղայարոյց ընդ արեգական՝ զերկնային բերկրանաց առնուաք ընդ քեզ զճաշակ, և ընդ ճառագայթս նորին յանտառս ճեմեալք՝ զմայլէաք, առանց գիտելոյ զպատճառ զմայլմանացս ։ Ամբիծք յիղձս մեր, ըղձանայաք աչս լինել ամենևին՝ 'ի զնին երփներանգ այգուն, հոտոտելիս բոլորովին՝ 'ի վայելչութիւն անուշահոտ ծաղկանցն մերոց, լսելիս համակ՝ 'ի լուր քաղցրաձայն հաւուցն մերոց, և սիրտ բովանդակ՝ առ 'ի զգալ զայն ամենայն բարութիւնս ։ Արդ ահա առ աղբերաւն գեղեցկութեանց, ուսանի հօ-

սեն ամենայն որ ինչ յերկրի են հաճոյք՝ տեսանէ հոգի իմ, ճաշակէ, լսէ և զննէ ձեռամբ՝ որ ինչ հազիւ երբեմն տկար ըզգայարանօքն զգայր ընդ աղօտ ։ Ո՛հ, ո՞ր լեզու բաւական իցէ 'ի նկարագրել զմըշտընջենալոյս այսր արևելից ափունս՝ յորս բնակեմ յարակայ ։ Որ ինչ յաստուածախնամ բարութենէն և յամենակալ նորին զօրութենէ 'ի սփոփանս հեգ արարածոյ ստեղծեալ, որ ինչ 'ի սիրելութենէ անթիւ էից՝ որ 'ի նոյն երանութիւն վայելեն՝ 'ի զմայլմունս նոցա 'ի միասին յօրինեալ ներդաշնակութիւն, ժառանգեմ բովանդակ անխառն 'ի ներհակացն ։ Քաղջալերեա՛ց ապա 'ի հանդէս փորձանացդ, և յաւելցես զերանութիւն քում Վիրգինեայ 'ի սէր անսպառ, և 'ի հարանիս՝ որոյ կացցեն ջահք անշիջանելի ։ Դադարեսցեն յայնժամ ցաւք քո, յայնժամ ցամաքեսցին արտասուքդ ։ Սիրեցեալդ իմ պատանեկիկ, իմս Պօղէ, ամբա՛րձ զմիտս քո յանանցն, զի անցաւոր վշտացդ դիւրաւ կարասցես տանել ։

Աստանօր առ փղձուկ սրտիս չկայ ա-

ռեալ, դադարեցի 'ի խօսելոյ. Իսկ Պօղ պշուցեալ յիս, դուժեաց մեծամծայն. Ոչ եւս, ոչ եւս է նա կենդանի: Եւ ընդ ողբոցն եկաց ընդ երկար նուաղեալ. և ապա ուրեմն ուշաբերեալ, ասէ. Բարի է մահ, երջանիկ՝ Վիրգինիա, մեռայց և ես՝ առ 'ի կեալ ընդ նմա: Այսպէս 'ի բանից մխիթարութեան յաւել նա 'ի յուսահատութիւն, և եղէ ես որպէս ոք՝ զի փրկել ջանայցէ զընկղմեալն 'ի յորձանս ջուրց, և նա չկամիցի շարժել 'ի լող: Զի էր պատանին խորասուզեալ յանդունդս ցաւոց, և աւա՜ղ զի չէր երբէք նորա յառաջագոյն զփորձ առեալ աղետից՝ որ 'ի մանկութենէ պատրաստեն զմեզ 'ի մուտս կենցաղոյս:

Դարձուցի զնա 'ի բնակութիւն իւր, և գտի անդ զմայր նորա և զՄադուր տիկին՝ եւս քան զեւս աղկաղկեալ զերկաքանչիւր, մանաւանդ զՄարգարիտ. զի որ աշխոյժքն են բնաւորեալ, ընդ միշտ թեթեւս անցեալք անձկալի՝ ծանունցն չքաւեն 'ի տոկ, առաւել քան զայլս ընկճեալ: Եւ ասէ ցիս. Բարեկամ սիրելի, թուէր ինձ տեսանել 'ի գիշերի զՎիրգինիա սպի-

տակազգեաց յանտառս և 'ի պարտէզս զուարճալիս , և լսել զբարբառ նորա՝ զի ասէր • Վայելեմ յերանութիւն ցանկալի • և ապա զուարթագէմ մատուցեալ առ Պօղ , յափշտակէր զնա ընդ իւր • իբրև կամէի ունել զորդեակն իմ , լինէր և ինձ վե-րանալ յերկրէ , և անճառ խնդութեամբ գնայի զհետ : Եւ 'ի տալ իմում յայնժամ սիրելւոյ իմում քեռ ողջոյն հրաժարա-կան , տեսանէի զի և նա ինքն ընդ Մա-րիամու և ընդ Դոմինիկեայ գայր զհետ • հրաշալի ես այն , զի և Ղազուր տիկնոջ զնոյն տեսիլ 'ի նմին գիշերի տեսեալ էր յար և նման : Իսկ ես ասեմ • Ոչ ինչ յաշ-խարհի աստ առանց կամացն Աստուծոյ պատահէ , սիրելիդ իմ • և երազք իսկ գուշակեն երբեմն զճշմարտութիւն : Յայն-ժամ պատմեաց ինձ և տիկինն Ղազուր զնոյն անուրջս երևեալ նմա 'ի նմին գիշե-րի • և զի չէր իմ տեսեալ նանրահաւատ ինչ 'ի տիկնայսն , հիացայ ընդ նմանու-թիւն երազոցն , և ոչ երկուանայի ընդ արդիւնս նոցին :

Անրջոց զճշմարտութիւն երբեմն գու-

շակելոյ՝ առ ամենայն ազգս ընդունելի եղեն կարծիք, և ականաւորք 'ի նախնիս հաւատս ընծայեցին այսմիկ, Աղեքսանդր, Կեսար, Սկիպիոնեանք, Կատոն երեցն և կրտսեր, Բրուտոս, այլովքն հանդերձ; արք՝ որ չէին ինչ տկարամիտք: Են և 'ի հին և 'ի նոր կտակարանս օրինակք յոգունք երազոց յարդիւնս գալոյ: Իսկ ես յանձին իսկ փորձոյ ուսեալ գիտեմ, զի երազք ոչ դուն ուրեք խրատ զգուշութեան են մեզ կանխազեկոյց, զոր միտք իմն խնամակալ ազդէ 'ի մեզ. և չէ մարթ հերքել կամ պաշտպանել հաւաստեօք զերս՝ որ գեր 'ի վերոյ են մարդկեղէն մտաց: Սակայն եթէ միտք մարդոյ պատկեր է աստուածայնոյն, զի կարող իսկ է զիմացուածս իւր հաստուցանել լուսեղէն մինչև 'ի ծագս երկրի, ընդէ՞ր ապա և իմաստութեան՝ որ վարէ զտիեզերս՝ չիցէ մարթ զնոյն նմանապէս ներգործել: Բարեկամ զքարեկամ սփոփէ գրով որ ընդ բազում պետութիւնս անցեալ, և ընդ ազգս ստոյս միմեանց յածեալ, դայ բերէ խնդութիւն և յոյս միում ումեք 'ի մարդկանէ. և ըն-

դէր այս խնամակալուին անմեղութեան չիցէ մարթ գալ ծանկալէս յօգնութիւն առաքինւոյն՝ որ 'ի նա ինքն ապաւինի : Զի՞նչ հարկ իցէ նմա զկատարումն կամաց իւրոց 'ի վեր երևեցուցանել, որ ներգործէն հանապազ յարարածս իւր ներքին ազդեցութեամբ : Եւ ընդէ՞ր իցէ երկմտել զերազոց, ուր ոչ ի՞նչ իսկ ընդհատ էն յերազոց կեանք մարդոյ, լի անցաւոր և անոտի ըղձիւք :

Իցէ այս որպէս և է, բայց գալով չափ երազոց տեսիլնայցն տառապելոց՝ վճարէր Պօղ 'ի կենաց յետ երկամենայ աւուրց մեռանելոյ սիրեցելոյն, կարգալով անգադար զանուն նորա • և Մարգարտայ մօր նորա հասանէր վախճան ութ աւուրբք յետոյ քան զմահ որդւոյն, և մեռանէր այնու զուարթութեամբ՝ որ առաքինութեան է պահել, տալով Լազուր տիկնոջ ոգւոյն հրաժարական գողորիկ և աղերս բանիւք 'ի յոյս քաղցր և յաւերժ միւսանգամ ընդ միմեանս տեսութեան, և ասէր • Գեր 'ի վերոյ ամենայն բարեաց է մահ և ցանկալի • զի եթէ պատուհաս

իցեն կեանք, ցանկալի դադարումն նորին. իսկ եթէ փորձութիւն, ցանկալի դարձեալ՝ զի իցէ սուղ: Դոմինիկ և Մարիամ ոչ ևս զօրէին սպասաւորել, և պետութիւնն ինքնին խնամ կալաւ զնոցանէ. այլ ոչ յամեցին և նոքա 'ի կեանս յետ մեռանելոյ տիկնայցն իւրեանց: Ընիկն ևս Հաւատարիմ, ոչ ինչ յետոյ քան զմահ տեառն իւրոյ, պակասէր՝ հաշեալ առ վշտին հէք անասնականն:

Բայց Լազուր տիկին անպատմելի արիութեամբ ժուժկալէր դառն աղետիցն, և զՊօղ և զՄարգարիտ ցյետին շունչ քաջալերէր՝ որպէս թէ զնոցայն ևեթ յանձին բերելով զվիշտս: Յայնժամ ածի զնա 'ի բնակութիւն իմ. և ոչ ևս տեսանելով զնոսա, հանապազ զնոցանէ խօսէր ընդ իս որպէս զսիրելեաց առ մեզ բնակելոց: Այլ ոչ ինչ աւելի քան զամսօրեայ աւուրս եկեաց նա յետ մահու նոցին. և ոչ միայն չմեղադրէր հօրաքեռ իւրում զվիշտս իւր, այլ խնդրէր ևս 'ի Տեառնէ ներել նմա, և ազատել զնա յարհաւրացն՝ յորոց, որպէս լուաքն, տագնապէր նա յետ մեր-

ժելոյ իւրոյ այնու անգթութեամբ զՎերգինիա ։

Քանզի վաղ իսկ ընկալեալ զպատուհաս խստասրտութեան իւրոյ պատուան խորթացեալ 'ի բնութենէ • և ծանեայ 'ի նաւորդաց՝ որք հեա զհետէ հասանէին այսր, զի նեղեալ տաղնապեր յախտէ ախտնդանաց , որով մահ և կեանք էին նմա անբերելի ։ Մերթ խղճէր՝ չարեացապարտ զանձն համարեալ վաղամեռիկ մահու չքնաղ օրիորդին , և որ այնմ զհետ եկեալ մահու մօր նորին • և մերթ խնդամոլէր ընդ մերժել իւր զնոսա , և ասէր • Ի նախատինս տան իմոյ էին յօժարելով 'ի նուաստութիւն ։ Եւ մերթ ևս 'ի տեսանել զամբոխ ելևելեաց 'ի Բարիզ , ասէր զայրագին • Եւ ընդէր իցէ թողուլ աստ զմարդիկդ գործատեաց , երթիցեն 'ի գայթականս Գաղղիոյ 'ի կորուստ ։ Եւ զիմաստս մարդասիրութեան առաքինութեան և կրօնից , ընկալեալս յամենայն ազգաց , համարէր զխուռս քաղաքականութեան հնարեալս յիշխանաց • և ապա յանկարծ 'ի հակառակն անկեալ ծայրայեղ 'ի կարի

իմն երկիւղածութիւն՝ որ արհաւրօք մահու ընդոյրն զնա , դիմէր առ խրատիչս իւր միանձունս ճոխս՝ առատ տրովք հաշտ առնել զԱստուած , իբր այն թէ հաճոյ էին Աստուծոյ որ 'ի տառապելոց խորեալ ինչք ։ Յաճախ 'ի ցնորս մտաց երևէին նմա դաշտք հրակերպեանք և լերինք բոցեղէնք , և 'ի նոսա թափառական ճիւաղք ահագնատեսիլք՝ որ կարդային զնա ճչիւ և աղաղակաւ ․ անկանէր յայնժամ առ ոտս խրատչացն իւրոց , և անձամբ անձին հնարէր ճգունս և ապաշխարանս , յարդարութենէն Աստուծոյ սահմանեալ անողորմից՝ թախիծք մտաց զարհուրելիք ։

Եւ եկեաց նա այսպէս 'ի խղճէ մտացն և յարհաւրաց մահու տագնապեալ զամս բազումս ․ և առիթ իսկ զբաւելոյ նորա յաւաղելի կենաց անտի եղև նոյն այն , որոյ զզգացմունս բնութեան բարձեալն էր 'ի նմանէ ։ Զի տեսանելով պատրաստեալ 'ի ժառանգութիւն իւր զազգականն՝ զորս ատեայր , խնդրէր զմեծ կէս մասն ընչից իւրոց տնօրինել օտարաց ․ այլ ազգականացն պատեհ առեալ զժամս զայ-

բազնելոյ ախտին 'ի նմա, ետուն զնա յարգելանս յիմարաց՝ բարձեալ 'ի նմանէ զանտեսութիւն ընչից. այսպէս մեծութեանցն եղեալ նմա 'ի կորուստ, և որովք ինքն խոստացեալն էր՝ նոքիմբք և ցանկացողացն այնոցիկ սիրտք անզգայեալ: Այս եղև վախճան նորա. այլ 'ի լրումն ալեաց մահուն՝ կացին մնացին միտք նորա զգաստք առ իմանալ, զի 'ի նոցունց իսկ 'ի խրատուչացն իւրոց կողոպտէր և անարգէր:

Եւ Թաղեցաւ Պօղ մերձ 'ի շամբուտն առ Վիրգինեայ, և առ նոքօք մարք նոցա գորովագութք և ծառայք տիրասէրք: Զանփառունակ գերեզմանաւ նոցա ոչ ամբարձան շիրիմք կճեայք, և ոչ առաքինութեանց նոցա դրոշմեցան արձանագիրք. սակայն յիշատակք նոցա 'ի սիրտս բարերարելոցն 'ի նոցանէ կան անջնջելի: Ստուերք նոցա ոչ կարօտին պերճանաց՝ յորոց խուսեցինն 'ի կենդանութեան. այլ եթէ իցէ ինչ նոցա տակաւին յերկրաւորաց աստի ցանկալի, սիրեն ապաքէն դեգերել 'ի հիւղս՝ ուր բնակէ առաքինութիւն վաստակասէր, քաջալերել զաղքա-

տանին սրտաբեկ 'ի Թշուառութենէ, վառ և բորբոք պահել 'ի սիրտ պատանեաց զբոց հայրսանեկան տարփից, զախորժակս բարեաց բնութեան, զսէր վաստակոց և զերկիւղ ձոխութեան:

Ռամիկն, որ լուռ ևեթ կայ առ շիրիմս կանգնեալս 'ի պատիւ Թագաւորաց, եդ անուանս ինչ վայրաց աստանօր՝ որ անմահացուսցեն զյիշատակ կոլատեան Վիրգինեայ: Կիրճդ՝ որ 'ի մէջ ժայռից մերձ յԱմպր կղզի՝ կոչի Սէնծէրան, յանուանէ նաւուն Վիրգինեայ՝ որ բեկաւն անդ: Հրուանդանդ կարկառեալ 'ի ծով, հեռի աստի երիւք փարսախօք, և կէս 'ի կէս ծածկեալ յալեաց, զորով չկարաց շրջան առնուլ նաւն այն յաւուր քան զօր մրրկին և 'ի նաւահանգիստ այսր մտանել, անուանի Թշուառ: Եւ 'ի տպառուած հովտիդ ծոցդ, զոր տեսանես, յորջորջի Ճչիւմ. ուր դիակն Վիրգինեայ գտաւ խրեալ յաւազին, կամելով իմն ալեաց ածել զայն առ իւրսն, և զապաս յետին մատուցանել պարկեշտութեան օրիորդին 'ի տեղւոջ՝ որ անմեղութեամբ նորա պատուեալն էր:

Եւ արդ, որդեակք սիրակցորդք և մարք չարաբաստիկք, զարմ ցանկալի, մայրեքդ՝ որ զձեօք երբեմն հովանացեալք, աղբերք՝ որ ձեզն բղխէին, բլուրք՝ ուր դուքդ 'ի միասին հանգչէիք, լան տակաւին զկորուստ ձեր: Ոչ ոք յետ մահուդ իշխէ մշակել զերկիրդ ամայի, և ոչ զխոնարհ հիւղսդ նորոգել. երամակ այծիցդ վայրենացեալ, եղծեալ ծառաստանք, թռչունք խուսափեալ. բազէից ևեթ, որ բարձրաթռիչ զխորաձորովք ժայռիցս ճախրեն, լսին արդ կռինչք: Իսկ ես վրիպեալ 'ի տեսոյդ ձերմէ, որպէս բարեկամ զիրկ 'ի սիրելեաց, իբր անզաւակեալ հայր որդեկորոյս, որպէս ուղևոր մոլորեալ յերկրի, այսպէս 'ի կղզւոջ աստ կեամ միայնակ: —

Եւ զայս ասացեալ՝ մեկնեցաւ յինէն ծերունին լալեօք, յոգւոց և իմ ընդ աղիողորմ վէպս ծերունւոյն հեղեալ արտասուս:

UC SOUTHERN REGIONAL LIBRARY FACILITY
A 001 000 296 2